

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳ ԲԱԼԱԲԵԿԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՆԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ

**ՍՓՅՈՒՌԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
(ԵՄ, ԱՄՆ, ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ)**

**Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2017**

ՀՏԴ 341.234
ԳՄԴ 67.412.1
Դ 171

***Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի գիտական խորհուրդը***

Գրախոսներ՝

իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ա. Գ. Վաղարշյան**
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Վ. Դ. Ավետիսյան**

Դանիելյան Գ. Բ., Ղազարյան Ն. Հ.

**Դ 171 Սփյուռքի հայ համայնքների իրավական կարգավիճակը
(ԵՄ, ԱՄՆ, ԱՊՀ երկրներ)/ Գ. Բ. Դանիելյան, Ն. Հ. Ղա-
զարյան; ԵՊՀ - Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 150 էջ:**

Սույն հետազոտությունն իրականացվել և հրատարակվել է ՀՀ սփյուռքի նա-
խարարության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրված ֆինանսական միջոց-
ներով:

Հայապահպանության սահմանադրական հիմնադրույթների համատեքստում
սփյուռքի կարգավիճակին նվիրված համալիր հետազոտության անհրաժեշտու-
թյամբ թելադրված սույն գիտագործնական վերլուծությունը վերաբերում է սփյուռ-
քի հայ համայնքների իրավական կարգավիճակի (ԵՄ, ԱՄՆ, ԱՊՀ երկրներ)
տեսական և գործնական հարցադրումների համալիր հետազոտությանը:

Հետազոտության արդյունքները պիտանի կլինեն ոչ միայն սփյուռքի առնչու-
թյամբ քաղաքականություն մշակելու և իրականացնելու տեսանկյունից, այլև զուտ
գիտագործնական հարցադրումներով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 341.234
ԳՄԴ 67.412.1

ISBN 978-5-8084-2254-4

© ԵՊՀ հրատ., 2017
© Դանիելյան Գ. Բ., Ղազարյան Ն. Հ., 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| ՆԱԽԱԲԱՆ | 5 |
| ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՅՆԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ..... | 14 |
| «ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ» ԵԶՐՈՒՅԹԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂԻՆԵՐԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ | 34 |
| «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՓՅՈՒՌՔ» (E-DIASPORA) ԵԶՐՈՒՅԹԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ | 57 |
| ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ | 67 |
| ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ | 72 |
| ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ | 82 |
| ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ | 92 |
| ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԸ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ | 109 |
| ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ..... | 129 |
| SUMMARY..... | 134 |
| PEՅՅՈՄԵ | 137 |
| ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ | 140 |

ՆԱԽԱԲԱՆ

Հայ համայնքների իրավական կարգավիճակին վերաբերող հարցադրումները անմիջականորեն առնչվում են ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության հետ, ընդ որում, սա հասարակական հարաբերությունների այն շրջանակն է, որոնք առավելապես կարգավորվում են ներպետական օրենսդրությամբ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր պետություն իր քաղաքացիների համար սահմանում է միասնական կարգավիճակ, իսկ նրանց ազգային պատկանելությունը միայն հոգևոր-մշակութային ոլորտում է առաջացնում որոշակի իրավական հետևանքներ: Ընդհանրապես ազգային համայնքների կարգավիճակին առնչվող հարցադրումները ձեռք են բերել աննախադեպ արդիականություն, քանի որ տարաբնույթ պատճառներով ներկայումս նկատվում են միգրացիոն աննախադեպ ակտիվ տեղաշարժեր գրեթե բոլոր տարածաշրջաններում: Եթե պատմականորեն այդ երևույթը փոխկապակցված է եղել, հիմնականում պատերազմի և ռազմական բնույթի այլ զարգացումների հետ, ապա մեր օրերում դրանց ավելացել են նաև սոցիալական և տնտեսական գործոնները: Գաղտնիք չէ նաև, որ առանձին երկրների պարագայում միգրացիոն քաղաքականությունը կրում է խիստ ուղղորդված բնույթ, քանի որ օտար երկրներում կայուն ազգային համայնքներ ունենալը որոշ դեպքերում դարձել է քաղաքական տեսանկյունից խիստ շահավետ:

Ներկայումս համայնքների և դրանց կազմակերպական

կառուցվածքների առնչությամբ հարցադրումները ձեռք են բերել աննախադեպ մեծ արդիանակություն, քանզի համայնքային կազմավորումներն ընկալվում են, որպես քաղաքացիական հասարակության կարևորագույն բաղադրիչ, հետևաբար և՛ ժողովրդավարության լծակ ու միջոց: Եթե ազգային ինքնորոշման իրավունքը դեռևս միանշանակ չի ընկալվում ու կիրառվում ազգային պետությունների քաղաքականությունում, ավելին՝ դրսևորվում է ակնհայտ զգուշավորություն, ապա ազգային համայնքների պարագայում իրավիճակն այլ է. այս դեպքում նկատվում է իրավական կարգավորման շրջանակներն հնարավորինս ընդլայնելու և նոր իրավունքներ ու ազատություններ վերապահելու միտում: Այս տեսանկյունից, որպեսզի սփյուռքի հետ հարաբերություններում, ինչպես նաև համայնքների կարգավիճակի հարցերում նախաձեռնությունները կառուցվեն առավել արդյունավետ ու հիմնավորված հենքով, իրավական ասպեկտներով վերլուծությունը դարձել է խիստ առանցքային: Խնդիրն այն է, որ ժամանակակից ազգային համայնքները վաղուց դադարել են սահմանափակվել սոսկ մշակութային ու հոգևոր ոլորտներում իրավունքների ու ազատությունների ամրագրման ու հստակեցման խնդիրներով զբաղվող գործոն լինելուց, վերջիններս միանաշանակ ձեռք են բերում ներքին ու արտաքին քաղաքականության վրա անմիջականորեն ազդելու ունակ ուժի հանձնառություն: Իսկ այդպիսի էական փոփոխությունների պարագայում հանրային իշխանության մարմինները անխուսափելիորեն փորձում են հաշվի նստել նշված ուժերի հետ և ամրագրել որոշ քաղաքական բնույթի նորմեր:

Հիշյալ զարգացումները բնորոշ են նաև Հայաստանին, ուր սահմանադրական բարեփոխումների արդյունքում, մասնավորապես, 2015 թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեով ընդունված և նույն թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած խմբագրությամբ Սահմանադրությամբ ազգային փոքրամասնության ներկայացուցիչների ներգրավվածությունը խորհրդարանում ճանաչվեց, որպես սահմանադրական դրույթի արժեք ունեցող նորմ, ինչն էլ իր արտացոլումն ստացավ հետագայում ընդունված ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում:

Չպետք է անտեսել, որ հիշյալ կազմավորումները նկատելի դերակատարում ունեն և առանձին դեպքերում լրջագույն գործոն են նաև արտաքին քաղաքականության համատեքստում, ինչը, բնականաբար, ունի երկակի ուղղվածություն՝ մի կողմից դա նկատելիորեն բարձրացնում է համայնքների դերը և նշանակությունը, ինչը շահեկան է համայնքի ազգությունը ներկայացնող «մայր պետության» շահերի տեսանկյունից, մյուս դեպքում՝ դա հանգեցնում է նաև խնդրահարույց գործոնի, քանի որ համայնքի իրավունքների կարգավորման և վերահսկման միջոցով ձեռք են բերվում ազգային պետության վրա ազդեցության լծակներ:

Վերջին տասնամյակների ընթացքում տեղի ունեցած ժողովրդագրական զարգացումների համատեքստում սփյուռքը պայմանականորեն բաժանվել է երկու հատվածի՝ «ավանդական սփյուռք» (ցեղասպանության առնչությամբ արտագաղթածների սերունդը) և «ժամանակակից» (Հետխորհրդային շրջանում Հայաստանից արտագաղթածներ

րը)¹: Այս բաժանումը ենթադրում է միանգամայն տարբերակված քաղաքականություն և իրավական կարգավորման չափանիշներ, սակայն դրանք չպետք է հանգեցնեն տարանջատվածության խորացման, այլ նպաստեն նշված երկու հաստատվածների աստիճանական մերձեցմանը:

Ինչ խոսք, Հայաստանի Հանրապետությունը կարող է նախաձեռնել և առանձին հարցերում նախաձեռնում է այս կամ այն երկրում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձանց իրավունքների բարելավմանը միտված քաղաքականություն, սակայն դրանք ամբողջությամբ չեն վերաբերում համայնքի կարգավիճակին, բացի այդ, գրեթե չեն շոշափում ազգությամբ հայ այն անձանց կարգավիճակին վերաբերող հարցերը, որոնք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Հայ համայնքների իրավական կարգավիճակին առնչվող հարցադրումները երբևէ համակողմանի հետազոտության նյութ չեն դարձել, ըստ էության, զուտ կանոնադրական կարգավորումների հարթությամբ առավել հստակություն կա կրոնական կառույցների առնչությամբ, ինչը բացատրվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կառուցակարգային հիմքերի ու գործունեության դավալոր ավանդույթներով:

Համակողմանի վերլուծությունը բերում է այն համոզման, որ սփյուռքի իրավական կարգավիճակին առնչվող հարցադրումների համալիր ուսումնասիրության և ամբող-

¹ Տե՛ս **Աննա Ժամկոչյան**, Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները, - Եր.: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2011, էջ 6:

ջական լուծումներ առաջադրելու տեսանկյունից, թերևս, նպատակահարմար է առանձնացնել, հիմնականում, հետևյալ կողմերը՝

ա) սփյուռքի այս կամ այն չափով կազմավորված համայնքները,

բ) Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության իրավասու մարմինները,

գ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին,

դ) միջազգային կազմակերպությունները,

ե) օտարերկրյա պետությունները:

Ինչ խոսք, այս կամ այն չափով այս բարդ հարաբերություններում որոշակի ազդեցություն կարող են ունենալ նաև հասարակական միավորումները, այդ թվում՝ միջազգային ճանաչում ունեցող, սակայն իրավական հարթությամբ, կարծում ենք, առավել արդյունավետ կարող է լինել հիշյալ կողմերի փոխհարաբերությունների իրավական հիմքերի հստակեցման, ինչպես նաև կատարելագործման առաքելությունը: Իսկ հիշյալ կառույցներին հարկ է նկատի ունենալ համակարգված ու նպատակասլաց ծրագրեր մշակելու, ինչպես նաև իրականացնելու պատասխանատու գործընթացում:

Ինչ վերաբերում է համայնքների կարգավիճակին առնչվող հարցերը գործնական հարթություն տեղափոխելու համակարգային մոտեցումներին, այդ թվում՝ համալիր ծրագրերին, ապա այդպիսիք դեռևս բավարար արդյունավետությամբ չեն առանձնանում, ինչը ոչ միայն բացատրվում է հայեցակարգային - գիտական չափանիշների բացակայությամբ, այլև տարաբնույթ այլ պատճառներով,

որոնց անդրադարձ է արված սույն հետազոտության շրջանակներում:

Այս հետազոտության առնչությամբ ողջունելի է ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությունը՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մասնագետների ներգրավմամբ սփյուռքի կարգավիճակին առնչվող համալիր հետազոտություն իրականացնելու ուղղությամբ: Հանձին ՀՀ սփյուռքի նախարարության՝ մասնագիտական հանձնախումբը նկատում է հանրային իշխանության կողմից հիշյալ ոլորտում հիմնախնդիրները հստակ պատկերացնելու և դրանք հնարավորինս արդյունավետ ու հեռատես քաղաքականության հիմքում դնելու համար կանխատեսելի, իրատեսական հայեցակարգ ունենալու պատրաստակամություն:

Ցանկացած ասպեկտով ազգապահպան խնդիրներին մոտենալիս, ակնհայտ է դառնում, որ առանց սփյուռքի կարգավիճակին առնչվող խնդիրների արդյունավետ լուծման, հնարավոր չէ իրականացնել որևէ արժեքավոր ծրագիր: Ընդ որում, սա այն ոլորտն է, որտեղ պարզապես հնարավոր չէ մշակել միասնական, բոլոր իրավիճակների համար հավասարապես ընդունելի ու կիրառելի սպառիչ չափանիշներ, ուստի հետազոտող խումբը ելակետ է ընդունել այն, որ առաջադրվող մոտեցումներն ու եզրահանգումները հարկ է պայմանականորեն տարանջատել երկու մասի՝ առաջին խմբում ներառված են այնպիսիք, որոնք կարող են ունենալ համընդհանուր իրավական նշանակություն ու արժեք, իսկ երկրորդ խմբում ներառված են բացառապես այն դիրքորոշումները, որոնք կիրառելի են տարա-

Ճաշըջանային որոշ հատվածների առնչությամբ: Միաժամանակ, ելակետ է ընդունվել այն մոտեցումը, ըստ որի՝ աստիճանաբար հարկ է իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կհանգեցնի նշված չափանիշների մի մեծ շրջանակի միասնականացմանը: Խոսքը, հատկապես, վերաբերում է այն չափորոշիչներին, որոնք անմիջական կապ չունեն համայնքների իրավական առկա և հնարավոր իրավական վիճակի հետ: Բացի այդ, մեր մոտեցումն այն է, որ միասնական չափորոշիչների առկայությունը կնպաստի սփյուռքի սերտացմանը, համազգային խնդիրների լուծման գործում ուժերի համախմբմանը և զուտ սուբյեկտիվ ուղղվածության անհարկի տարածայնությունների հաղթահարմանը:

Սփյուռքի կառույցների պատասխանատուների և այլ ներկայացուցիչների հետ հարցախոյզի արդյունքները ևս վկայում են այն մասին, որ կան բազում արժեքներ, որոնք ի զորու են համախմբելու տարբեր քաղաքական, աշխարհատարածքային, անգամ կրոնական հայացքներ ունեցող հայությանը. այդպիսիք են՝ Արցախի միջազգային ճանաչմանը և կարգավիճակին, Հայոց Եղեռնի ճանաչմանը և իրավական հետևանքներին առնչվող խնդիրները և այլն: Մեր կարծիքով, ավանդաբար ձևավորված և հիրավի մեծ արժեք ունեցող այս նպատակներից զատ, ցայսօր համազգային դառնալու մեծ հավակնություն ունեն նաև այնպիսի այժմեական խնդիրներ, ինչպիսիք են Հայաստանի զարգացման հեռանկարների հստակեցումը, հանրային իշխանության մասնակցության գործընթացին սփյուռքի գործուն մասնակցությունն ապահովելը, կարիքավորներին (հատկա-

պես, Արցախյան ազատագրական մարտերում զոհված ազատամարտիկների ընտանիքներին և հաշմանդամ զին-
ծառայողներին), տաղանդավոր հայ մարդկանց համա-
կարգված աջակցություն ցուցաբերելու նպատակով հա-
մազգային հիմնադրամը ձևավորելը և այլն:

Հետազոտության արդյունքները, թերևս, միանշանակ
ցույց են տալիս, որ այս չափազանց բարդ ու պատասխա-
նատու հատվածում միայն գործադիր իշխանության ուժե-
րին ապավինելը ծանրագույն սխալ կլինի, սփյուռքի հզոր
ներուժը պահպանելու և այն խելամտորեն համազգային
շահերին ծառայեցնելու խնդրի լուծմանը հարկ է ներգրավել
հանրության լայն շրջանակներին, հատկապես, Հայաս-
տանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Սույն հետազոտության համար, հիմնականում, հիմք են
ընդունվել ԵՄ, ԱՄՆ և ԱՊՀ երկրների սփյուռքի փաստացի
և իրավական կարգավիճակին առնչվող նյութերը, սակայն
եզրահանգումներն ու առաջարկությունները հավասարա-
պես կիրառելի են նաև այլ տարածաշրջաններում տեղա-
կայված սփյուռքի կտրվածքով: Պարզապես, յուրաքանչյուր
դեպքում հարկ կլինի քաղաքականությունն իրականացնել
որոշակի վերապահումներով, որոնց հանգամանորեն անդ-
րադարձել են հետազոտության համապատասխան հատ-
վածներում:

Համայնքների իրավական կարգավիճակին առնչվող
հարցադրումների հրատապությունը բխում է նաև միգրա-
ցիոն գործընթացների նկատելի աշխուժացմամբ, որոնք
որոշակի իմաստով թելադրում են սփյուռքի հետ իրակա-
նացվող քաղաքականության վերանայման անհրաժեշ-

տություն: Ընդ որում, ասվածը հավասարապես վերաբերում է ազգային համայնքների կարգավիճակին՝ ընդհանրապես, քանզի միգրացիոն լայնածավալ գործընթացներ ներկայումս նկատվում են տարածաշրջանային մի շարք խոշոր հատվածներում: Պատահական չէ, որ ներկայումս այս խնդրի իրավական ասպեկտները համակողմանի հետազոտող իրավագետների շրջանակը կտրուկ ընդլայնվել է:

**ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ
ԻՐԱՑՆԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ**

Սփյուռքի հետ կապերի սահմանադրական հիմքերն սկզբնավորվում են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ, որի 11-րդ հոդվածով ամրագրված էր. «Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»:

1995 թ. հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ սփյուռքի հետ կապերին որևէ անդրադարձ չկար: Մյուս կողմից, չենք կարող անտեսել, որ ի սկզբանե սփյուռքի հետ պետական քաղաքականության հիմնական թիրախը ճանաչվել է ազգապահպան գործունեությունը, սակայն հիշյալ գաղափարն արտացոլվել է առավելապես խղճի, կրոնի ազատության և կրոնական կազմակերպությունների կարգավիճակին նվիրված օրենսդրական ակտերում, ինչը խոսում է այն մասին, որ ազգապահպանությունը անկախության ձեռքբերման վաղ շրջանում դեռևս չի ընկալվել, որպես պետության առաջնահերթ գործառույթ, այլ, հիմնականում ընկալվել է պետության աջակցությունը վայելող արժեք: Ինչևէ, 1991 թ. հունիսի 17-ին «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ

օրենքի նախաբանում ամրագրվեց հետևյալ հիմնադրույթը. «Ղեկավարվելով Հայաստանի անկախության մասին Հռչակագրով, նկատի ունենալով հայ ժողովրդի հոգեւոր զարթոնքը, նրա դարավոր հոգեւոր փորձն ու ավանդույթները, ճանաչելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցի, նրա հոգեւոր կյանքի շինության ու *ազգապահպանման* (ընդգծումը մերն է) կարեւոր պատվար, առաջնորդվելով միջազգային նորմերով սահմանված մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների սկզբունքներով եւ հավատարիմ լինելով քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18 հոդվածի դրույթներին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունում է սույն օրենքը խղճի ազատության եւ կրոնական կազմակերպության մասին»:

Իհարկե, ողջամիտ կլինեք, որ այս գաղափարն իր ամրագրումն ստանար հետագա իրավական ակտերում, սակայն մի տևական ժամանակ, ազգապահպանության առաքելությունը որևէ կերպ չէր արտացոլվում ներպետական օրենսդրությունում: Կարծում ենք դրա պատճառը, թերևս, այն է, որ միանգամայն նոր սոցիալ-քաղաքական ու տնտեսական հիմքերի վրա պետականությունը կառուցելու քաղաքականության իրավական հիմքերը մշակելիս, անխուսափելիորեն ուսումնասիրվում և կյանքի էին կոչվում, հիմնականում, միջազգային իրավական չափանիշները, որոնց համակարգում, հասկանալի պատճառաբանությամբ, ազգապահպան գործառույթն ու դրա իրականացման իրավա-

կան եղանակները չէին կարող տեղ գտնել:

Ակնհայտ էր, որ վերոհիշյալ հարցադրումները կարող էին համարժեք ընկալվել բացառապես պարբերաբար ցեղասպանության ենթարկված, և այդ հիմքով արտագաղթածների աննախադեպ հսկայական զանգված ունեցող հայ ժողովրդի ինքնագիտակցությամբ: Ուստի, արդեն հնարավոր եղավ հետադարձ հայացք ուղղելու զուտ ազգային արժեքների պահպանման ու զարգացման հարցադրումների իրավական հիմքերի վրա, ողջ գործընթացն ուղղվեց ազգապահպան խնդիրների նկատմամբ հնարավորինս համալիր մոտեցումներ ցուցաբերելու գերխնդրի լուծմանը: Բոլոր դեպքերում, գերիշխող դարձավ այն դիրքորոշումը, ըստ որի՝ ազգապահպան առաքելությունը ոչ միայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, այլև պետության առաջնահերթ խնդիրն ու նպատակն է:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ սփյուռքի հետ կապերի առնչությամբ ամրագրված նորմերը սփյուռքին առնչվող հարաբերությունների շրջանակը սահմանափակում էին սոսկ այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանման, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացման խնդիրներով: Մյուս կողմից, նշված խմբագրությամբ Սահմանադրության 8.1. հոդվածով ամրագրվեց հետևյալը. «Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժո-

ղովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ *ազգային ինքնության պահպանման* (ընդգծումը մերն է) գործում»:

Ի դեպ, «ճանաչում է ... բացառիկ առաքելությունը» արտահայտությունը բնավ չի սահմանափակվում պատմական կտրվածքով, այն ակնհայտ ընդգծում է այդ առաքելության շարունակական բնույթը: Սահմանադրությունը սոսկ պատմական փաստ արձանագրող փաստաթուղթ չէ, այն իրավական ակտ է, ուստի կանոնակարգում է գործող հասարակական հարաբերությունները:

Բոլորովին այլ, միանգամայն նորովի բարձրության վրա ամրագրեց վերոհիշյալ արժեքները 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ, որով ոչ միայն առանձին հողված նվիրվեց հայկական սփյուռքի հետ կապերին, այլև էապես ընդլայնվեցին հայկական սփյուռքի հետ քաղաքականության շրջանակները.

«1. Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը:

2. Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական եւ մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական եւ մշակութային կյանքի զարգացմանը» (19-րդ հոդված):

Այսպիսով, առաջին անգամ Սահմանադրությամբ ամրագրվեց այն ելակետային գաղափարը, ըստ որի՝ հայկա-

կան սփյուռքի հետ իրականացվող քաղաքականության առանցքային նպատակը *հայապահպանությունն է*: Հարկ է նկատել, որ հայապահպանության քաղաքականությունն արդեն իսկ այս կամ այն չափով իր արտացոլումն էր գտնում պետության կողմից մշակվող և իրականացվող քաղաքականության մեջ, սակայն Սահմանադրությամբ այն ամրագրելը, թերևս, պարտավորեցնում է իրականացնել առավել համակարգված և նպատակասլաց իրավաստեղծ և իրավակիրառ գործունեություն:

Հավելենք, որ Սահմանադրությամբ հստակ ընդգծվում է, որ սփյուռքի հետ կապերի քաղաքականության հիմքում դրվում է հենց միջազգային իրավունքը, ասել կուզի՝ այս ոլորտում պետությունը չի կարող սահմանափակվել սոսկ ազգային օրենսդրությամբ և միայն այդ հարթությամբ արդյունքներ ակնկալել: Հայկական սփյուռքը փաստացի գտնվում է այլ պետություններում, սփյուռքի ներկայացուցիչները հանդիսանում են այդ պետության քաղաքացիներ և կրում են պարտականություններ հենց այդ պետությունների առջև, ուստի սփյուռքի հետ խելամիտ ու կանխատեսելի կապեր հաստատելու համար հարկ է այդ ոլորտի քաղաքականությունը, նախ, ողջամտորեն կառուցել արդեն իսկ գոյություն ունեցող միջազգային իրավունքի նորմերի հենքով, հընթացս՝ նախաձեռնել համապատասխան երկկողմանի և բազմակողմանի միջազգային պայմանագրերի կնքում:

Սահմանադրության հիմնադրույթների իրացումը հարիր է իրացնել ոչ թե ենթաօրենսդրական ակտերի, այլ բա-

ցառապես օրենքների միջոցով, պատահական չէ, որ Սահմանադրության բազմաթիվ դրույթներով ուղղակի ընդգծվում է այս կամ այն հարաբերությունների կարգավորման համար օրենքներ ընդունելու անհրաժեշտությունը: Գործնականում, սակայն այս ոլորտում իրավաստեղծ գործունեությունն ընթացել է այլ ուղղությամբ: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության հիշյալ 11-րդ հոդվածի առկայության պարագայում միայն 8 տարի անց ընդունվել է ենթաօրենսդրական ակտ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թ. հոկտեմբերի 22-ի «Հայկական սփյուռքի հետ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգում միասնական քաղաքականության իրականացման մասին» թիվ ՆՀ-277-Ն հրամանագիրը: Ընդ որում, այդ հրամանագիրը, լինելով ենթաօրենսդրական ակտ, ի գորու չէր ընդգրկելու սփյուռքի հետ կապերին առնչվող հարաբերությունների ողջ սպեկտրը: Բացի այդ, ինչպես և բխում է նշված հրամանագրից, նշված ենթաօրենսդրական ակտը, հիմնականում, առնչվում է «Հայաստան-սփյուռք գործակցությանն առնչվող հարցերով» գործադիր իշխանության մարմինների փոխհարաբերության եղանակներին, այլ կերպ ասած, այն անմիջականորեն չի վերաբերում Սահմանադրության 11-րդ հոդվածով ամրագրված նորմերի իրացմանը: Այսպես, նշված հրամանագրի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը. «Կարող է ուղղակիորեն աշխատել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների և հյուպատոսական

հիմնարկների հետ Հայաստան-սփյուռք գործակցությանն առնչվող հարցերով, որոնք չեն վերաբերում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությանը, միջպետական հարաբերություններին և միջազգային կազմակերպություններին, իսկ վերջիններիս առկայության դեպքում դրանք իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով»:

Նշված հրամանագիրը կարող է իրավական նախադրյալ հանդիսանալ հետագա օրենսդրական զարգացումների համար, քանի որ բովանդակում է որոշ սաղմնային դրույթներ սփյուռքի հետ հարաբերությունների կտրվածքով. այն կարող է ուրվագծել սփյուռքի հետ կառույցների փոխհարաբերության մի շարք ասպեկտներ: Սփյուռքի հետ կապերին առնչվող հարաբերությունների կարգավորմանը նվիրված իրավական ակտերի ցանկում էական դեր ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության ենթաօրենսդրական ակտերը: Նշված իրավական ակտերից, թերևս, կարելի է առանձնացնել Հայաստանի Հանրապետության կառավարության հետևյալ որոշումները՝ 2017 թվականի հունիսի 15-ի «Սփյուռքի մասնագետների, կառավարիչների և նրանց կազմակերպությունների հետ երկկողմ համագործակցությունը խորացնելու վերաբերյալ 2017-2021 թվականների ծրագրին հավանություն տալու մասին» N 25 արձանագրային որոշումը, 2017 թվականի փետրվարի 2-ի «Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» 2017 թվականի ծրագրին և միջոցառումների ցանկին

հավանություն տալու մասին» N 4 արձանագրային որոշումը, 2016 թվականի ապրիլի 15-ի «Սիրիայի Արաբական Հանրապետության՝ ազգությամբ հայ քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականներ հատկացնելու մասին» N 389-Ն որոշումը, 2016 թվականի փետրվարի 11-ի «Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում» ծրագրի 2016 թվականի ֆինանսավորման չափը հաստատելու մասին» N 123-Ն որոշումը, 2015 թվականի մարտի 10-ի (հավելված) «Սփյուռք» ամսոռային դպրոց» 2015 թվականի ծրագրին հավանություն տալու մասին» N 11 արձանագրային որոշումը, 2010 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայկական սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծման ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 36 արձանագրային որոշումը և այլն:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարի հրամաններին, ապա դրանք կրում են առավել գործնական բնույթ և վերաբերում է տարաբնույթ ոլորտների՝ սփյուռքի հետ կապերի առանձին հատվածներին առնչվող հարաբերությունների իրավական կարգավորումից սկսած՝ մինչև կոնկրետ ծրագրերի հաստատմանը: Այս հրամանների ուսումնասիրությունը ևս բերում է այն համոզման, որ դրանք կարող են կարևոր իրավական

նախադրյալ հանդիսանալ հետագա օրենսդրական կարգավորումների համար, ինչն առավել կանխատեսելի ու արդյունավետ կդարձնի այս ոլորտում գործադիր իշխանության մարմինների գործունեությունը:

Հարկ է նկատել, որ արտասահմանյան երկրներում՝ ընդհանրապես, իսկ մեր կողմից հետազոտության համար ընտրված երկրներում՝ մասնավորապես, սփյուռքի կազմավորումների հետ փոխհարաբերությունները թելադրված են նաև վերջիններիս փաստացի սոցիալական կարգավիճակով կառուցակարգային տեսանկյունից կազմակերպվածության աստիճանով:

Բոլոր դեպքերում, նկատվում է, որ ազգային փոքրամասնություն կազմող համայնքներին առնչվող հարաբերությունների կարգավորման տեսանկյունից նախապատվությունը տրվում է օրենքներին, որոնք ոչ միայն կարգավորում են վերջիններիս կարգավիճակը, այլև անդրադառնում են դրանց բնորոշ կառուցակարգերի սահմանադրաիրավական բնույթին:

Վերը նշվածի համատեքստում բնորոշ է, հատկապես, Ռուսաստանի Դաշնության 1996 թ. հունիսի 17-ին ընդունված «Ազգային-մշակութային ինքնավարության մասին» օրենքը², ինչն ի սկզբանե ուղղված էր ԽՍՀՄ-ի կազմալուծումից հետո այդ երկրում ծագած տարաբնույթ ազգամիջյան տարաձայնություններն ու բախումները կանխելու և իրավական լուծումներ առաջադրելու անհրաժեշտությանը:

² Ст'а Ф3 РФ «О национально-культурной автономии» от 17 июня 1996 г., № 74-ФЗ:

Այդ օրենքի համաձայն ազգային փոքրամասնությունների կողմից կարող էին ձևավորվել հատուկ հասարակական միավորումներ, որոնք կներկայացնեին տվյալ ազգության շահերը՝ հանրային իշխանության հետ ունեցած հարաբերություններում: Ընդ որում, այսպիսի հասարակական միավորումների ձևավորման իրավունք վերապավում է ինչպես համապատասխան պետական կազմավորում ունեցող, այնպես էլ այդպիսիք չունեցող մարդկանց հանրությանը: Համեմատական վերլուծությունը բերում է այն համոզման, որ հիշյալ հասարակական միավորումներն իրենց կարգավիճակով և գործունեության շրջանակներով զիջում են մյուս հասարակական կազմակերպություններին: Մասնավորապես, այս հասարակական միավորումները բացառապես կարող են զբաղվել ազգային փոքրամասնությունների մշակութային ու որոշ հոգևոր շահերի իրացմամբ ու պաշտպանությամբ, ինչպիսիք են, օրինակ՝ կրթական օջախների հիմնումը, լեզվի ոսուցման առանձնահատուկ կառուցակարգերի կազմակերպումը և այլն: Միաժամանակ, նշված հասարակական միավորումների գրանցմանը ներկայացվում են առավել խիստ պահանջներ, ըստ այդմ էլ՝ պահաջվում է գրանցման համար ներկայացվող փաստաթղթերի անհամեմատ լայն շրջանակ:

Ազգային-մշակութային ինքնավարությունների հենքով ձևավորված հասարակական միավորումներն օգտվում են ֆինանսավորման կայուն միջոցներից, որոնք հատկացվում են ինչպես դաշնային պետական, այնպես էլ դաշնության սուբյեկտների և տեղական ինքնակառավարման մարմին-

ների տեղական բյուջեներից: Ընդ որում, ֆինանսավորման ընդհանուր սկզբունքն այն է, որ դրամական որոշակի միջոցներ կարող են հատկացվել միայն համապատասխան այնպիսի ծրագրերի առկայության դեպքում, որոնք նախապես արժանանում են հանրային իշխանության մարմինների հավանությանը: Այս առնչությամբ ռուս հետազոտողներից շատերը գտնում են, որ ֆինանսավորման այսպիսի կանոնակարգումն այնքան էլ իրավաչափ չէ, համարժեք չի արտացոլում ազգային փոքրամասնությունների օրինական շահերը և հնչեցնում են համահավասար ֆինանսավորման սկզբունք կիրառելու անհրաժեշտությունը, որի հիմքում բացառապես կորվի տվյալ հասարակական միավորման անդամների քանակը³:

Ակնհայտ է, որ ազգային օրենսդրության հետագա զարգացումը պետք է ընթանա 1997 թ. հունվարի 10-ից ուժի մեջ մտած «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» Կոնվենցիայի դրույթների իրացման նկատառումով: Նկատի ունենք այն, որ սփյուռքի իրավական կարգավիճակի ելակետային դրույթները, հիմնականում ամրագրված են հենց նշված միջազգային իրավական փաստաթղթում:

Նկատենք, որ այդ միջազգային փաստաթղթով ազգային փոքրամասնություններին առնչվող իրավակարգավո-

³ Տե՛ս, օրինակ՝ **Максимова О. Н.**, Федеральный закон «О национально-культурной автономии» в правовом поле этнонациональной политики, Республика Татарстан: статистический ежегодник. — Барнаул, 2011, 273-275 էջեր:

րումների հիմքում դրվել են հետևյալ նախապայմաններն ու հիմնարար արժեքները՝

- բարեկամության, բարիդրացիության և համագործակցության հարաբերությունների զարգացումը և ամրապնդումը համապատասխանում է իրենց ժողովուրդների արմատական շահերին եւ ծառայում է խաղաղության և անվտանգության գործին,

- կողմնակցությունը ժողովրդավարությանը, ազատությանը և արդարությանը,

- կողմնակցությունը մարդու իրավունքների բնագավառում միջազգային չափանիշների պահպանմանը, որոնք ամրագրված են, մասնավորապես, մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրում, քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրում, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային Դաշնագրում, ազգային կամ էթնիկ, կրոնական եւ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին Հռչակագրում, ռասայական խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի մասին միջազգային Կոնվենցիայում, ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին Կոնվենցիայում, երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայում եւ մարդու իրավունքների մասին այլ հիմնարար փաստաթղթերում,

- պարտավորությունները, որոնք բխում են Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության Հելսինկիի Եզրափակիչ ակտից, Մադրիդի, Վիեն-

նայի եւ Հելսինկիի ամփոփիչ փաստաթղթերից, ԵԱՀԽ մարդկային չափի Կոպենհագենի և Մոսկվայի խորհրդակցությունների փաստաթղթերից, մշակութային ժառանգության մասին Կրակովի գիտաժողովի, ինչպես նաեւ նոր Եվրոպայի համար Փարիզյան Խարտիայի փաստաթղթերից,

- ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները հանդիսանում են մարդու հանրաճանաչ իրավունքների անբաժանելի մասը,

- յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի տարածքում բնակվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք,

- հիշատակված փոքրամասնությունները հանդիսանում են հասարակության անբաժանելի մասը, որտեղ նրանք ապրել ու ապրում են և հարստացնում են այն իրենց աշխատանքով, ինքնատիպությամբ և մշակույթով,

- ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խրախուսումը և պաշտպանությունը նպաստում է այն պետությունների քաղաքական և սոցիալական կայունությանը, որտեղ նրանք բնակվում են,

- պատշաճ միջոցների ձեռնարկումը ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման համար և այդ նպատակներով համագործակցության համապատասխան մեխանիզմների ստեղծումը, այդ թվում՝ երկկողմ համաձայնագրերի շրջանակներում:

Կարևոր իրավական արժեք ունի Կոնվենցիայի 1-ին հոդվածով «ազգային փոքրամասնություն» եզրույթին տրված բնորոշումը. «Սույն Կոնվենցիայի նպատակների

համար, ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ասելով, հասկացվում են անձինք, որոնք մշտապես բնակվում են մի Պայմանավորվող կողմի տարածքում, ունեն նրա քաղաքացիությունը, որոնք, ըստ իրենց էթնիկ ծագման, լեզվի, մշակույթի, կրոնի կամ ավանդույթների, տարբերվում են տվյալ Պայմանավորվող կողմի հիմնական բնակչությունից»։ Բոլոր դեպքերում, Կոնվենցիան ելակետ է ընդունում այն դիրքորոշումը, ըստ որի՝ պատկանելությունը ազգային փոքրամասնությանը անհատական ընտրության հարց է և երաշխավորում են, որ նման ընտրությունը չի հանգեցնի նշված անձի համար որևէ ոչ բարենպաստ հետևանքների։

Ազգապահպանության տեսանկյունից, հատկապես, էական նշանակություն ունեն Կոնվենցիայի 4-րդ հոդվածով ամրագրված նորմերը, քանզի դրանցում արտացոլված են սփյուռքին պատկանող մարդկանց նկատմամբ իրականացվելիք քաղաքականության հիմնադրույթները։ Այսպես, այդ հոդվածի համաձայն.

«1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը, անհատապես կամ իր խմբի անդամների հետ համատեղ, անխափան կերպով արտահայտել, պահպանել և զարգացնել իրենց էթնիկ, լեզվական, մշակութային կամ կրոնական ինքնատիպությունը։

2. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են իրենց քաղաքականության մեջ հաշվի առնել ազգային փոքրամասնությունների օրինական շահերը և անհրաժեշտ

միջոցներ ձեռնարկել՝ նրանց էթնիկ, լեզվական, մշակութային կամ կրոնական ինքնատիպության պահպանման և զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով: Նման միջոցները կծառայեն ամբողջ հասարակության շահերին և չպետք է ոտնահարեն Պայմանավորվող կողմերի մյուս քաղաքացիների իրավունքները»:

Էական նշանակություն ունի նաև ազգային փոքրամասնությունների առնչությամբ կազմակերպարավական երաշխիքների ամրագրումը, քանզի ազգային փոքրամասնությունների իրավունքների իրացումը կարող է գործնականում արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ վերապահվում է այդպիսիք իրացնել կոլեկտիվ եղանակով, ինչը ենթադրում է որոշակի կազմակերպվածության աստիճան: Ինչևէ, 5-րդ հոդվածով նախատեսված է հետևյալ ընթացակարգը.

«1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ապահովել հասարակական եւ պետական կյանքին մասնակցելու իրավունք, հատկապես տարածաշրջանային մակարդակով նրանց շահերի պաշտպանությամբ վերաբերող հարցերի լուծման դեպքում:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը ազգային օրենսդրությանը համապատասխան ստեղծելու լուսավորչական, մշակութային և կրոնական բնույթի տարբեր կազմակերպություններ (ասոցիացիաներ, հայրենակցական միություններ և այլն)՝ էթնիկ,

լեզվական, մշակութային և կրոնական ինքնատիպության պահպանման եւ զարգացման նպատակով:

Նշված կազմակերպությունները կունենան նույնպիսի իրավունքներ, որոնք տրամադրվում են նման կազմակերպություններին, մասնավորապես, ինչ վերաբերում է հասարակական շենքերից, ռադիոհաղորդումներից, հեռուստատեսությունից, մամուլից, զանգվածային լրատվության այլ միջոցներից օգտվելուն»:

Ներկայումս խնդրահարույց հարցերից է նաև լեզվի խնդիրը: Ինչ խոսք, ազգային պետությունները կարող են պաշտոնական գրագրության համար սահմանել պաշտոնական լեզուներ (ընդ որում, կան երկրներ, օրինակ՝ ԱՄՆ-ում, որոնցում պետական լեզու սահմանելու առնչությամբ որևէ իրավական ակտ գոյություն չունի), կան երկրներ, որոնք անգամ մի քանի լեզուներ են միաժամանակ սահմանում, որպես պետական, օրինակ՝ Շվեյցարիա (չորսը), Ղազախստան (երկուսը) և այլն: Սակայն պետական լեզուներ սահմանելու կամ պաշտոնական գրագրություն որոշակի լեզվով իրականացնելու վերաբերյալ իրավակարգավորումները չեն կարող խոչընդոտ լինել ազգային լեզվի տարածման, դրա բնականոն ուսուցման համար, ըստ այդմ էլ Կոնվենցիայի 7-րդ հոդվածը ամրագրում է, որ պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ օգտագործելու իրենց անունները և ազգանունները, այդ թվում պաշտոնական փաստաթղթերում, ինչպես դա ընդունված է իրենց մայրենի լեզվով, ինչպես նաև անխափան

կերպով օգտագործելու մայրենի լեզուն թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում, հնարավորություն ունենալ օգտվելու այդ լեզվով տեղեկություններից, տարածելու և փոխանակելու նման տեղեկություններ, ներառյալ մայրենի լեզվով, զանգվածային լրատվության միջոցներ ստեղծելու իրավունքը, պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, ազգային օրենսդրությանը համապատասխան, կստեղծի այնտեղ, որտեղ հնարավոր է և անհրաժեշտ, պաշտոնական իշխանությունների հետ շփումներում ազգային փոքրամասնությունների լեզվի օգտագործման համար պայմաններ:

Կոնվենցիան առավել լայն իրավական հնարավորություններ է ամրագրել խղճի և կրոնի ազատության կտրվածքով, մասնավորապես Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն. «Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը անհատապես կամ իր խմբի անդամների հետ համատեղ դավանել իր կրոնը և իր դավանանքին համապատասխան կատարել կրոնական ծիսակատարություններ, պահել պաշտամունքային շինություններ, ձեռք բերել և օգտագործել պաշտամունքի համար անհրաժեշտ առարկաներ, ինչպես նաև մայրենի լեզվով վարել լուսավորչական կրոնական գործունեություն: Նման գործունեությունը չպետք է հակասի ազգային օրենսդրությանը»: Կարծում ենք, որ կրոնական կազմակերպությունների համար նախատեսված հիշյալ արտոնությունները, որոնք նաև գործնականում են անարգել իրականացվում, կարող են օգտագործվել նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղե-

ցու գահակալությունների, թեմերի, հայրապետությունների ու ծխերի միջոցով արդյունքներ արձանագրելու տեսանկյունից:

Ինչ վերաբերում է լուսավորչական, մշակութային և կրոնական բնույթի կազմակերպությունների ֆինանսավորմանը, ապա Կոնվենցիան ելակետ է ընդունում այն, որ այն կարող է կատարվել ֆինանսավորվել կամավոր դրամական ներդրումների հաշվին, ինչպես նաև օգնություն ստանալ իրենց գտնվելու վայրի պետությունից, նրա օրենսդրությանը համապատասխան: Նրանք նաև օգնություն կարող են ստանալ մյուս Պայմանավորվող կողմերի պետական և հասարակական կազմակերպություններից՝ նրանց գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ հաստատված պահանջների պահպանմամբ (9-րդ հոդված): Այսպիսով, Կոնվենցիան պետական բյուջեից հատկացումները չի համարում պարտադիր, ինչը վկայում է այն մասին, որ այդպիսի հատկացումների մշակույթը իրատեսական դարձնելու նկատառումով առնվազն անհրաժեշտ է համապատասխան միջազգային պայմանագրեր կնքել որոշ պետությունների հետ, ինչպես նաև խնդիրը քննարկման առարկա դարձնել հայ համայնքների միջոցով:

Ընդհանրապես, Կոնվենցիայով ազգային ինքնատիպության պահպանման առաքելությունը ամրագրված է, որպես իրավաչափ նպատակ: Այսպես, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն.

«Ազգային փոքրամասնությունների էթնիկ, լեզվական, մշակութային եւ կրոնական ինքնատիպության պահպան-

մանը աջակցելու նպատակով՝ Պայմանավորվող կողմերը, մասնավորապես.

ա) ընդունելով պետական լեզվի ուսումնասիրման անհրաժեշտությունը, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենսդրությանը համապատասխան, առկա պահանջմունքների հաշվառմամբ կստեղծեն համապատասխան պայմաններ, ազգային փոքրամասնությունների կողմից մայրենի լեզվի ուսումնասիրման եւ մայրենի լեզվով կրթություն ստանալու համար, ներառյալ տարբեր մակարդակի կրթական հաստատությունների եւ դրանց ստորաբաժանումների բացումը եւ պահպանումը, որոնք ֆինանսավորվում են տարբեր, այդ թվում սույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված աղբյուրներից,

բ) կնպաստեն Պայմանավորվող կողմերի կրթության հարցերով զբաղվող պետական մարմինների միջեւ համագործակցությանը, կրթական հաստատությունների եւ դրանց ստորաբաժանումների, որտեղ դասավանդումը տարվում է ազգային փոքրամասնությունների լեզուներով, այդ լեզուներով ծրագրերով, ուսումնական ձեռնարկներով եւ ուսումնական գրականությամբ ապահովման համար, օժանդակել այդ կրթական հաստատություններում եւ ստորաբաժանումներում աշխատանքի համար մասնագետների պատրաստմանը,

գ) միջոցներ կձեռնարկեն ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանության եւ ուսումնասիրման համար, այդ թվում կապահովեն նրանց պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանությունը,

դ) ուսումնական հաստատություններում եւ լուսավորչական կազմակերպություններում պետության պատմության եւ մշակույթի ուսումնասիրման դեպքում հաշվի կառնեն ազգային փոքրամասնությունների պատմությունը եւ մշակույթը,

ե) կնպաստեն ազգային արհեստների պահպանությանը եւ զարգացմանը»:

Բոլոր այն պետությունները, որոնցում առկա է մեծաքանակ հայ սփյուռք, ներկայումս միացել են վերը նշված Կոնվենցիային, ինչը խոսում է այն մասին, որ այդ պետությունների հետ բանակցային գործընթացների շրջանակներում աշխատանքները հնարավոր կլինեն իրականացնել՝ հենց Կոնվենցիայի վերոհիշյալ դրույթներին համապատասխան:

**«ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ» ԵԶՐՈՒՅԹԻ
ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂԻՆԵՐԸ՝
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ինչպես տեսական աղբյուրների, այնպես էլ իրավա-
կան փատաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ
պայմանականորեն «ազգային համայնք» (ընդգծում ենք
պայմանականորեն, քանի որ անգամ այդ եզրույթի անվա-
նումն է համարվում վիճահարույց) եզրույթի առնչությամբ
չի ձևավորվել միասնական մոտեցում: Միաժամանակ, հա-
րաբերականորեն կայուն դիրքորոշումները ևս բավարար
չափով հիմնավորված չեն և որոշակիացման, իսկ առան-
ձին դեպքերում՝ վերանայման կարիք ունեն:

Բոլոր դեպքերում, միջազգային փորձի ուսումնասիրու-
թյունը բերում է այն համոզման, որ «ազգային համայնքի»
կարգավիճակ վերապահվում է հետևյալ հատկանիշների
առկայության պարագայում:

Նախ, այդպիսի կարգավիճակ վերապահվում է ոչ
միայն տվյալ պետության սահմաններից դուրս պետակա-
նություն ունեցող օտարազգի քաղաքացիների հանրույթին,
այլև նրանց, ովքեր չունեն պետականություն: Արևմտյան
Եվրոպայի պետություններում և Ռուսաստանի Դաշնությու-
նում այդպիսի կարգավիճակ է վերապահված գնչուներին,
եզդիներին, քրդերին, ասորիներին և այլն:

Թերևս, խնդրահարույց է համարվում դաշնային պե-

տական կառուցվածք ունեցող երկրների պարագայում: Այսպես, Ռուսաստանի Դաշնության տարածքում հավաք բնակվող թաթարներին, բաշկիրներին և այլն չեն դիտարկում իբրև ազգային համայնքներ, քանզի նրանք համարվում են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ, իսկ նրանց ազգային պետականությունը ներկայացնող պետական կազմավորումներն ընդգրկված են նույն Ռուսաստանի Դաշնության կազմում և հանդիսանում են այդ պետության սոսկ ինքնուրույն սուբյեկտներ: Այլ կերպ ասած, Ռուսաստանի Դաշնությունում գործում է տվյալ երկրի տարածքից դուրս «պատմական հայրենիք» ունենալու նախապայմանը:

Հաջորդ նախապայմանը համարվում է *կառուցակարգային* հատկանիշը: Այս կամ այն երկրում որոշակի ազգային պատկանելություն ունեցող մարդկանց մեծաթիվ բնակչության փաստն ինքնին բավարար հիմք չէ ազգային համայնքի առկայության մասին խոսելու համար, անհրաժեշտ է նաև, որպեսզի վերջիններս իրենք կազմավորեն տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան՝ որոշակի ոչ պետական կազմակերպություններ՝ հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ և այլն: Բոլոր այն երկրներում, որտեղ կոնկրետ ազգային համայնքների համար նախատեսված են որոշակի կառուցակարգեր (օրինակ՝ Հունգարիայում, Լեհաստանում և այլն), բնականաբար, իրավական խնդիրներ չեն ծագում, սակայն այդպիսի իրավական հիմքերի բացակայության պարագայում նպատակահարմար է նախապատվությունը տալ հասարակական կազմակերպություններին:

Ներկայումս փորձեր են արվում նաև ձևավորելու միջ-համայնքային խոշոր միավորումներ, որոնք ըստ էության, ունենալով խիստ հավակնոտ անվանումներ, բովանդակա-յին կտրվածքով համարժեք չեն ընդգրկում նախանշված երկրների հայ համայնքի ներկայացուցիչներին և առավե-լապես հետապնդում են քաղաքական նպատակներ:

Կարևոր նախապայման է հանդիսանում նաև վերը նշված կառույցների ֆինանսավորման համակարգը: Որ-պես կանոն, ազգային համայնքների ֆինանսավորման առաջնահերթ աղբյուր է դիտարկվում անդամավճարը, սա-կայն եթե զարգացած երկրներում սա խնդրահարույց չէ, ապա նույնը չի կարելի ասել մյուս երկրների մասին: Ուստի լայն կիրառում ունի նաև հայ համայնքներին Հայաստանի Հանրապետության կողմից ֆինանսական կամ նյութական աջակցության պրակտիկան: Հարկ է նկատել, որ ֆինան-սավորման նշված համակարգը ուղեկցվում է որոշակի ան-հարմարություններով: Ինդիքն այն է, որ վերջին շրջանում Ռուսաստանի Դաշնությունում ցանկացած ոչ պետական կառույց, որը ինչ-որ չափով ֆինանսական կամ նյութական աջակցություն է ստանում արտասահմանյան աղբյուրնե-րից, որակվում է որպես «արտասահմանյան գործակալ»: Ինքնին այս անվանումը չի հանգեցնում իրավական սահ-մանափակումների, սակայն զուտ անվանումն առաջացնում է բացասական ընկալումներ, ինչը ազգային համայնքների պարագայում հարիր չէ:

Սկզբունքորեն վիճահարույց չէ արտաքին ֆինանսա-վորման հենքով իրենց գործունեությունն իրականացնող ոչ

պետական կառույցներին «արտասահմանյան գործակալ» ճանաչելը, քանզի դա թելադրված է ազգային անվտանգության ողջամիտ շահերով: Նկատի ունենք, որ ոչ պետական կառույցներին ֆինանսական կամ որևէ այլ ձևով նյութական աջակցության համակարգն ինքնին առավելապես աղերսներ ունի այդ կազմակերպությունների միջոցով տվյալ պետության ներքին գործերին քողարկված եղանակներով միջամտելու ուղղվածություն, ինչն իրականացվում է բացառապես քաղաքական հենքով: Բնականաբար, այդպիսիք են, առաջին հերթին, հասարակական միավորումները, սակայն նույնը ազգային համայնքների մասով պնդելն այնքան էլ իրավաչափ չէ: Վերջին հաշվով, ազգային համայնքների գործունեությունն ընդգրկում է բացառապես մշակութային, ազգապահպան քաղաքականության տարրեր, որոնք որևէ առնչություն չունեն հանրային իշխանության համակարգի կողմից իրականացվող հիմնարար գործառույթների հետ:

Ինչևէ, 1996 թ. ընդունված Ռուսաստանի Դաշնության «Ոչ առևտրային կազմակերպությունների մասին» դաշնային օրենքում կատարված փոփոխությունների ու լրացումների արդյունքում «օտարերկրյա գործակալներ» են ճանաչվում բոլոր այն ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք դրամական միջոցներ կամ որևէ այլ տեսքով նյութական միջոցներ են ստանում արտասահմանյան պետություններից, միջազգային և արտասահմանյան կազմակերպություններից, օտարերկրյա քաղաքացիներից, քաղաքացիություն չունեցող անձանցից, ինչպես նաև արտասահ-

մանյան երկրներում շահույթ ստացող ռուսական առևտրային կազմակերպություններից (նշված օրենքի 23-րդ հոդված)⁴։

Հասկանալի է, որ զուտ դրամական միջոցների պահով վերոհիշյալ առաջարկությունը կարող է խոցելի թվալ, քանի որ բարդ կլինի նաև այդ կտրվածքով պատշաճ վերահսկողություն իրականացնելը, սակայն գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունն առավելապես նախապատվությունը տալիս է նյութական այնպիսի հատկացումների, որոնք որևէ աղերս չեն կարող ունենալ տվյալ պետության ներքին քաղաքականության միջամտության հետ։ Օրինակ, հաճախ համայնքների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով առաքվում են մայրենի լեզվով ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր և այլն։ Ընդ որում, դրանց մի մասը նախատեսված է իրավասու մարմինների կողմից արդեն իսկ հավատարմագրված կրթական հաստատությունների, իսկ մյուս մասն էլ՝ կիրականօրյա կամ շաբաթօրյա այն կրթական հաստատությունների համար, որոնք սոսկ բավարարվում են մայրենի լեզվի ֆակուլտատիվ դասավանդմամբ։

Հավելենք, որ բազմաթիվ դեպքերում կան հավաստի տվյալներ, որ ազգային համայնքների կազմավորումն ու նրանց հատկացվող ակտիվ ու մեծածավալ ֆինանսական աջակցությունը անսքող հետապնդում է բացառապես քաղաքական նպատակներ, ուստի «արտասահմանյան գոր-

⁴ Ст'у ФЗ РФ «О некоммерческих организациях» от 12 января 1996 г. № 7-ФЗ.

ծակալ» եզրույթը նպատակահարմար է կիրառել ոչ թե անխտիր բոլոր կառույցների, այլ այնպիսիների, որոնց գործունեությունն աղերսներ ունի բացառապես քաղաքական հեռահար նպատակների հետ և չի նախանշում որևէ անմիջական կապ՝ ազգային-մշակութային առաքելության հետ: Թերևս, ասվածի վառ օրինակ է թուրք-մսխեթցիների գործունեությունը: Միայն 2010 թ. անցկացված մարդահամարի տվյալներով Ռուստովի մարզում բնակվում է 39.900 թուրք-մսխեթցի, որոնք դասական իմաստով լինելով թուրք, իրենց համարում են Վրաստանի տարածքում դարեր շարունակ բնակություն հաստատած, այսպես կոչված, թուրք-մսխեթցիներ և ակնկալում են բնակություն հաստատել հայաբնակ տարածքներում⁵:

Ազգային համայնքների ինքնուրույն տեսակ կարող են համարվել նաև ազգային-մշակութային ինքնավարությունները, եթե խոսքը վերաբերում է կոնկրետ վարչատարածքային միավորումներում մեծամասնություն կազմող և իրենց ազգային ինքնությամբ առանձնացող ազգային համույթին: Բնորոշ է այն, որ Ռուսաստանի Դաշնությունում այդ խնդրին անգամ վերապահվել է հստակ իրավական կարգավորում, մասնավորապես, հիշյալ հարաբերությունների կարգավորմանն է նվիրված 1996 թ. հունիսի 17-ի «Ազգային-մշակութային ինքնավարությունների մասին»

⁵ St' u Социально-политические и этнические процессы на юге России, **А. В. Бедрик, Д. Н. Стукалова, А. А. Терещенко**, «Антропоток и этнические диаспоры», 2017, <https://cyberleninka.ru>.

դաշնային օրենքը⁶: Կոնկրետ վարչատարածքային միավորումներում համատեղ ապրող ազգային փոքրամասնությունների համար այս կամ այն չափով առանձնահատկություններ ամրագրելու դրսևորումներ հանդիպում են նաև այլ երկրներում (օրինակ՝ Վրաստանում), սակայն, որպես կանոն, դրանք ունեն հատվածական բնույթ և կայուն օրենսդրական հիմքերի վրա չեն կառուցվում:

Որպես կանոն, ազգային համայնքների ձևավորման, դրանց գոյատևման արդյունքները փոխկապակցվում են զուտ սուբյեկտիվ գործոնների հետ, մասնավորապես գերիշխում է այն տեսակետը, ըստ որի՝ համայնքների ձևավորմանը խոչընդոտում են ավանդույթների պակասը, լեզվահամացության ցածր մակարդակը և այլ սուբյեկտիվ գործոններ⁷: Չենք ժխտում, որ նշված գործոնները, իրոք, ունեն որոշակի ազդեցություն, սակայն չեն կարող վճռորոշ լինել, ավելին, դրանք հնարավոր կլինի հաղթահարել, եթե իրավական հիմքերը լինեն վստահելի, գրավիչ ու կայուն: Այսպիսով, սուբյեկտիվ գործոնների հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու, ինչպես նաև լրացուցիչ խթաններ առաջադրելու նկատառումով հարկ է ձգտել այնպիսի իրավական հիմքերի ներդրմանը, որոնք կնպաստեն անգամ թույլ կազմավորված համայնքների ամրապնդմանը կամ դեռևս չկազմավորված համայնքների ձևավորմանը:

⁶ Տե՛ս Փ3 ՔՓ «О национально-культурной автономии» от 17 июня 1996 г., № 74-Փ3:

⁷ Տե՛ս Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները, **Աննա Ժամկոյան**. - Եր.: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2011, էջ 8-12:

Հաճախ համայնքների կազմավորմանը, ինչպես արդեն նշվեց, նպաստում են տվյալ պետության կողմից նախատեսված ֆինանսական հատկացումները, սակայն հարկ է նկատել, որ անհրաժեշտ իրավական հիմքերի բացակայության պարագայում այդ գործոնը ի գորու չէ բավարար չափով արդյունավետ լինել: Այսպես, Հունգարիան, ձգտելով հարևան երկրներում բնակվող մեծաքանակ հունգարացիների իրավունքների համալիր պաշտպանությանը և ձևավորված համայնքներին նաև նյութական աջակցություն ցուցաբերելը կայուն իրավական հիմքերի վրա դնելու խնդրի լուծմանը, ֆինանսական նկատելի աջակցություն է ցուցաբերում նաև ակնհայտ փոքրաթիվ համայնքներին, այդ թվում՝ հայ համայնքին: Սակայն անգամ կայուն նյութական աջակցության պարագայում պաշտոնապես հայ համայնքի անդամների ընդհանուր թիվը չի համալրվում տվյալ երկրում փաստացի բնակվող անձանցով:

Ընդհանրացնելով առկա մոտեցումները, կարող ենք ուրվագծել հիշյալ եզրույթի բովանդակության հետևյալ տարրերը՝

1) «ազգային սփյուռք» եզրույթը կարող է իրավական փաստաթղթերում ամրագրվել տարբեր անվանումներով, որպեսզի տվյալ ոլորտում միջազգային հարաբերությունների կարգավորման տեսանկյունից որևէ խոչընդոտ չհանդիսանա: Օրինակ, ռուսական աղբյուրներում առավել տարածված է «սփյուռք» եզրույթը, մինչդեռ՝ արևմտյան Եվրոպայի երկրներում՝ «համայնք» եզրույթը, միջազգային առանձին փաստաթղթերում՝ «ազգային փոքրամասնություն»

եզրույթը և այլն: Այս դեպքում, նպատակահարմար է նախապատվությունը տալ այն երկրի օրենսդրությամբ սահմանված անվանմանը, որի հետ իրականացվում են միջազգային հարթությամբ համապատասխան իրավակարգավորումներ,

2) հարկ է նկատի ունենալ, որ «ազգային համայնք» եզրույթը կամ դրա հոմանիշները կարող են կիրառվել մի քանի իմաստներով նաև ազգային օրենսդրությամբ, ինչը պայմանավորված կլինի թե կոնկրետ ինչպիսի հարաբերությունների կարգավորման մասին է խոսքը: Երբ խոսքը միջազգային սոցիալական-իրավական կարգավիճակ ունեցող ազգային համայնքների մասին է, ապա նպատակահարմար է այդ եզրույթն օգտագործել բացառապես միջազգային իրավական փաստաթղթերով «ազգային փոքրամասնություն» ճանաչված կառույցների առնչությամբ,

3) «ազգային համայնքի» իրավական կարգավիճակի հարցադրումը չի կարող անմիջականորեն փոխկապակցվել տվյալ ազգի ներկայացուցիչների ընդհանուր թվաքանակի կամ կոնկրետ երկրի առանձին բնակավայրերում առկա թվաքանակի հետ: Նկատենք, որ ռուս մասնագետների կողմից գերիշխում է այն տեսակետը, ըստ որի՝ եթե որոշակի ազգի ներկայացուցիչների ընդհանուր թվաքանակը ողջամտության սահմաններում է, միևնույն է, նրանք չեն կարող միավորվել և կազմել «սփյուռք», եթե առանձին բնակավայրերում նրանց թվաքանակը սակավ է: Որպես օրինակ է բերվում Ռոստովի մարզում բուլղարացիների ընդհանուր թվաքանակը՝ 754 մարդ, որոնք սակայն չեն կարող

միավորվել և կարգավիճակ ձեռք բերել, քանի որ նրանք ցրված են մարզի ողջ տարածքում և յուրաքանչյուր բնակավայրում առավելագույնը բնակվում է 30 մարդ (տե՛ս, օրինակ՝ Социально-политические и этнические процессы на юге России, **А. В. Бедрик, Д. Н. Стукалова, А. А. Терещенко**, «Антропотоки и этнические диаспоры», 2017, <https://cyberleninka.ru>):

Կարծում ենք, որ առանձին բնակավայրերում մարդկանց թվաքանակը չի կարող իրավական արժեք և նշանակություն ունենալ: Այդպիսի դեպքում, որպես ելակետ է ընդունվում այն մոտեցումը, ըստ որի՝ միմյանցից որոշակի հեռավորության վրա գտնվող քաղաքներում կամ այլ բնակավայրերում բնակվող անձանց իրական հաղորդակցությունը այնքան թույլ է, որ իրատեսական չէ խոսել նրանց հնարավոր միավորման մասին, սակայն գործնականում վճռորոշ նշանակություն ունի ոչ այնքան մարդկանց թվաքանակը, այլ նրանց միավորվելու իրական կամքն ու կոնկրետ արդյունքները: Վերջին հաշվով, առանձին բնակավայրերում միևնույն ազգի ներկայացուցիչները կարող են հասնել մի քանի հազարի, անգամ տասնյակ հազարի, սակայն դա միանշանակ ցուցիչ չէ այն մասին, որ վերջիններս ցանկանում են միավորվել և ձեռք բերել որոշակի սոցիալ-իրավական կարգավիճակ՝ որպես ազգային փոքրամասնության ներկայացուցիչների: Մյուս կողմից նույն 700 բուլղարացիները կարող են ցանկության դեպքում միավորվել և ակնկալել որոշակի սոցիալ-իրավական կարգավիճակ: Ինչ վերաբերում է զուտ տեխնիկական բնույթի բարդություններ-

րին, ապա դրանք ներկայիս գիտատեխնիկական, հատկապես, էլեկտրոնային կապի պայմաններում էական նշանակություն չունեն: Վերջին հաշվով, եթե նվազագույն թվով անձինք կամենում են և փաստացի հնարավորություն ունեն միավորվել և հետապնդել սոցիալ-մշակութային իրավաչափ նպատակներ, ապա դրանում առավելապես պետք է շահագրգռված լինեն հանրային իշխանությունները,

4) «ազգային համայնքների» կազմավորման առավել նախընտրելի ու իրավաչափ կազմակերպարավական կարգավիճակը հասարակական կազմակերպությունն է: Սակայն խնդրի լուծումը, բնականաբար, այսքանով չի կարող ավարտված համարվել, քանի որ ինքնին դասական իմաստով հասարակական կազմակերպության կարգավիճակը համահունչ չէ սփյուռքի խնդիրների լուծմանը, ուստի տվյալ դեպքում կարող է խոսք լինել բացառապես հատուկ կարգավիճակ ունեցող հասարակական միավորումների մասին:

Սկզբունքորեն միջազգային փորձը վկայում է այն մասին, որ սահմանադրարավական կարգավորումները առանձին դեպքերում չեն բացառում ոչ պետական կազմակերպություններին, որոնք հասարակական կազմակերպության հենքի վրա են կազմավորվում և գործում, հատուկ կարգավիճակ վերապահելը: Այդպիսիք են, օրինակ, փաստաբանական, նոտարական կառույցները և այլն,

5) «Ազգային համայնք» կամ «սփյուռք» կարող են կոչվել ոչ միայն պետականություն ունեցող, այլև այդպիսին չունեցող ազգությունների ներկայացուցիչները: Ընդ որում,

սա միջազգային փորձի տեսանկյունից չի դիտարկվում իբրև բացառություն:

«Սվիյուռք» եզրույթի և համանման այլ եզրույթների բնորոշման առնչությամբ միջազգային փորձը, թերևս, չի կարող բավարար լինել, քանզի այն առավելապես օգտագործվում է տեսական գրականությունում, հրապարակախոսական նյութերում և գերատեսչական ակտերում: Բնորոշ է այն, որ ազգային փոքրամասնությունների քանակով ամենահարուստ պետություններից մեկում՝ Ռուսաստանի Դաշնությունում դեռևս օրենսդրական բնորոշում չի տրվել նշված եզրույթներին, իսկ իրավական ակտերում դրանց առնչությամբ իրավական կարգավորումների վերլուծությունից ակնհայտ բխում է, որ դրանցում դեռևս չի ձևավորվել միասնական մոտեցում այս հասկացությունների բովանդակության առնչությամբ:

Ընդ որում, Ռուսաստանի Դաշնությունում նաև նեղ մասնագետների ու փորձագետների շրջանում են բացակայում միատեսակ մոտեցումները: Այսպես, փորձագետների մի հատված գտնում է, որ «ազգային համայնքներին» հարկ է տրամադրել պետական կարգավիճակ և օրենսդրորեն հստակեցնել նրանց լիազորությունների շրջանակը, իսկ մյուս մասը հակված է այն տեսակետին, որ «ազգային համայնքները» սոսկ ոչ պետական կառույցներ են, որոնք կարող են ձեռք բերել հասարակական կազմակերպության կարգավիճակ և ազատ իրականացնել բացառապես սոցիալ-մշակութային այնպիսի գործունեություն, որը նախա-

տեսված է հասարակական միավորումների համար⁸:

Նույն աղբյուրի հեղինակները ելակետ են ընդունում այն, որ բազմազգ Ռուսաստանում հնարավոր չէ սահմանափակվել միայն սոցիալ-մշակութային բնույթի հարցադրումներով, քանի որ առանց քաղաքական հարթությամբ լիազորություններ վերապահելու զարգացումները կարող են հասցնել մի այնպիսի իրավիճակի, երբ ազգային առանձին միավորումներ պարզապես կկորցնեն իրենց ինքնությունը, հետևաբար, մշակութային առանձնահատկությունները, ազգային ավանդույթները, ինչին կենտրոնական իշխանությունները երբեք չեն գնա: Ըստ այդմ էլ՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից հաստատվել է «Ռուս ազգի միասնության և Ռուսաստանի ժողովրդի էթնոմշակութային զարգացման» (2014-2020) ծրագիրը:

Նկատենք, որ այդ ծրագրում արդեն իսկ կան ազգային համայնքներին քաղաքական գործընթացների սուբյեկտ ճանաչելու վերաբերյալ առանձին բաղադրիչներ: Միաժամանակ, փորձագետների մեջ գերիշխող է այն տեսակետը, որ ազգային համայնքների ներգրավվածությունը քաղաքականության մեջ, հանրային իշխանության մարմինների գործունեությանը կհաղորդի հանրային աջակցության տարրեր, կբարձրացնի սոցիալ-մշակութային խնդիրների լուծման արդյունավետությունը և կընդլայնի նշված խնդիրներին առնչվող հարցադրումների դիապագոնը:

⁸ Ст'ю Мониторинг правового регулирования статуса диаспоры и землячества (экспертное мнение), **Дмитриев А. В. и Роговая А. В.** (<https://outlook.live.com/owa/?path=/attachmentlightbox>).

Վերը նշված աղբյուրը հաստատում է, որ փորձագետների շրջանում տարածված է նաև այն մոտեցումը, որ ազգային համայնքները ոչ միայն պետք է ակնկալեն պետական աջակցություն, այլև գտնվեն անհրաժեշտ հսկողության ներքո, մասնավորապես, կարծիք են հայտնում այն մասին, որ հանրային իշխանության մարմինները պետք է լիազորված լինեն իրականացնելու այնպիսի հսկողություն, որը թույլ կտա բացահայտելու կազմավորված համայնքներին հատկացվող գումարների չափն ու աղբյուրները, դրանք ծախսելու ուղղությունները, հատկացվող գրականությունը և այլն: Այն, որ օտարերկրյա աղբյուրներից ոչ պետական կազմավորումներին ֆինանսավորման խնդիրները Ռուսաստանի Դաշնությունում ձեռք են բերել անախադեպ արդիական նշանակություն, ակնհայտ է, ուստի այս կտրվածքով փորձագետների անսովոր դիրքորոշումն ունի իր բացատրությունը:

Բոլոր դեպքերում, ընդհանրացնելով վերը նշված աղբյուրի տվյալները, կարելի է հանգել այն եզրակացության, որ Ռուսաստանի Դաշնության փորձագետների մոտ, թերևս, գերիշխում է այն տեսակետը, որ ազգային համայնքներին լրացուցիչ քաղաքական բնույթի արտոնություններ տալն իրավաչափ չէ, այդ համայնքների ներկայացուցիչները հանդիսանում են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ, ուստի պարտավոր են ենթարկվելու բոլորի համար սահմանված «ընդհանուր կանոններին», իսկ ինչ վերաբերում է մշակութային ոլորտին առնչվող խնդիրներին, ապա դրանք լիարժեք լուծելու համար անխուսափելիորեն անհրաժեշտ

են լրացուցիչ կառուցակարգային և իրավական լծակներ, որոնք ընդունելի չափով արդեն իսկ գործի են դրվել:

Հաջորդ համընդհանուր մոտեցումն այն է, որ ազգային համայնք կարելի է դիտարկել բացառապես կազմակերպահրավական կոնկրետ կարգավիճակ ունեցող կառույցներին, իսկ զուտ հանրային նախաձեռնության հենքով ձևավորված կառույցները չեն կարող պաշտոնապես ճանաչվել այդպիսին, հետևաբար, հանրային իշխանության հետ հարաբերությունների լիիրավ սուբյեկտ:

Դիրքորոշումները համընկնում են նաև ազգային համայնքների կազմի վերաբերյալ հարցում, քանզի գերիշխում է այն մոտեցումը, ըստ որի՝ կազմակերպահրավական կարգավիճակ ունեցող համայնքները պետք է պարտավորված լինեն հստակ հաշվառում ունենալու համայնքի անդամների վերաբերյալ: Խնդիրն այն է, որ համայնքները հաճախ փորձում են ներկայացնել որոշակի ազգությանը պատկանող բոլոր անձանց շահերը, մինչդեռ՝ գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ նրանց մի ստվար հատված ոչ միայն իրազեկված չէ այդպիսի կառույցների գոյության մասին, այլև հստակ կամահայտնություն չի դրսևորել և պատրաստ էլ չէ դրսևորել՝ որևէ կերպ անդամակցելու առնչությամբ:

Նշված աղբյուրը կարևոր տեղեկատվություն է բովանդակում նաև այս կամ այն չափով ձևավորված ազգային համայնքների դիրքորոշումների վերաբերյալ, մասնավորապես ընդգծվում է, որ նրանք այդ հարցում, հիմնականում երկու տեսակետ ունեն՝ ա) ազգային համայնքները նպա-

տակահարմար է ձևավորվել հասարակական կազմակերպության կարգավիճակով և բ) ազգային համայնքների համար առավել բնորոշ է ազգային ինքնավարության կարգավիճակը: Սակայն ողջ խնդիրն այն է, որ նորմատիվ հարթությամբ որևէ հստակ հիմք չկա այն մասին, թե կոնկրետ ի՞նչ է իրենից ներկայացնում ազգային ինքնավարությունը, ինչո՞վ է այն տարբերվում հասարակական կազմակերպություններից, ինչի արդյունքում էլ ազգային ինքնավարության համակիրները սուկ իրենց կողմից հիմնադրված կառույցների անվանումն են դարձնում այդպիսին, մինչդեռ՝ կազմակերպատիրավական տեսանկյունից այդ կառույցները գրեթե ոչնչով չեն տարբերվում հասարակական կազմակերպություններից: Ընդ որում, ազգային ինքնավարության վերաբերյալ պատկերացումների հիմքում դրված է Ռուսաստանի Դաշնության 1996 թ. «Ազգային-մշակութային միավորումների մասին» դաշնային օրենքը, որում սակայն ոչ թե խոսվում է ինքնուրույն կազմակերպատիրավական տեսակի, այլ ազգային համայնքների գործունեության նպատակների ու ձևերի մասին:

Ի դեպ, տարբեր անվանումներով ոչ պետական միավորումներ հիմնադրելու հակումների հիմքում, մեր կարծիքով, ընկած են արդեն իսկ ձևավորված ազգային համայնքների հետ «մրցակցելու» և առավել բազմանդամ կառույց ձևավորելու ոչ այնքան հեռատես միտումները: Ընդ որում, գործնական վերլուծությունները բերում են այն համոզման, որ, հատկապես, արևմտյան Եվրոպայում սփյուռքահայերի շրջանում ձևավորվում է միջհամայնքային միավորումներ

ձևավորելու միտում, որոնց նպատակը, հիմնականում, քաղաքական ուղղվածության է:

Հարկ է նկատել, որ ազգային համայնքների կարգավիճակին առնչվող հարցադրումների քննարկման ու լուծման տեսանկյունից մեծ նշանակություն ունեն նաև դաշնային կառուցվածք ունեցող պետություններում պետական ինքնավար միավորումների իրավական կարգավիճակն ու այդ կապակցությամբ իրավական հիմքերի զարգացման ուղղությունները: Խնդիրն այն է, որ այդպիսի պետական կազմավորումները ձգտում են աստիճանաբար ունենալ առավել լայն ինքնավարություն, ինչն անխուսափելիորեն ազդում է այդպիսի կազմավորումներ չունեցող և, ընդհանրապես, այդպիսի կազմավորումների ակնկալիք չունեցող ազգային համայնքների կարգավիճակին վերաբերող մոտեցումների վրա՝ հանգեցնելով դրանց վերանայմանը: Ըստ որոշ հետազոտողների, կենտրոնական իշխանությունները ձգտում են հնարավորինս սահմանափակել ինքնավար պետական կազմավորումների կարգավիճակը, պատճառաբանելով, որ ներկայիս սոցիալ-տնտեսական ու միջազգային-քաղաքական մարտահրավերներին արդյունավետ դիմակայելու համար խիստ անհրաժեշտ են կենտրոնացված իշխանությունը, միատեսակ իրավակարգավորումների տարբերակը: Մյուս կողմից ինքնավար պետական կազմավորումները ձգտում են ձեռք բերել առավել նկատելի արտոնություններ և ինքնուրույն կառավարման լծակներ, ինչը հիմնավորում են ոչ միայն միջազգային իրավունքի սկզբունքների հետևողական պահպանման անհրաժեշտությամբ, այլև սոցիալա-

կան արդարության գաղափարի յուրովի ընկալմամբ⁹: Ինչպես Ռուսաստանի Դաշնությունում, այնպես էլ արևմտյան Եվրոպայում (հատկապես, բնորոշ է Կատալոնիայի օրինակը Իսպանիայի պարագայում) հանրաքվեների միջոցով անկախության ձգտող պետական կազմավորումները իրենց նախաձեռնությունը փորձում են հիմնավորել այն փաստարկով՝ հանդիսանալով դաշնային պետության սուբյեկտ, իրենք հարկադրված են ավելի մեծ քանակով հատկացումներ կատարել կենտրոնական բյուջեին, քան երբևէ կարող են ակնկալել ստանալ նույն այդ բյուջեից: Մյուս կողմից, կենտրոնական իշխանությունների կողմից տեղական ինքնակառավարման միավորումներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով իրականացվող հատկացումները լրացուցիչ լարվածություն են հաղորդում, ինչը ևս միատեսակ ներազդեցություն չի թողնում ազգային համայնքների կարգավիճակի վրա: Բոլոր դեպքերում, նկատելի է հետևյալ օրինաչափությունը՝ բոլոր այն երկրներում, որտեղ ինքնավար պետական կազմավորումներին հաջողվում է հասնել որոշակի զիջումների, հանրային իշխանությունները փորձում են համարժեք զիջումներ նախատեսել նաև ազգային համայնքների պարագայում:

Թաթարստանի օրինակով ազգային համայնքների կարգավիճակին անդրադարձ կատարած հեղինակներից Ա. Ջարիպովը նկատում է նաև, որ ինքնավար պետական

⁹ Տե՛ս **Зарипов А. Х.**, Развитие национально-этнических организаций как направление этнонациональной политики РФ (на примере Республики Татарстан), с. 72-75, <https://outlook.live.com/owa/?path=/attachmentlightbox>.

կազմավորումներում, որպես կանոն, բնակվում են նաև այլ ազգության ներկայացուցիչներ, որոնք սոցիալ-տնտեսական ու քաղաքական բնույթի հարցերի քննարկման տեսանկյունից ոչ բոլոր դեպքերում են համամիտ լինում տվյալ պետական կազմավորման բնակչության մեծամասնության դիրքորոշման հետ: Ըստ հեղինակի՝ 2010 թ. Համառուսական մարդահամարի տվյալներով Թաթարստանի Հանրապետությունում բնակչության կազմն ունեցել է հետևյալ պատկերը՝ թաթարները կազմել են բնակչության 53,2 տոկոսը, ռուսները՝ 39,7 տոկոսը, չուվաշները 3,1 տոկոսը, ուդմուրտները՝ 0,6 տոկոսը, ուկրաինացիները՝ 0,5 տոկոսը, բաշկիրները՝ 0,3 տոկոսը, հայերը, ադրբեջանցիները, ուզբեկները, տաջիկները՝ 0,2 տոկոսը, ղազախները՝ 0,05 տոկոսը, վրացիները՝ 0,04 տոկոսը, կիրգիզները՝ 0,03 տոկոսը, այլ ազգության ներկայացուցիչները՝ 0,4 տոկոսը:

Մեկ այլ օրինաչափություն ևս. ինքնավար պետական կազմավորումները փորձում են իրենց օրենսդրական ակտերով ազգային համայնքների համար վերապահել առավել լայն իրավական կարգավիճակ, քան դա արվում է կենտրոնական իշխանությունների կողմից: Այս տեսանկյունից բնորոշ են վերը նշված հեղինակի փաստարկված դիտարկումները, որոնց համաձայն վերջին 10-15 տարիների ընթացքում Թաթարստանի Հանրապետության օրենսդիր մարմինն ընդունել է մի շարք օրենքներ, որոնք նկատելիորեն ընդլայնել են ազգային համայնքների իրավական կարգավիճակը:

Ազգային համայնքների իրավական կարգավիճակի

հստակեցման գործում էական դեր ունեցավ միջազգային իրավունքում, ինչպես նաև արտասահմանյան երկրներում կոլեկտիվ իրավունքների պաշտպանության ինստիտուտի ներդրման գործոնը: Մեր կարծիքով, այս իրավունքի նորովի ընկալմանը և կիրառման սահմանների ընդլայնմանը նպաստեց նաև ազգային-ազատագրական շարժումների նոր ալիքը, ինչին մենք արդեն անդրադարձանք վերևում: Ազգային համայնքների և պետության հետ փոխհարաբերությունների ողջ համակարգը, հիմնականում, դիտարկվում է սոցիալական ու մշակութային հարթությամբ, և միայն սակավաթիվ դեպքերում է այն քննարկման առարկա դառնում պատմաքաղաքական ասպեկտներով:

Ակնհայտ է, որ սփյուռքի գործոնը աստիճանաբար դիտարկվում է նաև քաղաքական տեսանկյունից, հատկապես, երբ խոսքը վերաբերում է տվյալ երկրի արտաքին քաղաքականությանը: Տվյալ դեպքում սփյուռքը դիտարկվում է, որպես արտաքին քաղաքականության վրա ազդեցություն ունեցող, իսկ երբեմն էլ նաև արտաքին քաղաքականության նկատմամբ հավելյալ վստահություն հաղորդող գործոն, իսկ առանձին դեպքերում սփյուռքը հսկայական ազդեցություն է ունենում արտաքին քաղաքականության շրջանակներում, որպես լրբբինգ իրականացնող սուբյեկտ:

Հարկ է նաև նկատել, որ ազգային համայնքների առանձնահատկությունները մեծ մասամբ թելադրված են ոչ միայն զուտ պատմական, սոցիալական կամ մշակութային ասպեկտներով, այլև կրոնական ուղղվածությամբ: Մասնավորապես, ազգային համայնքների, հատկապես, հայ հա-

մայնքների պարագայում նկատելի է, որ ազգային համայնքների ձևավորումն ու հետագա զարգացումն անխուսափելիորեն ուղեկցվում է եկեղեցաշինությամբ, ի հայտ են գալիս նորակառույց եկեղեցական կառույցներ, որոնք աստիճանաբար վերածվում են համայնքների սոցիալական կենտրոնների: Բնորոշ է նաև այն, որ հաճախ համայնքների շրջանակներում մշակութային միջոցառումների հիմնական նախաձեռնողն ու կազմակերպիչը լինում են հենց եկեղեցական կառույցները, որոնք նաև ունեն համապատասխան մշակութային կայուն կենտրոններ և կահավորված տարածքներ:

Իրավական պաշտպանության տեսանկյունից հարկ է նաև հստակ տարանջատել «ազգային փոքրամասնություն» և «ազգային համայնք» հասկացությունները, քանի որ «ազգային փոքրամասնություն» եզրույթը միջազգային-իրավական փաստաթղթերով ճանաչված ինստիտուտ է, ինչը ենթադրում է, որ ազգային հանրային իշխանության մարմինները պարտավոր են այդպիսիք ճանաչված սոցիալական խմբերի համար օրենսդրությամբ նախատեսել նվազագույն արտոնություններ և իրավական պաշտպանություն, ինչն արդեն ամբողջությամբ կիրառելի չէ «ազգային համայնքների» պարագայում: Օրինակ, ազգային փոքրամասնությունների պարագայում պետությունները պարտավոր են վարչարարության և դատավարության կանոններում նախատեսել նաև տվյալ ազգային փոքրամասնության լեզվի անարգել կիրառման ընթացակարգեր, մինչդեռ՝ ազգային համայնքների պարագայում կարող է ընդհանրապես լեզվի

հարց չքննարկվել: Ընդ որում, հաճախ ազգային համայնքները չեն էլ բաժրացնում պաշտոնական գործավարության կանոններում ազգային լեզվի խնդիրը, քանզի իրենք չեն տիրապետում նշված լեզվին: Եվ ամենակարևոր նախապայմանը՝ եթե ազգային փոքրամասնությունների պարագայում հատուկ կառույցների ձևավորման անհրաժեշտությունը բացակայում է, ապա ազգային համայնքների պարագայում դա անխուսափելի պայման է:

Վերը նշված երկու ինստիտուտների իրավական հիմքերը հաճախ նաև համընկնում են, թե՛ ազգային փոքրամասնության, և թե՛ ազգային համայնքների պարագայում իրավաչափ է դիտարկվում ազգային լեզվով ուսուցմանը, լրատվության միջոցների գործարկմանն աջակցելը և այլն: Պարզապես՝ ազգային փոքրամասնությունների պարագայում հիշյալ խնդիրների իրավական կարգավորումը կրում է իմպերատիվ բնույթ, մինչդեռ ազգային համայնքների դեպքում առավել նկատելի է փոխադարձ պայմանավորվածության գործոնը:

Խնդրի հետազոտմանը նվիրված աշխատությունների գրեթե բոլոր հեղինակները, թերևս, համամիտ են այն դիրքորոշմանը, ըստ որի՝ ազգային փոքրամասնություններն ու ազգային համայնքները համեմատաբար, որպես կանոն, առավել հանդուրժող ու լոյալ են ընդունող պետության իշխանությունների նկատմամբ, քանզի այդպիսով ձգտում են հասնել համարժեք զիջումների՝ իրենց առջև դրված խնդիրների լուծման տեսանկյունից: Գերիշխում է այն հանրային իրավագիտակցությունը, որ քաղաքացիական հա-

սարակությանը բնորոշ առավել պահանջկոտ կեցվածքով հնարավոր չէ հասնել արդյունքների, քանզի կհակադրվի ոչ միայն հանրային իշխանությունը, այլև բուն հասարակությունը: Նկատի է առնվում այն, որ առանձին դեպքերում մշակութային ուղղվածության իրավաչափ պահանջները երբեմն բնիկ ժողովրդի կողմից ընկալվում են, որպես քաղաքական ենթատեքստ ունեցող կամ պարզապես՝ անհիմն արտոնություններ ակնկալող:

Ազգային ցանկացած կազմավորումների դեպքում համընդհանուր են հետևյալ արժեքները պահպանելու նպատակը՝

- սեփական լեզուն,
- ազգային մշակույթը (կենցաղ, սովորույթներ, ավանդույթներ, պարեր, երգեր, տնային կահավորանք, տոնակատարություններ, ծիսակատարություններ, տարագ, գրականություն և այլն),
- դավանանքի պատկանելություն,
- էթնիկական (ազգային) ինքնագիտակցություն՝ մենթալիտետ, ազգային նույնականացման հատկանիշներ և այլն:

**«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՓՅՈՒՌՔ» (E-DIASPORA)
ԵԶՐՈՒՅԹԻ ԲԼՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Կատարված հետազոտությունները, ինչպես նաև սփյուռքի հայ համայնքների ներկայացուցիչների հետ հարցախոյզի արդյունքները վկայում են, որ հայ սփյուռքի մեծագույն խնդիրներից մեկը տարանջատվածությունն է: Այսօր, իհարկե, համայնքների միջև կան որոշակի կապեր, սակայն արդյունավետ համակարգման համար դրանք բավարար չեն: Սփյուռքը ներկայումս խոր ճեղքվածքներ ունի, և հայ տարբեր համայնքներին ժամանակին միավորող երեք հզոր ուժերը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, քաղաքական կուսակցությունները և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (AGBU), կարծես, այլևս չեն կարողանում լիարժեք կատարել այդ առաքելությունը:

Հայ համայնքների ոչ միայն միավորումը, այլև պարզապես համակարգումը գործնականում մեծ դժվարություն է իրենից ներկայացնում¹⁰: Սա թերևս կարելի է պայմանավորել մի քանի հանգամանքներով. հայ համայնքներից յուրաքանչյուրն օժտված է միայն իրեն հատուկ, եզակի առանձնահատկություններով՝ գաղթի վայր և պատճառ, տարբեր ժամանակաշրջանում արտագաղթած զանգվածներ (1915 թվականի Մեծ Եղեռնից հետո արտագաղթածներ,

¹⁰ St' u Armenian Diasporas and Armenia: Issues of Identity and Mobilization, An interview with Khachig Tölölyan, < <https://eac.revues.org/565>>

Խորհրդային Միության ժամանակաշրջանում արտագաղթածներ, Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից հետո արտագաղթածներ և այլն)¹¹, սոցիալական կարգավիճակ, լեզու, մշակույթ, տարիք:

Բացի այդ, հայ սփյուռքի ներկայացուցիչների մի ստվար հատված են կազմում 1970-ական թվականներից հետո իրենց հայրենիքը լքած հայերը, որոնք ամերիկյան գիտնականների կողմից որակվում են որպես տրանսնացիոնալ արտագաղթածներ (transnational migrants)¹²: «Տրանսնացիոնալ արտագաղթը» այն գործընթացների ամբողջությունն է, որոնց միջոցով արտագաղթածները ստեղծում և պահպանում են բազմաթիվ հասարակական կապեր իրենց բնակության վայրի և ծագման պետության միջև: Այլ կերպ ասած՝ տրանսնացիոնալ արտագաղթը անձի պատկանելությունն է երկու կամ ավելի հասարակությունների:

Բնական է, որ վերջիններիս թե՛ կարգավիճակը, թե՛ մտածելակերպը միանգամայն տարբերվում են 20-րդ դարի սկզբին գաղթածներից. նրանք հայրենիքի հետ ունեն անմիջական կապեր, ունեն Հայաստանի Հանրապետությունում բնակվող ընտանիք, ընկերներ, ներկայիս տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացվածության շնորհիվ կապը նրանց հետ ի սկզբանե չի կտրվել, նրանք իրենց բնակության վայրը փոխելուց հետո կարողացել են և կարո-

¹¹ Տե՛ս նույն տեղում:

¹² Տե՛ս **Кочеткова Л. Ю.**, Транснациональная миграция: понятие, условия развития и последствия, журнал “Географический вестник”, 2(25), 2013, <https://cyberleninka.ru/article/n/transnatsionalnaya-migratsiya-ponyatie-usloviya-razvitiya-i-posledstviya>.

ղանում են հաճախ այցելել հայրենիք: Վերջիններիս գաղթի պատճառները և նպատակները միանգամայն այլ են: Տրանսնացիոնալները դեռևս ամբողջապես չեն կտրվել իրենց ծագման երկրից և միևնույն ժամանակ ամբողջապես չեն ինտեգրվել գաղթած պետության հասարակության հետ: Այսինքն՝ այս երկու պետությունների, սոցիումների մեջտեղում են դեռևս գտնվում:

Խնդրահարույց է նաև, որ հայ սփյուռքի երիտասարդ սերնդի ներկայացուցիչները հետաքրքրված չեն ոչ միայն հայ համայնքի կյանքով և խնդիրներով, այլև իրենց հայրենիքում տիրող իրավիճակով: Իսկ սա մեծ խոչընդոտներ է առաջացնում ոչ միայն սփյուռքի համախմբվածության, այլև հայապահպանության հարցում: Հայ համայնքներում գործող արդեն ծերացած, իրենց սպառած կազմակերպությունները չունեն այնպիսի նորարարական մոտեցումներ, որոնք կարող են հետաքրքրել և գրավել երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին: Կարծում ենք՝ այդ իսկ պատճառով հայ սփյուռքի ակտիվ գործող անձանց շարքում ներկայումս չկան երիտասարդ կարկառուն ներկայացուցիչներ:

21-րդ դարում հայ սփյուռքի առջև ծառայած խնդիրների լուծման, երիտասարդ սերնդի ուշադրությունը նվաճելու ու հայրենիքի հետ կապ ստեղծելու նպատակով շեշտադրումներն այլ ուղղություններով կատարելու անհրաժեշտություն է նկատվում: Կարծում ենք՝ այս խնդրում իր մեղքի բաժինն ունի նաև հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը: Անկախ Հայաստանի Հանրապետությունը պետք է ոչ միայն պարզ գիտակցի իր տեղն ու նշանակութ-

յունը հայ սփյուռքի կյանքում, այլև ստանձնի յուրահատուկ համակարգողի, միավորողի դեր, քանզի հայրենիքն է այն վայրը, որտեղ այսօր բազմաթիվ հայ համայնքների ներկայացուցիչներ հանդիպում են միմյանց և փոխանակվում իրենց փորձով և գաղափարներով, և Հայաստանի Հանրապետությունը պետք է գիտակցի իր կարևորությունն այս մտքերի ու գաղափարների յուրօրինակ խաչմերուկի մեջ և համահայկական հաղորդակցության կենտրոն դառնա:

Նկարագրված խնդիրը լուծելու համար առաջարկում ենք դիմել այսօր աննախադեպ զարգացում ապրած տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությանը:

Տեխնոլոգիայի դարաշրջանի պահանջներին համընթաց պետական քաղաքականության նորարարացման հետ մեկտեղ ամբողջ աշխարհում նկատվում է կառավարման նորաստեղծ էլեկտրոնային համակարգին անցնելու միտում, և այդ զարգացումների համատեքստում Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ¹³:

«Էլեկտրոնային կառավարում» եզրույթի մեկ միասնական սահմանում դեռևս չի մշակվել, ինչը, թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ էլեկտրոնային կառավարումը քաղաքական, սոցիալական, իրավական, տնտեսական և տեխնիկական բաղադրիչների համակարգ է, և վերջինիս էության ամբողջական բացահայտումը հնա-

¹³ ՀՀ կառավարության 2010 թ. փետրվարի 25-ի նիստի N 7 արձանագրային որոշման հավելվածով նախատեսվեց Հայաստանի Հանրապետությունում ձևավորել էլեկտրոնային հասարակություն, որի բազմաթիվ նպատակներից մեկն էր ստեղծել և ամբողջ երկրում հասանելի դարձնել էլեկտրոնային կառավարման համակարգը:

րավոր է միայն նշված բաղադրիչների կապն ու փոխհամա-
ձայնեցվածությունը պարզելով: Այնուամենայնիվ, միջազ-
գային փորձը փաստում է, որ էլեկտրոնային կառավար-
ման համակարգը ոչ միայն կառավարման արդյունավետ,
այլև ժողովրդավարական կառավարման կարևոր բաղա-
դրիչ է¹⁴:

Ընդհանուր առմամբ, էլեկտրոնային կառավարումը
տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիանե-
րում կատարվող հանրային ներդրում է՝ արդի կառավար-
ման համակարգի կատարելագործման նպատակով: Վեր-
ջինիս առաքելությունն է բարձրացնել պետություն-հասա-
րակություն փոխհարաբերությունների որակը՝ քաղաքա-
ցու համար մատչելի և հասանելի դարձնելով հանրային
իշխանության մարմինների գործունեության վերաբերյալ
տեղեկատվությունը, առավել արդյունավետ դարձնել պե-
տական և մունիցիպալ ծառայությունները և ներդնել հա-
սարակության սպասարկման միասնական չափանիշ-
ներ¹⁵:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման
շնորհիվ և էլեկտրոնային կառավարման համակարգերի
սաղմնավորմանը զուգահեռ ամբողջ աշխարհում կիրա-
ռում ստացավ նաև «էլեկտրոնային սփյուռք» (e-Diaspora)
հասկացությունը:

¹⁴ Տե՛ս http://www.undp.org/content/undp/en/home/ourwork/democraticgovernance/focus_areas/focus_access_information/_jcr_content/contentPar/.

¹⁵ Տե՛ս ФЦП «Электронная Россия (2002–2010 годы)», Утверждена постановлением Правительства Российской Федерации от 28 января 2002 г., № 65.

«Էլեկտրոնային սփյուռքը» (e-Diaspora) կամ «թվային» սփյուռքը նոր եզրույթ է և նշանակում է ծագման միևնույն երկիր ունեցող արտագաղթածների զանգված, որոնք համախմբվում են կապի նոր միջոցներով: Ցանկացած էլեկտրոնային կայք, սոցիալական կայքի էջ, սփյուռքի հասարակական կազմակերպությունների էլեկտրոնային կայք-էջեր կամ անձնական բլոգ, որը ստեղծվել է կամ կառավարվում է սփյուռքի ներկայացուցչի կողմից և որն իր շուրջն է համախմբում սփյուռքի այլ ներկայացուցիչների, հանդիսանում է էլեկտրոնային սփյուռքի մաս¹⁶: Միանգամայն ընդունելի է գիտնականների այն կարծիքը, որ այսօր համացանցն է այն հիմնական և հզոր ուժը, որը խթանում է սփյուռքի հասարակական կապերի զարգացմանը և ընդհանրապես սփյուռքի համախմբմանը¹⁷:

Պատմականորեն էլեկտրոնային սփյուռքի առաջացումը համընկավ համացանցի տարածման և մի շարք հանրային ծառայություններ առցանց մատուցելու հնարավորության առաջացման հետ: 1990-ական թվականների վերջում զարգացած երկրներում շատ արագ ձևավորվում և զարգանում էին էլեկտրոնային վարչարարությունը, էլեկտրոնային կրթությունը, առողջապահությունը, տուրիզմը և նույնիսկ էլեկտրոնային ժողովրդավարությունը: Դրան համընթաց սկսեցին նկատվել էլեկտրոնային պորտալներ, որոնք ստեղծվում և կառավարվում էին սփյուռքի ներկայացուցիչների կողմից և նպատակ ունեին համացանցի միջոցով միավորելու իրենց հայրենակիցներին:

¹⁶ www.e-diasporas.fr

¹⁷ Տե՛ս <http://www.itn-cohab.eu/wiki/digital-diaspora>

Էլեկտրոնային սփյուռքի կարևորությունը գործնականում առավել վառ ապացուցվում է ռումինական օրինակով: 1996 թվականին մի խումբ ռումինացի արտագաղթածներ ստեղծեցին «The Bans» կոչվող առցանց պլատֆորմը, որն ի սկզբանե նպատակ էր հետապնդում ուղեցույց լինելու Կանադա տեղափոխված ռումինացի նորեկների համար¹⁸: Շատ կարճ ժամանակահատվածում կայքը դարձավ ոչ միայն փորձի, խնդիրների փոխանակման, գիտելիքի ներհոսքի վայր, աշխատանքի շուկա, այլև իրական խթան հանդիսացավ ռումինական սփյուռքի հավաքական ուժի գիտակցման և զարգացման համար: Այս կայքն ավելի ամրապնդեց ռումինացիների ազգային պատկանելության զգացումը, ինչն էլ, սուսկ վիրտուալ աշխարհում չմնալով, հանգեցրեց Տորոնտոյում ռումինական դպրոցի բացմանը և ռումինական ասոցիացիայի հիմնադրմանը¹⁹:

Կրկին անդրադառնալով ռումինական սփյուռքին՝ վկայակոչենք www.ad-astra.ro կայքը, որը համախմբում է ծագումով ռումինացի երիտասարդ գիտնականներին և որն այսօր համարվում է Ռումինիայի քաղաքացիական հասարակության հեռավար կառավարման համակարգը²⁰: Այս կայքի շնորհիվ իրենց արմատներից հեռու գտնվող երիտասարդները համախմբվում են իրենց միասնական նպատակներն իրականացնելու համար:

¹⁸ Տե՛ս https://digital-society-forum.orange.com/en/les-forums/139-les_e-diaspora_exister_en_ligne

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ https://digital-society-forum.orange.com/en/les-forums/139-les_e-diaspora_exister_en_ligne

Իրենց հայրենիքը լքած սփյուռքի ներկայացուցիչները համացանցի միջոցով համախմբվում են յուրօրինակ միասնական առցանց համայնքի մեջ՝ դառնալով նեթիզեններ²¹, և հնարավորություն են ունենում բարձրացնելու և քննարկելու տարբեր պետությունների համայնքներում առկա խնդիրները, միասնական ուժերով գտնելու դրանց համար գործնական լուծումներ և ընդհանրապես կապ պահպանելու իրենց հայրենակիցների հետ:

Կարծում ենք՝ պետք է թերագնահատել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների դերը և անհրաժեշտ է, ժամանակին համընթաց քայլելով, օգտվել դրանց ընձեռած մեծ հնարավորություններից: Սահմանները ոչնչացնելու իրենց ունակությամբ այսօր նորարարական տեխնոլոգիաները մեծ դեր են կատարում ցանկացած սփյուռքի կյանքում, նպաստում են հավաքական ինքնության պահպանմանը: Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների շնորհիվ այլևս էական չէ ռեսուրսների և մարդկանց տեղայնացումը:

Ինչպես արդեն վերը նշեցինք, «Էլեկտրոնային սփյուռք» եզրույթն իր մեջ ընդգրկում է արտագաղթածների այն զանգվածը, որոնք համախմբվում են կապի նոր միջոցներով: Հետևաբար՝ սփյուռքի ներկայացուցիչների կողմից ցանկացած կայքի կամ ծրագրի օգտագործումը՝ այլ ներկայացուցիչների հետ կապ հաստատելու նպատակով, այս եզրույթի շրջանակներում դիտարկվում է որպես էլեկտրոնային սփյուռք:

²¹ Անգլերեն internet (համացանց) և citizen (քաղաքացի) բառերի միավորումից՝ Netizen=internet+citizen:

Այսօր հայ համայնքներում հիմնադրված և գործող հասարակական կազմակերպությունները նույնպես ըստ էության ունեն իրենց էլեկտրոնային կայքերը: Սակայն դրանք, որպես կանոն, համախմբում են միայն կոնկրետ պետության տարածքում բնակվող հայազգի ներկայացուցիչներին, այսինքն՝ զուտ տեղական նշանակություն ունեն: Հիմնարար խնդիրների մեջ ունենալով սփյուռքի տարանջատվածությունը և հայապահպանությունը՝ կարծում ենք արդյունավետ կլիներ ստեղծել հայ սփյուռքի բոլոր համայնքները միավորող մեկ միասնական առցանց պորտալ և հիմք դնել էլեկտրոնային հայ սփյուռքին (Armenian e-Diaspora)՝ ավելի նեղ իմաստով:

Որպես սույն աշխատության շրջանակներում բարձրացված խնդիրների լուծման հնարավոր տարբերակ՝ կցանկանայինք հիմնավորել հենց Հայաստանի Հանրապետության կողմից ստեղծված և կառավարվող էլեկտրոնային պորտալի անհրաժեշտությունը: Կարծում ենք՝ նման պորտալի առկայությունը կարող է լուծում դառնալ ինչպես հայ սփյուռքի տարանջատվածության, այնպես էլ երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին սփյուռքի կյանքում ներգրավելու համար:

Հայ սփյուռքի միասնական պաշտոնական պորտալը հնարավորություն կընձեռի՝

– ստեղծելու նոր գաղափարախոսություն և նպատակներ, շեշտադրումը կատարելու մարդկային ռեսուրսների վրա, նրանց ինտելեկտուալ հնարավորությունների վրա, և ոչ՝ ավանդական կապերի և նյութական ռեսուրսների,

– սփյուռքի համար հնարավորինս բաց պահելու հայրենի Հայաստանի Հանրապետությունում կատարվող գործընթացների, ներքին և արտաքին ազդեցության գործոնների վերաբերյալ տեղեկատվությունը, առկա խնդիրները. ցանկալի է կայքում ձևավորել էլեկտրոնային հարցումների համակարգ,

– կընդգծի հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության, համակարգողի դերը հայ սփյուռքում առաջացած խնդիրների հարցում,

– հնարավորություն կտա ավելի ճշգրիտ թիվ ունենալու արտագաղթածների, նրանց կոնցենտրացվածության մասին,

– հնարավորություն կտա սփյուռքի ներկայացուցիչներին առավել ակտիվ և դյուրին՝ առանց սահմանների, մասնակցելու հայրենիքի կյանքին:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Սփյուռքը քաղաքացիական հասարակության անքակտելի բաղադրիչներից է և կարևոր դեր է կատարում ցանկացած պետության թե՛ իրավական, թե՛ քաղաքական հարաբերություններում:

Սփյուռքի կոնկրետ պետության սահմաններում իրավական որևէ կարգավիճակ ունենալը ոչ միայն համայնքների, այլև ընդունող պետության շահերից է բխում, քանի որ ընդունող պետությանն ու սփյուռքին հնարավորություն է տալիս իրավական դաշտում երկխոսության մեջ մտնել միմյանց հետ: Ավելին, ընդունող պետությունը վերահսկողական նպատակներով պետք է ավելի շահագրգռված լինի համայնքներին որևէ իրավական կարգավիճակ շնորհելու մեջ. համայնքների գործունեությունը պետք է կոնկրետ նորմատիվ-իրավական դաշտում գտնվի, պետությունն անհրաժեշտության դեպքում պետք է կարողանա հետևել համայնքի ֆինանսական շարժին, ներագդել ներքին գործընթացներին և այլն:

Եվրոպական երկրներում այս հարցի լուծումը տրվել է գործնականում առավել տարածում ունեցող տարբերակով. Եվրոպայում բնակվող մեր հայրենակիցները միավորվում են՝ ստեղծելով շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ (ասոցիացիաներ, հիմնադրամներ, բարեգործական ընկերություններ և այլն), ստանում են որոշակի իրավական կարգավիճակ՝ հայ համայնքի շահերը

ներկայացնելու, խնդիրները բարձրացնելու և լսելի դարձնելու, ինչպես նաև մշակույթը, լեզուն և ինքնությունը օտարության մեջ պահպանելու նպատակով:

ԵՄ երկրներում հայ համայնքների իրավական կարգավիճակը բացահայտելու համար մենք անդրադարձել ենք կոնկրետ պետության սահմաններում հայերի բնակեցման պատմական հիմքերին, այնուհետև ուսումնասիրության առարկա ենք դարձրել տվյալ պետության սահմաններում ներկայումս ակտիվ գործունեություն ծավալող և հայ համայնքների շահերը ներկայացնող կազմակերպություններին՝ դրանց իրավական կարգավիճակը ներկայացնելով Եվրոպական տվյալ պետության ներպետական օրենսդրության լույսի ներքո:

Դժբախտաբար, սիյուռքի շահերը ներկայացնող կազմակերպությունները Եվրոպայում առանձնահատուկ կարգավիճակով օժտված չեն. դրանց նկատմամբ կիրառելի են ներպետական օրենսդրության այն նորմերը, որոնցով կարգավորվում են բոլոր տիպի հասարակական կազմակերպությունների իրավական վիճակը, դրանց ստեղծման, կառավարման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման ընթացքում ծագող հարաբերությունները:

Եվրոպական տարբեր երկրների ներպետական օրենսդրությունները՝ որոշ բացառություններով, հիմնականում ճանաչում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների հետևյալ տեսակները՝ ասոցիացիաներ, հիմնադրամներ, բարեգործական ընկերություններ, եկեղեցիներ: Շահույթ ստանալու նպատակ չհետա-

անդող կազմակերպությունների հենց այս կազմակերպարավական ծևերն էլ առավել տարածված են հայ համայնքների շրջանում:

Եթե համեմատություն անցկացնենք Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ սահմանված հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակի հետ, հարցի՝ եվրոպական մոտեցման առավել հետաքրքրական և տարբերվող կողմը, թերևս, հանդիսանում է չգրանցված կամ «ոչ պաշտոնական» հասարակական կազմակերպություններին իրավաբանական անձի կարգավիճակ շնորհելը:

Այսպիսով, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Այնինչ ուսումնասիրված եվրոպական երկրների օրենսդիրը նման կազմակերպության ստեղծումը միավորման փաստով է հաստատում՝ շնորհելով նրան իրավաբանական անձի կարգավիճակ:

Վերոշարադրյալից կարելի է ենթադրել, որ եվրոպական երկրները բարձր են դասում անձի՝ միավորվելու իրավունքը, և հնարավորության դեպքում նման իրավունքի իրականացումը չեն պայմանավորում բյուրոկրատական փաստաթղթային ապահովմամբ:

Սա նշանակում է, որ հայ համայնքը ներկայացնող կազմակերպությունների ձայնը լսելի դառնում է այն պահից, երբ երկուսից ավելի անձ միավորվում են մեկ միաս-

նական նպատակի շուրջ՝ անկախ գրանցման փաստից:

Եվրոպայի պետությունները շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար գործունեության առավել արդյունավետ պայմաններ ստեղծելու համար մշակել և կիրառում են հարկային արտոնությունների տարատեսակ համակարգեր, որոնցից մի քանիսին կանդրադառնանք սույն բաժնում:

ԵՄ երկրներում հայ համայնքների իրավական կարգավիճակի բացահայտման նպատակով ստորև կներկայացնենք մեր կողմից հետազոտված պետություններից երեքի՝ Ֆրանսիայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության և Նիդերլանդների Թագավորության իրավական համակարգերում գործող շահույթ ստանալու նպատակ չհետապնդող հայկական կազմակերպություններ:

Այս պետությունների ընտրությունը պատահական չէ և պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝

1. Ֆրանսիայի Հանրապետությունը Եվրոպայում հայերի հիմնական գաղթօջախն է, Ֆրանսիայի համայնքը մեծաթիվ է, և ընդհանուր առմամբ Ֆրանսիայի հայ համայնքի զարգացումը կարելի է դիտարկել որպես ամբողջ հայ սփյուռքի զարգացման սկիզբ:

2. Իտալիայի Հանրապետության հայ համայնքի իրավական կարգավիճակն առավել ուշադրության է արժանի Իտալիայում գտնվող բազմաթիվ հայկական պատմամշակութային արժեքների առկայությամբ՝ Վենետիկի Մխիթարյան միաբանություն, Հռոմում գտնվող Լևոնյան հայ վարժարան, Միլանում գտնվող Ամբրոսյան գրադարան, Վենե-

տիկի Սուրբ Խաչ եկեղեցի, այդ հաստատություններում պահվող պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ առարկաներ:

3. Ինչ վերաբերում է Նիդերլանդների Թագավորությանը, ապա այս երկրում դեռևս 19-րդ դարում է կարևորվել անձի՝ միավորվելու իրավունքը և հանրային շահի համար կազմակերպություններ հիմնադրելը: Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների՝ ասոցիացիաների և հիմնադրամների համար, Նիդերլանդների իրավական և հարկային դաշտը շատ բարենպաստ է՝ ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա պետությունների կազմակերպությունների համար:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ըստ պատմական աղբյուրների՝ հայ-ֆրանսիական հարաբերությունները սկսել են զարգանալ դեռևս Կիլիկյան թագավորության և Խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանում՝ 11-14-րդ դարերում: Հետագայում՝ 15-16-րդ դարերում, Փարիզում և Մարսելում սկսել են ձևավորվել առաջին փոքրաթիվ հայկական գաղութները:

Ներկայիս իմաստով հայ համայնքի ձևավորման սկիզբը Ֆրանսիայում դրվել է 20-րդ դարի 20-ական թվականներին և արագ տեմպերով զարգացում է ապրել: Այդ ժամանակից ի վեր հայերը Ֆրանսիայում կենտրոնացել են Մարսել-Փարիզ երկաթուղու երկանքով՝ զանգվածի հիմնական կուտակմամբ Մարսելում, Լիոնում և Փարիզում²²:

Ֆրանսիայի հայ համայնքը մեծ դերակատարում է ունեցել հայ սփյուռքի կյանքում. Փարիզը երկար տարիներ՝ նախքան Բեյրութը, եղել է հայ սփյուռքի ոչ պաշտոնական կենտրոնը: Այդ հանգամանքը բացատրվում է մի շարք պատմական գործոններով. առաջին համաշխարհային պատերազմից հետո հայ ժողովրդի ճակատագիրը խաչվել էր Փարիզի հետ. այստեղ կնքվեց Սևրի պայմանագիրը, իրենց գործունեությունը ծավալեցին Ազգային և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունները, այստեղ նախապատրաստվեց Լոզանի խորհրդաժողովը: Հետագա-

²² Մանրամասն տե՛ս **Դալլաքյան Կ. Լ.**, Հայ սփյուռքի պատմություն (իւմառոտ ակնարկ), Երևան, Զանգակ-97, 2004 թ., էջեր 220-242:

յում Փարիզում կենտրոնացավ նաև հայ քաղաքականությունը՝ կուսակցություններով և քաղաքական հոսանքների ղեկավար մարմիններով²³:

Ֆրանսիայում հայ համայնքի կյանքն առավել ակտիվացավ, երբ սկսեցին ձևավորվել և գործել մի շարք հասարակական կազմակերպություններ: Անդրադառնանք դրանցից մի քանիսին, այնուհետև՝ Ֆրանսիայի հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակին:

20-րդ դարի քսանական թվականներից ի վեր Ֆրանսիայում սկսվում է հայրենակցական բազմաթիվ միությունների ստեղծման բուռն գործընթացը. դրանք ծնվում էին տասնյակներով, այնուհետև միաձուլվում էին իրար կամ դադարում գոյությունը:

Մալաթիացիների հայրենակցական միությունը՝ որպես ԱՄՆ–ի միության մասնաճյուղ, Ֆրանսիայում հիմնվեց 1924 թվականին: 1926 թվականին՝ ընդամենը երկու տարի անց, Մալաթիացիների հայրենակցական միությունն արդեն ուներ շուրջ 1200 անդամ:

Հետագայում՝ 1925–1926 թվականներին, հիմնվեցին սեբաստացիների, հաճնեցիների, խարբերոցիների միությունները: Հայրենակցական միությունները գտնում էին այլ երկրներում սփռված հայազգիների և ստեղծում միջհամայնքային միավորումներ: Որպես կանոն համատեղ ուժերով Հայաստանում հիմնում էին իրենց միության անունները կրող ավաններ: Նման ճանապարհով Երևանում հիմն-

²³ Տե՛ս նույն տեղում:

վեց, օրինակ, Նոր Մալաթիա թաղամասը:

Հայրենակցական միությունները 20-րդ դարում վրա հասած ծանր ժամանակաշրջանում հայ ազգային-էթնիկական գոյապահպանության կարևոր խթան հանդիսացան: Նրանց հրատարակած պարբերականների, գրքերի շնորհիվ սերնդեսերունդ փոխանցվեցին հայ ազգային ավանդույթները, բարքերը, պատմությունը, արվեստը:

Առ այսօր գործունեություն ծավալող Հայկական բարեգործական ընդհանուր միությունն իր կենտրոնական վարչությունը 1921 թվականին տեղափոխեց Փարիզ՝ շրջանային կենտրոններ հիմնելով Մարսելում, Լիոնում, Վալանսում և այլուր: Իսկ ՀԲԸՄ հիմնադիր Պողոս Նուբարը 1914 թ. վերջնականապես տեղափոխվեց Փարիզ՝ լքելով Եգիպտոսը:

ՀԲԸՄ իր կենտրոնական գրասենյակը Փարիզից տեղափոխեց Նյու-Յորք միայն Երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Ուստի Ֆրանսիայի հայ սփյուռքի պատմական ակնարկի բաժնում կցանկանայինք անդրադարձ կատարել հայ համայնքների կյանքում առ այսօր կարևոր դերակատարում ունեցող Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը՝ ՀԲԸՄ-ին: ՀԲԸՄ-ը հիմնադրվել է 1906 թվականին Կահիրեում եգիպտահայ ազգային գործիչ Պողոս Նուբարի և եգիպտահայ համայնքի ականավոր ներկայացուցիչների նախաձեռնությամբ: Միության առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր և մշակութային զարգացմանը նպաստելն էր: Այն ստեղծվել էր Օսմանյան կայսրության լծի ծանր ժամանակաշրջանում և միտված էր ամեն կերպ պահպանելու հայ ազգի գոյությունը: 1906-1912 թվականներ-

րին ՀԲԸՄ-ն արևմտահայ գյուղացիությանն ապահովում էր սերմացուով, երկրագործական գործիքներով, Օսմանյան կայսրության հայաշատ շրջաններում Միությունը հիմնել էր դպրոցներ և որբանոցներ: 1914 թ. ՀԲԸՄ-ն արդեն ուներ 142 մասնաճյուղ Արևմտյան Հայաստանում, ԱՄՆ-ում, Արգենտինայում, Եվրոպայում և Աֆրիկայում, ընդհանուր թվով՝ 8533 անդամ:

Չնայած ՀԲԸՄ տարբեր մասնաճյուղերի կողմից կրած մեծ կորուստներին՝ Միությունը այնուամենայնիվ կարողանում է զգալի օգնություն ցուցաբերել եղեռնը վերապրած հայերին. Պորտ Սահիդի (Եգիպտոս) մոտակա անապատում հիմնվում է փրկված մուսալեոցիների վրանային ավանը, բացվում է ՀԲԸՄ-ի Սիսուան վարժարանը (1222 աշակերտ), ապա՝ որբանոցը և այրիանոցը: Պատերազմից հետո ՀԲԸՄ-ն վերաձևավորվում և վերահաստատվում է նոր գաղթօջախներում, իսկ 1921 թ. Միության նստավայրը Կահիրեից տեղափոխվում է Ֆրանսիա:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ՀԲԸՄ-ի գործունեության հիմնական նպատակն է դառնում կրթական, մշակութային և բարեսիրական ծրագրերի միջոցով «պահպանել և տարածել հայ լեզուն, ինքնությունն ու ժառանգությունը»: Այդ նպատակի իրագործման համար ՀԲԸՄ կողմից հիմնվում է «Նուպարյան սաներ» հիմնադրամը, որը թոշակներ էր հատկացնում հայ երիտասարդներին եվրոպական համալսարաններում ուսանելու համար, իսկ 1930 թ.՝ «Մարի Նուպար» ուսանողական տունը Փարիզում: Ավելի ուշ Միությունը Փարիզում բացեց «Ալեք Մա-

նուկյան» կենտրոնը, որը քաղաքի հայության հազվադեպ հավաքավայրերից մեկն էր: Մասնաճյուղը Ֆրանսիայում այդպես էլ չունեցավ իր հայկական դպրոցը, թեպետ սփյուռքի տարածքով մեկ Միության կրթական հաստատությունների թիվը մեծ է:

Պողոս Նուբարի մահից հետո ՀԲԸՄ ականավոր նախագահներից են եղել Գալուստ Գյուրբենկյանը, իրեն փոխարինելու եկած որդին՝ Զարեհ Բեյ Նուբարը, Ալեք Մանուկյանը, որի օրոք էլ ՀԲԸՄ-ն ընդլայնվեց և դարձավ ամենաազդեցիկ սփյուռքահայ կազմակերպությունը, Լուիզ Սիմոն Մանուկյանը՝ Ալեք Մանուկյանի դուստրը:

ՀԲԸՄ-ի մասնաճյուղերն այժմ գործում են 22 երկրների մոտ 80 քաղաքներում: Այսօր հաշվվում են ավելի քան 22.000 ՀԲԸՄ անդամ, 120 մասնաճյուղ և 27 մշակութային կենտրոն, որոնք սփռված են ամբողջ աշխարհով՝ ԱՄՆ, Եվրոպա, Մերձավոր Արևելք, Հարավային Ամերիկա, Ավստրալիա: ՀԲԸՄ-ն տնօրինում է մոտ 20 դպրոց (6600 աշակերտ) և ֆինանսավորում ավելի քան 16 կրթական հաստատություն: Փարիզում և Նյու Ջերսիում ՀԲԸՄ-ն ունի 2 գրադարան:

1990 թ. բացվել է ՀԲԸՄ գրասենյակը Երևանում: Շուրջ 50 տարի անց վերսկսելով իր գործունեությունը Հայաստանում՝ ՀԲԸՄ-ն իր առաքելությունն է համարում ոչ թե զուտ մարդասիրական օգնությունը, այլ երկրի զարգացումը²⁴:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի՝ 1988 թվականի ավերիչ երկրաշարժից հետո հայ սփյուռքը օգնության ձեռք է մեկ-

²⁴ Մանրամասն տե՛ս www.agbu.am

նել հայրենիքին: Ֆրանսիայում նույնպես ստեղծվեցին բազում միավորումներ, որոնց նպատակը միասնական էր՝ իրականացնել վերականգնման ծրագրեր, հիմնել դպրոցներ և հիվանդանոցներ, առաքել դեղորայք, սնունդ և այլն: Նման միավորումների շարքում են «Շարլ Ազնավուրը Հայաստանի համար» ֆոնդը, «ՍՕՍ Արմենի» և այլն:

Փարիզը՝ իբրև սփյուռքահայության կենտրոն և համաշխարհային մշակույթի մայրաքաղաք, այստեղ էր կենտրոնացրել ոչ միայն հայ մտավորականությանը (Վահան Թեքեյան, Արշակ Չոպանյան, Կոստան Զարյան, Ավետիք Իսահակյան և այլք), այլև հայերեն և ֆրանսերեն հայ մամուլը («Հռչակագրության պաշտոնական «Դրոշակ» ամսագիրը, «Յառաջ» ամենօրյա լրագիրը, Ռամկավար Ազատական կուսակցության «Ապագա» պաշտոնաթերթը, Հնչակյան կուսակցության «Հնչակյան մամուլը» և «Զանգը»): Հետագայում, երբ Փարիզն իր՝ հայ սփյուռքի կենտրոն լինելու դիրքերը զիջեց Բեյրութին, տպագրվող մամուլի քանակն աստիճանաբար սկսեց նվազել:

Ինչպես եվրոպական այլ երկրներում, այնպես էլ Ֆրանսիայի Հանրապետությունում հայ սփյուռքի ներկայացուցիչները միավորվում են՝ ստեղծելով տարատեսակ հասարակական կազմակերպություններ: Ներկայումս Ֆրանսիայի հայ համայնքը ներկայացնող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունը Ֆրանսիայի Հայկական կազմակերպությունների Համակարգող Խորհուրդն է (Փարիզ)²⁵:

²⁵ Տե՛ս <http://www.ccaf.info/>

Ֆրանսիական հասարակական կազմակերպությունների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորման են ենթարկվում դեռևս 1901 թվականին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» Ֆրանսիայի Հանրապետության օրենքով²⁶: Քանի որ հայ համայնքներն իրավական կարգավիճակ ձեռք են բերում հասարակական կազմակերպություն հիմնադրելու միջոցով, իսկ այդ հասարակական կազմակերպությունը գործում է Ֆրանսիայի Հանրապետության տարածքում և ենթարկվում է ֆրանսիական օրենսդրությամբ սահմանված նորմերին, ուստի ներկայացնենք Ֆրանսիայի հայ համայնքի իրավական կարգավիճակը «Հասարակական կազմակերպությունների մասին» Ֆրանսիայի Հանրապետության օրենքի լույսի ներքո:

Վկայակոչված օրենքի համաձայն՝ հասարակական կազմակերպությունը կարող է հիմնադրվել երկու կամ ավելի անձանց կողմից, ընդ որում՝ այն կարող է գործել նաև առանց համապատասխան գրանցման:

Ֆրանսիայում հասարակական կազմակերպությունների պարտադիր գրանցում պահանջվում է այն դեպքերում, երբ կազմակերպությունը ցանկանում է բանկային հաշիվ ունենալ, եթե անդամավճարներ է հավաքագրում կամ դրամահավաք է կազմակերպում, եթե ցանկանում է գույք ձեռք բերել կամ վաճառել:

²⁶ Sté u Association Loi 1901, <<https://www.legifrance.gouv.fr/affichTexte.do?cidTexte=LEGITEXT000006069570&dateTexte=20090506>>

Ֆրանսիայում հասարակական կազմակերպության գրանցումը (դեկլարացիան) կատարվում է երկու քայլով՝

1. հաշվառում պրեֆեկտուրայում (Préfecture) կամ սու-պրեֆեկտուրայում (Sous-Préfecture),

2. հասարակական կազմակերպության հիմնադրման վերաբերյալ համապատասխան գրառման կատարում պաշտոնական տեղեկագրում (Journal Officiel)²⁷, որը վարվում և ամեն օր թարմացվում է Ֆրանսիայի կառավարության կողմից:

Ինչպես նշեցինք, դեկլարացիան ներկայացվում է հաշվառման պրեֆեկտուրա (Préfecture) կամ սու-պրեֆեկտուրա (Sous-Préfecture)՝ կախված հասարակական կազմակերպության գործունեության վայրից: Դեկլարացիան հնարավոր է ներկայացնել նաև առցանց:

Ֆրանսիայում հասարակական կազմակերպություն հաշվառելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը՝

– կազմակերպության հստակ անվանումն իր հապավման հետ՝ ըստ անհրաժեշտության,

– կազմակերպության գործունեության առարկան կամ նպատակը,

– կազմակերպության գլխամասի գործունեության հասցեն,

– կազմակերպության ղեկավար մարմնի անդամների անունները, հասցեները, ծննդյան ամսաթվերը, ծննդավայրը,

²⁷ Տե՛ս <http://www.journal-officiel.gouv.fr/>

- կանոնադրության պատճենը՝ ստորագրված կազմակերպության առնվազն երկու անդամի կողմից,
- կազմակերպության անդամների ցանկը,
- հասցեները:

Դեկլարացիայում կարող են ներառվել նաև էլեկտրոնային կայքի և էլեկտրոնային փոստի հասցեները:

Ֆրանսիայի Հանրապետության օրենսդրությունը հասարակական կազմակերպության կառավարման մարմնի կառուցվածքի հետ կապված նորմեր չի պարունակում: Միակ պահանջը՝ կազմակերպության ղեկավար մարմնի կողմից բոլոր անդամներին ամենամյա ընդհանուր ժողովին մասնակցելու հրավեր ուղարկելն է:

Հասարակական կազմակերպությունների հետ կապված ցանկացած փոփոխություն երեք ամսվա ընթացքում պետք է հայտնել պրեֆեկտուրային, և համապատասխան գրառում կատարել պաշտոնական տեղեկագրում (Journal Officiel):

Ֆրանսիայի հասարակական կազմակերպությունների՝ աշխատանքային իրավահարաբերությունները դյուրացնելու համար Հանրապետությունում ստեղծվել է հատուկ՝ **Chèque Emploi Associatif** (CEA)²⁸, համակարգը: «CEA» համակարգի անդամ-գործատուները իրենց աշխատողների հետ կապված բոլոր պարտադիր վճարումները կատարում են մեկ գործակալությունում՝ Centre National Chèque Emploi Associatif: Այս ծառայությունից կարող են օգտվել միայն հա-

²⁸ Տե՛ս <<http://www.cea.urssaf.fr/ceawebinfo/cms/index.html>>

մապատասխան հաշվառում անցած, շահույթ չստացող և ոչ ավելի, քան ինը լրիվ դրույքով աշխատակից ունեցող (տարվա կտրվածքով ոչ ավել, քան 14,463 աշխատանքային ժամ) կազմակերպությունները²⁹:

²⁹ Տե՛ս <<https://www.angloinfo.com/how-to/france/working/starting-a-business/non-profit-associations>>

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նիդերլանդներում հայերի հոսքը զգալի չափերի հասավ համիդյան ջարդերի և Մեծ Եղեռնի հետևանքով:

Հատկանշական է, որ, չնայած հոլանդական իշխանությունների կողմից ստեղծած խոչընդոտներին, 1899 թվականին Ամստերդամում հրատարակվեց Մինաս Չերագի «Խաղաղության համաժողովը և հայոց կոտորածը» աշխատությունը³⁰:

Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո այստեղ հիմնվեց «Հայ փախստականների օգնության հոլանդական հանձնախումբը», որը համախմբեց տեղացի մի շարք պետական և հասարակական գործիչներ:

Այնուամենայնիվ պետք է ընդգծել, որ Նիդերլանդների թագավորությունը 2000-2001 թվականներին մեծ դժվարությամբ թույլատրեց հայոց ցեղասպանությանը նվիրված հուշաքարի տեղադրումը: Այդ հուշաքարը իշխանությունների պահանջով կրում է «1910-1920-ական թվականներին վախճանված հայոց նախորդների հիշատակին արձանագրությունը»:

Նիդերլանդների ներկայիս հայ համայնքը հիմնականում կազմավորվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: 1948 թ. մոտ 50 հայ ընտանիք գաղթել է Նիդերլանդներ Ինդոնեզիայից՝ Նիդերլանդների նախկին

³⁰ Տե՛ս <http://www.abovian.nl/wp-content/uploads/2012/11/20010920ArмянslnNI.pdf>

գաղութից: 1956 թ. բավական թվով հայ ընտանիքներ են եկել Հունաստանից, իսկ 1963 թ.՝ Իրանից: 1960-1970-ական թվականներին Թուրքիայի տարբեր քաղաքներից շուրջ 400 հայ (թուրք բանվորների զանգվածային հոսքի հետ) տեղափոխվել են Նիդերլանդներ՝ աշխատանք գտնելու նպատակով: 1960-70-ական թվականներին Նիդերլանդներում հաստատվել է մոտ 800 հայ Դիարբեքիից՝ հիմնականում Իրաքի հետ Թուրքիայի հարավարևելյան սահմանակից քրդական Շիրնակ գյուղից, Տոզլատից: 1970-80-ական թվականներին Նիդերլանդների հայ համայնքը համալրվել է Իրանից, Իրաքից, Լիբանանից, իսկ վերջին տարիներին՝ նաև Հայաստանից եկած հայերով:

Ներկայումս Նիդերլանդների թագավորության հայերը կենտրոնացած են Ամստերդամում, Ալմեյդում, Ամերսֆորտում. սակավաթիվ հայ ընտանիքներ կան Հաագայում, Լեյդենում, Դորդրեխտում, Ռոտերդամում, Ասենում և այլուր:

Նիդերլանդների թագավորության հայերին միավորող կենտրոնական մարմին առայժմ չկա: Ինչպես եվրոպական մյուս երկրներում, այնպես էլ Նիդերլանդներում գործող դերերում են մշակութային, կրոնական, հասարակական տարատեսակ կազմակերպությունները:

«Հոլանդահայերի ընկերակցություն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվեց 1960-ական թվականների սկզբին և փորձեց համախմբել ողջ հայ համայնքը. կազմակերպվում էին մշակութային, կրոնական միջոցառումներ, եկեղեցական արարողություններ, Ընկերակցություն

ուներ երգչախումբ և հրատարակում էր պարբերաթերթ: Սակայն շուրջ տասը տարի անց սույն ընկերակցությունն իր գործունեությունը դադարեցրեց:

Հատկանշական է, որ 1969 թ. հիմնադրված «Ամերսֆորտի հայ օժանդակ միությունը» ճանաչում ստացավ պետության կողմից և պաշտոնապես գրանցվեց 1972 թ.: Ավելին, 1975 թ. Ամերսֆորտի քաղաքապետարանը միությանը շենք հատկացրեց, որն այժմ շահագործվում է միության ժառանգորդ «Ամերսֆորտի հոլանդահայ միության» կողմից: Այս շենքը դարձավ հոլանդահայ համայնքի մշակութային օջախը:

Հայ Հեղափոխական դաշնակցության կողմից Նիդերլանդներում հիմնվեցին Հոմենթթմենը, Հայ դատի հանձնախումբը, Հայ տունը և այլն:

1988 թ. Հայաստանի աղետալի երկրաշարժից հետո և դրան հաջորդող նորանկախ Հայաստանի տնտեսական շրջափակման տարիներին Նիդերլանդների հայ համայնքի կողմից հայրենիքին օժանդակելու նպատակով ստեղծվեցին Աղետի գոտու օգնության կոմիտեն, Օգնություն Հայաստանին կազմակերպությունը, Համահայկական հիմնադրամի Նիդերլանդների մասնաճյուղը:

Նիդերլանդների թագավարության հայ համայնքը հայկական դպրոց չունի, սակայն հայոց լեզվի կիրակնօրյա դասընթացներ են կազմակերպվում տարատեսակ մշակութային, կրոնական, հասարակական կազմակերպությունների կողմից: Նման դպրոցներ կան Ալմելոյում: Իսկ Լեյդենի համալսարանն ունի հայագիտական ամբիոն:

Արդի հոլանդահայ համայնքի ստեղծման առաջին իսկ փուլում սկսեցին լույս տեսնել հայերեն և հոլանդերեն, նույնիսկ թուրքերեն և անգլերեն լեզուներով բազմաթիվ պարբերականներ, ինչպիսիք էին՝ «Տեղեկագիր» (1975 թ.), «Դեպի հայրենիք» (1978-1979 թթ.), «Պայքար» (1979 թ.), «Քնար» (1984 թ.), «Լուրեր հայրենիքէն», «Բարև Ձեզ» (1990-ականներ) և այլն: 1990-ականներին հրատարակվել են Հայաստան համահայկական հիմնադրամի հոլանդական մասնաճյուղի պաշտոնաթերթ «Հիմնադրամը»՝ հայերենով ու հոլանդերենով և «Օգնություն Հայաստանին» կազմակերպության «Հայաստան» պարբերականը հոլանդերենով:

Նիդերլանդների թագավորությունը դեռևս 1848 թվականին ընդունված սահմանադրությամբ ճանաչել է անձի միավորվելու իրավունքը: Իսկ 1983 թվականի սահմանադրության 8-րդ հոդվածն այդ իրավունքը սահմանափակում է միայն հասարակական կարգի խախտման դեպքերում:

Նիդերլանդների թագավորության շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններից առավել տարածվածներն են ասոցիացիաները, հիմնադրամները և եկեղեցիները³¹: Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների առնչությամբ առաջացող իրավահարաբերությունների կարգավորման հիմնական աղբյուրը Նիդերլանդների թագավորության քաղաքացիական օրենսգիրքն է:

³¹ Տե՛ս <http://www.bridgewest.eu/article/register-non-profit-organization-netherlands>

Սովորուֆային իրավունքի համաձայն՝ դեռևս միջնադարյան Նիդերլանդներում հիմնադրամներ էին գործում, որոնք իրավաբանական անձի կարգավիճակ ունեին³²: Առաջին անգամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններին վերաբերող օրենքը Նիդերլանդների Թագավորությունում ընդունվեց 1855 թվականին՝ «Ասոցիացիաների և ժողովների մասին», որի համաձայն՝ ասոցիացիա հիմնելն անվճար էր, սակայն իրավունակություն ստանալու համար անհրաժեշտ էր ստանալ արքունիքի համաձայնությունը: 1882 թվականին Նիդերլանդների գերագույն դատարանը որոշեց, որ հասարակական կազմակերպություն հիմնելու համար որևէ համաձայնություն անհրաժեշտ չէ: Դատարանը սահմանեց, որ միակ նախապայմանը նոտարական կարգով վավերացված՝ կազմակերպություն ստեղծելու մասին պայմանագրի առկայությունն է: Նիդերլանդների սովորուֆային իրավունքին փոխարինելու եկան 1956 թվականի «Հիմնադրամների մասին» ակտը և 1976 թվականի քաղաքացիական օրենսգիրքը:

Ներկայումս Նիդերլանդների թագավորության շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները ասոցիացիաները և հիմնադրամներն են:

Ասոցիացիան իրավաբանական անձ է, որի անդամները միավորվել են կազմակերպության կանոնադրությամբ սահմանված միասնական նպատակի շուրջ: Ասոցիացիան կարող է առևտրային գործունեություն էլ իրականացնել,

³² St'u The Non-Profit Sector in the Netherlands, Working Paper, **Burger A., Dekker P.**, Sociaal en Cultureel Planbureau, Den Haag, April 2001:

սակայն ստացված շահույթը չի կարող բաշխվել դրա անդամների կամ մարմինների միջև:

Նիդերլանդներում ևս ասոցիացիաները կարող են լինել գրանցված և չգրանցված: Գրանցված ասոցիացիաները համարվում են լիարժեք իրավունակություն ունեցողներ, իսկ չգրանցվածները՝ մասնակի: Ասոցիացիաները Նիդերլանդներում ենթակա են գրանցման Առևտրի պալատի կողմից՝ առևտրային ռեգիստրում: Գրանցված ասոցիացիաների կանոնադրությունները պետք է նոտարական կարգով հաստատված լինեն:

Չգրանցված ասոցիացիան ստեղծված է համարվում այն պահից, երբ առնվազն երկու անձ՝ քաղաքացիական կամ իրավաբանական, միավորվում են կազմակերպության մեջ՝ որոշակի նպատակի համար: Այս դեպքում կանոնադրության առկայությունը պարտադիր չէ: Բավարար է միայն կազմակերպչական որոշ հարցերում պայմանավորվածության ձեռքբերումը:

Նիդերլանդների Թագավորության օրենսդրության համաձայն՝ չգրանցված ասոցիացիան ստեղծման պահից իրավաբանական անձ է համարվում՝ որոշ բացառություններով:

Նման ասոցիացիան չի կարող անշարժ գույք ունենալ՝ որպես սեփականություն և չի կարող ժառանգություն ընդունել: Չգրանցված կամ ոչ պաշտոնական ասոցիացիայի հաջորդ առանձնահատկությունն այն է, որ վերջինիս գործադիր մարմնի անդամները համապարտ պատասխանատվություն են կրում ասոցիացիայի պարտավորությունների համար:

Նիդերլանդների թագավորության քաղաքացիական օրենսգրքի 2-րդ գրքի 285-րդ բաժնի համաձայն՝ հիմնադրամն անդամություն չունեցող իրավաբանական անձ է, որն ուղղված է համապատասխան ակտիվների օգնությամբ իր կանոնադրությամբ սահմանված նպատակի իրականացմանը: Հիմնադրամը կարող է հիմնադրվել մեկ և ավելի անձանց կողմից՝ նոտարական կարգով վավերացված հիմնադրման որոշման հիման վրա, որը կարող է նաև հանրային կամք հանդիսանալ: Հիմնադրամը հիմնադրման պահին կարող է սեփական ակտիվներ չունենալ:

Հիմնադրամը կարող է հետապնդել շատ բազմաբնույթ նպատակներ՝ միայն մեկ բացառությամբ՝ հիմնադիրներին, խորհրդի անդամներին կամ այլ անձանց շահույթի բաշխում, եթե նման վճարումը չունի գաղափարական կամ սոցիալական բնույթ:

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար Նիդերլանդների Թագավորությունում գործում է հարկային յուրօրինակ ռեժիմ: Սա, բնականաբար, անմիջական կապ ունի այդ կազմակերպությունների գործունեության բնույթի և նպատակների հետ: Այն կազմակերպությունները, որոնք հետապնդում են կրոնական, գաղափարական, բարեգործական, մշակութային, գիտական կամ հասարակական այլ նպատակներ, Նիդերլանդների Թագավորությունում միավորվում են «հանրային շահի կազմակերպություններ» եզրույթի տակ³³: Այս եզրույ-

³³ Stu' The Non-Profit Sector in the Netherlands, Working Paper, **Burger A., Dekker P.**, Sociaal en Cultureel Planbureau, Den Haag, April 2001:

թը Նիդերլանդների Թագավորության հարկային օրենսդրության բաղկացուցիչն է: Հարկային այն արտոնյալ ռեժիմը, որը կիրառվում է այս կազմակերպությունների նկատմամբ, կոչվում է «ANBI»³⁴:

Հանրային շահի կազմակերպության (այսուհետ՝ նաև «ANBI») կոչում ստանալու համար Նիդերլանդների Թագավորության օրենսդրությամբ գործունեության վայրի սահմանափակում սահմանված չէ: Նույնիսկ այն պարագայում, երբ կազմակերպության գործունեության միակ նպատակն ուղղված է որևէ օտարերկրյա պետությունում իրացվելու, այն միևնույն է կարող է ձեռք բերել հանրային շահի կազմակերպության կարգավիճակ, եթե այդ նպատակն ուղղված է կոնկրետ պետության բնակչության շահերի պաշտպանությանը: Նիդերլանդների Թագավորության օրենսդրությունը հարկային այս ռեժիմից օգտվելու հնարավորություն է ընձեռում նաև եվրոպական և սահմանված այլ երկրների կազմակերպություններին:

Իրենց նպատակների իրացման համար բռնություն կիրառող և/կամ քարոզող կազմակերպությունները չեն կարող ստանալ հանրային շահի կազմակերպության կարգավիճակ:

Հարկային այս ռեժիմը բացառում է անձնական կամ կորպորատիվ ցանկացած շահ: Եթե կազմակերպությունը ուղղակի կամ անուղղակի կերպով նպատակ ունի սահմա-

³⁴ Հոլանդերեն՝ <<algemeen nut beogende instelling>>, մանրամասն տե՛ս <<https://www.twobirds.com/en/news/articles/2014/global/tax/oct-14/netherlands-tax>>:

նափակ թվով կոնկրետ անձանց (ընտանիքի անդամներ, այլ կազմակերպության անդամներ) միջև շահույթ բաշխել, ապա նման կազմակերպության նկատմամբ չի կարող կիրառվել հարկային քննարկվող ռեժիմը³⁵: Այն կազմակերպությունները, որոնք ծառայում են ինչպես իրենց անդամների շահերի, այնպես էլ հանրային շահի համար, կարող են հարկվել «ANBI» ռեժիմով, եթե իրենց գործողությունների առնվազն կեսը ծառայում է հանրային շահին³⁶:

Եթե կազմակերպությունը բավարարում է օրենսդրությամբ սահմանված նախապայմաններին, ապա համապատասխան դիմումով կարող է դիմել Նիդերլանդների հարկային մարմիններին՝ «ANBI» կազմակերպության կարգավիճակ ստանալու համար: Կազմակերպությունը հայցվող կարգավիճակ ստանալու վերաբերյալ պաշտոնական ծանուցում է ստանում հարկային մարմիններից: Կազմակերպությունը համարվում է «ANBI» կարգավիճակ ունեցող իր հիմնադրման պահից:

«ANBI» հարկային ռեժիմի հիմնական արտոնություններն են՝

– ռեժիմն ազատում է եվրոպական երկրներում կիրառվող, այսպես կոչված, նվիրատվության հարկից (gift tax). ընդ որում կազմակերպությունն ազատվում է թե՛ նվիրատուի, թե՛ նվիրառուի դերում հանդես գալիս,

– կազմակերպության կողմից կատարված դրամաշնորհները ևս ազատվում են հարկերից, ինչը հոլանդական

³⁵ Տե՛ս Supreme Court, BNB 1983/176

³⁶ Տե՛ս Supreme Court, BNB 1994/280

հիմնադրամների համար ստեղծում է բարենպաստ դաշտ բարեգործությամբ զբաղվելու համար,

– շահութահարկ վճարվում է միայն այն դեպքում, երբ «ANBI» կազմակերպությունը ձեռնարկատիրությամբ է զբաղվում, և եթե տարեկան շահույթը գերազանցում է 15,000 եվրոն,

– ANBI կարգավիճակ ստացած կազմակերպությունները կարող են հոլանդական էլեկտրաէներգիայի հարկի հատուցում պահանջել:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայ-իտալական հարաբերությունների արմատները հասնում են 6-րդ դար, երբ Բյուզանդիայի զորավարներից Ներսեսը Ռավեննայում էր տեղակայել հայկական որոշ զորամասեր: Ըստ պատմական աղբյուրների՝ Ներսեսը, հաղթելով Իտալիա ներխուժած օստգոթերին, ֆրանկներին և ալեմաններին, նշանակվեց բյուզանդացիների կողմից նվաճված Ռավեննայի կառավարիչ (եքսարքոս): Ռավեննայի պահակազորը հիմնականում կազմված էր հայերից և կոչվում էր «Numerus Armeniorum», իսկ Ռավեննայի նավամատուցը, որտեղ բնակվում էին զինվորականները, միևնույն պատճառով կոչվում էր «Արմենիա»: Իտալիայի փոխարքաներից հայտնի է նաև Սահակ Հայկազունը, որի աճյունը հանգչում է Ռավեննայի Սուրբ Վիդալ եկեղեցում, և որտեղ նա հռչակված է որպես «Gloria dell'Armenia»՝ Հայաստանի փառք³⁷:

Հետագայում՝ 12-րդ դարի կեսին, Կիլիկիայի հայոց թագավորության հիմնադրման և խաչակրաց արշավանքների արդյունքում, Իտալիայում կազմավորվեցին հայերի համեմատաբար կայուն համայնքներ, երկրի ինը տարբեր քաղաքներում սկսեցին գործել տասից ավելի հայկական եկեղեցիներ³⁸:

Իտալիայի Հանրապետության ներկայիս հայ համայն-

³⁷ Տե՛ս <http://italy.mfa.am/hy/community-overview-it/>

³⁸ Տե՛ս նույն տեղում:

քը սակավաթիվ է, սակայն բավական արդյունավետ ազգային-մշակութային գործունեություն է ծավալում և մեծ նշանակություն ունի հայ սփյուռքի կյանքում:

Հայապահպանության և հայ-իտալական հարաբերությունների զարգացման նպատակով՝ ներկայիս հայ համայնքի ձևավորմանը համընթաց Իտալիայում հիմնվեցին և առ այսօր գործում են տարատեսակ կազմակերպություններ՝ բարեգործական, մշակութային, երիտասարդական և այլն:

Այսօր Իտալիայի հայ համայնքը ներկայացնում է շուրջ քսան հասարակական կազմակերպություններ, որոնցից առավել աչքի ընկնող գործունեություն են իրականացնում Միլանի «Իտալիայի հայոց միությունը», «Իտալիայի հայ մշակութային միությունը», Վենետիկի «Պո-Արաքս» մշակութային ընկերությունը և «Հայ մշակույթի ուսումնասիրման ու վավերագրման կենտրոնը», Հռոմի «Զատիկ»-ը:

Ինչպես վերը նշեցինք, Իտալիայի Հանրապետությունում հայ համայնքներն ունեն հասարակական կազմակերպությունների կարգավիճակ: Հետևաբար՝ վերջիններիս իրավական կարգավիճակը նույնանում է իտալական հասարակական կազմակերպությունների կարգավիճակի հետ. դրանք հիմնադրվում, համապատասխան գրանցում են ստանում և գործունեություն են ծավալում՝ իտալական ներպետական օրենսդրության համաձայն: Այսինքն՝ հայ համայնքների իրավական կարգավիճակը սահմանվում է բացառապես Իտալիայի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով:

Սույն բաժնում անդրադարձ կատարենք իտալական

օրենսդրության այն հատվածին, որն ընդհանուր առմամբ սահմանում է Իտալիայի Հանրապետության՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների իրավական կարգավիճակը և կարգավորում է տվյալ ոլորտում առաջացող իրավահարաբերությունները:

Այս ոլորտը կարգավորող հիմնական աղբյուրներն են՝ Իտալիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, Իտալիայի Հանրապետության նախագահի՝ 10.02.2000 թ. թիվ 361 հրամանագիրը՝ «Պետության կողմից իրավաբանական անձանց ճանաչման կարգը սահմանելու մասին», Իտալիայի Հանրապետության նախագահի՝ 22.12.1986 թ. թիվ 917 հրամանագիրը՝ «Շահութահարկի մասին», Իտալիայի Հանրապետության նախագահի՝ 29.09.1973 թ. թիվ 601 հրամանագրի 6-րդ հոդվածը, որը հարկային դաշտում հատուկ կարգավիճակ է սահմանում շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար, 04.12.1997 թ. թիվ 460 օրենսդրական որոշումը, որը հարկային հատուկ կարգավիճակ է սահմանում հասարակական ուղղվածություն ունեցող շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար (ONLUS Decree) և 06.06.2016 թ. թիվ 106 օրենքը՝ «Երրորդ ոլորտի բարեփոխումների մասին» (Third Sector Reform Law), ինչպես նաև Իտալիայի Հանրապետության Սահմանադրությունը, որի 18-րդ հոդվածը հռչակում է յուրաքանչյուրի իրավունքը՝ ազատորեն հիմնադրելու ցանկացած ասոցիացիա, որի գործունեության նպատակը

չի հակասում օրենքին³⁹:

Իտալական օրենսդրության համաձայն՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններն են ասոցիացիաները, հիմնադրամները, կոմիտեները, կոոպերատիվները, հասարակական ձեռնարկությունները: Օրենսդրական վերջին կարգավորումների արդյունքում այս կազմակերպությունները միավորվեցին «Երրորդ ոլորտ» ընդհանրական եզրույթի տակ: «Երրորդ ոլորտի բարեփոխման մասին» ակտի համատեքստում՝ երրորդ ոլորտը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների ամբողջություն է, որոնք հետապնդում են քաղաքացիական, հասարակական կամ համերաշխության նպատակներ⁴⁰:

Իտալիայի հայ համայնքները հիմնականում հանդես են գալիս ասոցիացիաների և հիմնադրամների տեսքով, որոնց իրավական կարգավիճակը կներկայացնենք ստորև:

Ասոցիացիան առնվազն երկու անձանց կողմից հիմնադրված հասարակական միավորում է՝ միասնական ավտրուիստական կամ գաղափարախոսական նպատակի շուրջ: Իտալիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը ասոցիացիաները բաժանում է երկու տեսակի՝ ճանաչված (*associazione riconosciuta*)՝ **իրավասու պետական մարմնի կողմից ճանաչված և իրավաբանական անձանց ռեգիստրում գրանցված**, և չճանաչված (*associazione*

³⁹ Տե՛ս The Constitution of the Italian Republic, <http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/italy/italy--e.htm>

⁴⁰ Տե՛ս Third Sector Reform Act

non riconosciuta), որոնք իրավաբանական անձանց ռեգիստրում գրանցված չեն և համապատասխան ճանաչում չեն ստացել պետության կողմից⁴¹: Իտալիայի ասոցիացիաների թիվը հասնում է շուրջ 300,000-ի, որոնցից 200,000-ը չճանաչված ասոցիացիաներ են⁴²:

Հարկապես հետաքրքրական է չճանաչված ասոցիացիաների իրավական կարգավիճակը: Չնայած ըստ Իտալիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ չճանաչված ասոցիացիաներն իրավաբանական անձ չեն հանդիսանում, սակայն դրանք կարող են հանդիսանալ որոշ իրավահարաբերությունների սուբյեկտներ: Օրինակ՝ չճանաչված ասոցիացիաները կարող են սեփական գույք ունենալ և պատասխանավորություն կրել դրանով, նվիրատվություն ստանալ և այլն⁴³:

Կախված գործունեության ծավալման աշխարհագրական տեղանքից՝ իրավասուբյեկտություն ստանալու համար ասոցիացիան անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում է իրավասու պետական մարմին՝ կառավարության տեղական ներկայացուցչություն (*prefettura*), կամ տեղական ինքնակառավարման մարմին:

Ճանաչված ասոցիացիա հիմնադրելու համար անհրա-

⁴¹ The Civil Code of the Italian Republic

[https://uk.practicallaw.thomsonreuters.com/7-633-2622?transitionType=Default&contextData=\(sc.Default\)&firstPage=true&bhcp=1](https://uk.practicallaw.thomsonreuters.com/7-633-2622?transitionType=Default&contextData=(sc.Default)&firstPage=true&bhcp=1)

⁴² Տե՛ս [https://uk.practicallaw.thomsonreuters.com/7-633-2622?transitionType=Default&contextData=\(sc.Default\)&firstPage=true&bhcp=1](https://uk.practicallaw.thomsonreuters.com/7-633-2622?transitionType=Default&contextData=(sc.Default)&firstPage=true&bhcp=1)

⁴³ Տե՛ս [https://uk.practicallaw.thomsonreuters.com/7-633-2622?transitionType=Default&contextData=\(sc.Default\)&firstPage=true&bhcp=1](https://uk.practicallaw.thomsonreuters.com/7-633-2622?transitionType=Default&contextData=(sc.Default)&firstPage=true&bhcp=1)

ժեշտ նախապայմաններն են՝

– ասոցիացիայի հիմնադիր փաստաթղթերը պետք է հանրային բնույթ կրեն և ստորագրվեն նույնարի կամ իրավասու պաշտոնատար անձի ներկայությամբ,

– ասոցիացիայի կանոնադրությունը նույնպես պետք է կրի հանրային բնույթ և հարկային մարմնում հաշվառում անցնի:

Հիմնադրամները, որպես կանոն, Իտալիայի Հանրապետությունում հանդես են գալիս որպես բարեգործական կազմակերպություններ:

Հիմնադրամ գրանցելու համար անհրաժեշտ է՝

– Հիմնադրման փաստաթուղթ, որը միակողմանի գործարք է և արտահայտում է հիմնադրի կամքը,

– Միակողմանի գործարք համարվող նվիրատվության պայմանագիր, որը կարգավորում է հիմնադրամի ակտիվների տեղաբաշխումը,

– Հիմնադրամի կանոնադրություն, որը պետք է հանրային բնույթ կրի և հաշվառում անցնի հարկային մարմնում:

Իտալիայի շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար հեղափոխական բնույթ ունեցավ 1997 թվականի «Հասարակական ուղղվածություն ունեցող շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների մասին» ակտի (ONLUS)⁴⁴ ընդունումը: Այս ակտը հստակություն մտցրեց շահույթ ստանալու նպատակ

⁴⁴ St'u The Act of 1997 Relating to Socially Orineted Not-for-Profit Organizations (ONLUS)

տակ չհետապնդող կազմակերպությունների կարգավորման ոլորտը և վերացրեց առկա բացերը:

«ONLUS»-ը ոչ թե շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպության կազմակերպահրավական ձև է, այլ՝ կարգավիճակ: Համապատասխան նախապայմանների առկայության պարագայում «ONLUS» կարգավիճակ ունեցող կազմակերպությունները ստանում են հարկային արտոնություններ:

Համաձայն Իտալիայի Հանրապետության «ONLUS»-ի մասին ակտի 10-րդ հոդվածի՝ «ONLUS»-ի կարգավիճակ ստանալու համար կազմակերպությունը պետք է հաշվառվի և պաշտոնական թույլտվություն ստանա Իտալիայի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից: Կազմակերպության գործունեության նպատակը պետք է լինի նշվածներից որևէ մեկը՝

- սոցիալական օգնություն և սոցիալական առողջապահություն,
- բարեգործություն,
- պատմության կամ մշակութային արժեքների պահպանություն և աջակցություն,
- բնության և շրջակա միջավայրի պահպանություն,
- հիմնադրամների, համալսարանների կամ հետազոտական կենտրոնների կողմից իրականացվող հանրային որոշակի նշանակություն ունեցող խնդիրների գիտական հետազոտություն:

Իր գործունեության ընթացքում «ONLUS»-ի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին արգելվում է իրա-

կանացնել շահույթի, ավելցուկի, ինչպես նաև կապիտալի բաշխում: Բացառություն է կազմում անուղղակի բարեգործությունը, երբ «ONLUS»-ը գումար է փոխանցում վերը հիշատակված գործունեություններից որևիցե մեկն իրականացնող կազմակերպության՝ կոնկրետ բարեգործական նպատակներով օգտագործելու համար:

«ONLUS»-ի կարգավիճակ ստանալով՝ կազմակերպությունները սկսում են ենթարկվել հարկային հատուկ ռեժիմին: «ONLUS»-ի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը կարող է իրականացնել միայն ինտրիպուցիոնալ գործունեություն՝ բացառությամբ իր առջև դրված նպատակների հետ անմիջական կապ ունեցող գործունեության (երկրորդային գործունեություն): Իտալիայի Հանրապետության հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի համաձայն՝ հարկման է ենթակա միայն կազմակերպության սեփականությունից, կապիտալից ստացված շահույթը, ինչպես նաև փարատեսակ մուտքերը: Երկրորդային գործունեությունից ստացված շահույթը պետք է չգերազանցի հաշվետու ժամանակաշրջանում կատարված ծախսերի ընդհանուր գումարի երկու երրորդը:

«ONLUS»-ի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները որոշ փարածաշրջաններում օգտվում են նաև տեղական հարկերի արտոնություններից:

Իտալիայի Հանրապետությունում գործող հասարակական կազմակերպություններից առավել աչքի է ընկնում Իտալիայի հայոց միությունը, որն իր կազմակերպարավական ձևով հանդիսանում է ճանաչված ասոցիացիա: Այն

հիմնադրվել է 1955 թվականին Միլանում՝ Իտալիայի Հանրապետության նախագահի՝ 02.04.1955 թ. թիվ 709 հրամանագրով:

Իտալիայի հայոց միությունն իր հիմնադիր ստատուտում իրեն հռչակում է հասարակական-քարոզչական կազմակերպություն⁴⁵:

Միության նպատակներն են՝

– հայկական մշակույթի տարածումն ու Իտալիայում հայկական նախաձեռնության խթանումը,

– իտալական իշխանությունների, Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների և հայկական այլ կազմակերպությունների հարաբերություններ ստեղծելը և պահպանելը,

– Իտալիայի հայերի իրավունքների պաշտպանությունը,

– Իտալիայում հայկական ռեեստրի վարումը,

– զանգվածային լրատվության միջոցներով հայ ազգի վերաբերյալ տեղեկատվության տարածումը⁴⁶:

Իտալիայի հայոց միության խնամակալությանն է հանձնված 1994 թվականին Միլանում հիմնված «Հայաստան» համահայկական հիմնադրամի իտալական կոմիտեն:

Իտալիայի Հանրապետությունում հայ համայնքների իրավական կարգավիճակի մասին խոսելիս կարծում ենք՝ անհրաժեշտություն է առաջանում անդրադարձ կատարել

⁴⁵ Տե՛ս <http://www.unionearmeni.it/statuto/>

⁴⁶ Տե՛ս <http://www.unionearmeni.it/statuto/>

նաև այդ երկրում գտնվող մեծաթիվ հայկական պատմամշակութային արժեքների և հայկական հաստատությունների տնօրինության ներքո գտնվող այլ քաղաքակրթություններին պատկանող թանկարժեք պատմամշակութային նմուշների պահպանության իրավական ռեժիմին:

Իտալիայում հայկական պատմամշակութային արժեքների վերաբերյալ հատուկ իրավական ռեժիմ գոյություն չունի, այդ իսկ պատճառով դրանց իրավական կարգավիճակի մասին պատկերացում կազմելու համար պետք է ուսումնասիրել Իտալիայում գործող պատմամշակութային արժեքների ընդհանուր իրավական ռեժիմը:

Իտալիայի հայկական պատմամշակութային ժառանգությունն են կազմում Վենետիկի Մխիթարյան միաբանությունը (1717 թ.), Հռոմում գտնվող Լևոնյան հայ վարժարանը (1883), Միլանում գտնվող Ամբրոսյան գրադարանը (1609 թ.), Վենետիկի Սուրբ Խաչ եկեղեցին, այդ հաստատություններում պահվող պատմամշակութային մեծ արժեքներ կայացնող բազմաթիվ առարկաները՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության ավելի քան 150,000 անուն գիրք, այդ թվում՝ Ղուրանի ամենահին նմուշը, հայերեն թարգմանված Ալեքսանդր Մեծի պատմությունը, ավելի քան 5000 հին ձեռագիր աշխատություններ, այդ թվում՝ մինչև 862 թ. թվագրվող հայկական ամենահին փաստաթուղթը և նույնիսկ 1 եգիպտական մումիա: Դժբախտաբար Մխիթարյան միաբանությունը վերջին ժամանակաշրջանում բավականին լուրջ ֆինանսական խնդիրների առջև է կանգնած: 1975 թվականին բռնկված հրդեհի պատճառով միաբա-

նությունը մեծ թվով պատմամշակութային արժեքներ կորցրեց, այնուհետև՝ 1980-ական առաջին կեսին, անշահավետ գործարքի պատճառով Միաբանությունը կանգնեց ֆինանսական սնանկության առջև և կորցրեց բազմաթիվ կալվածքներ⁴⁷: Չնայած հայ սփյուռքում կազմակերպված հանգանակություններին և օգնությանը՝ առ այսօր Մխիթարյան Միաբանությունը չի կարողացել վերականգնել իր ֆինանսական դրությունը:

Իտալիայում պատմամշակութային ժառանգության պաշտպանությունն ունի սահմանադրական հիմունքներ: Համաձայն Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի՝ «Իտալիայի Հանրապետությունը խթանում է մշակույթի և գիտական ու տեխնիկական հետազոտության զարգացումը: Այն պաշտպանում և պահպանում է երկրի բնությունը, ինչպես նաև պատմական ու գեղարվեստական ազգային ժառանգությունը»⁴⁸:

Իտալիայի՝ համամարդկային մշակույթի կենտրոն լինելը, թերևս պայմանավորում է պատմամշակութային ժառանգության պաշտպանության առանձնահատուկ տեղը երկրի քաղաքական ուղղությունների մեջ: Այս ոլորտի քաղաքական մշակումն իրականացվում է հատուկ մասնագիտացված մարմնի՝ Մշակութային ժառանգության և գործառնությունների նախարարության կողմից:

⁴⁷ Տե՛ս Կ. Դալլաքյան, Հայ սփյուռքի պատմություն, Երևանի Հրայր Աճառյան համալսարան, Երևան, 1998, էջ 267:

⁴⁸ Տե՛ս The Constitution of the Italian Republic, <http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/italy/italy--e.htm>

Վկայակոչված սահմանադրական դրույթի կիրառման նպատակով Իտալիայում ընդունվեցին մի շարք նորմատիվ ակտեր՝ 01.06.1939 թ. «Պատմական և գեղագիտական սեփականության վերաբերյալ» թիվ 1089 օրենքը, 29.06.1939 թ. «Լանդշաֆտի վերաբերյալ» թիվ 1497 օրենքը, 1963 թ. «Արխիվների վերաբերյալ» թիվ 1409 օրենքը, որոնք 1999 թ. համախմբվեցին «Մշակութային և շրջակա միջավայրի արժեքների վերաբերյալ օրենսդրական դրույթներ պարունակող» կոնսոլիդացված օրենքի մեջ⁴⁹:

Այնուհետև՝ 2004 թ. հունվարի 22-ին, ընդունվեց «Մշակույթի և լանդշաֆտի ժառանգության վարքականոնի մասին» թիվ 42 Դիրեկտիվը (այսուհետ՝ թիվ 42 Դիրեկտիվ կամ Դիրեկտիվ)⁵⁰, որը փոխարինելու եկավ պատմամշակութային ոլորտը կարգավորող նախկինում գործող մի շարք իրավական ակտերին և դարձավ Իտալիայի պատմամշակութային արժեքների իրավական կարգավիճակը սահմանող հիմնական իրավական ակտը:

Թիվ 42 Դիրեկտիվը պատմամշակութային արժեքների՝ բավականին լայն և ընդգրկուն սահմանում է տալիս: Այն պատմամշակութային ժառանգությունը բաժանում է մշակութային և լանդշաֆտային սեփականությունների: Դիրեկտիվի 10-րդ և 11-րդ հոդվածների համաձայն՝ մշակութային սեփականություն են հանդիսանում գեղարվեստա-

⁴⁹ St'u Legislative decree no. 490 of 29 October 1999, Consolidated Law containing the legislative provisions on cultural and environmental assets (<http://audit2.clio.it/legaldocs/italie/Italia%20web/Testo%20Unico.htm>)

⁵⁰ St'u Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage:

կան, պատմական, ազգամարդաբանական, արխիվային և մատենագիտական հետաքրքրություն ներկայացնող, ինչպես նաև քաղաքակրթական արժեք ունեցող ցանկացած անշարժ և շարժական գույք:

Դիրեկտիվի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Իտալիայի մշակութային սեփականության մեջ են մտնում նաև թանգարանների, պատկերասրահների և պետության, մարզերի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ցուցասրահների, գրադարանների հավաքածուները, արխիվները և եզակի փաստաթղթերը:

«Պատմամշակութային ժառանգություն» հասկացության մեջ ընդգրկվում է նաև մասնավոր սուբյեկտների սեփականությունը՝ մշակութային բացառիկ նշանակություն ունեցող գրքերի հավաքածուները և հատուկ պատմական նշանակություն ունեցող արխիվներն ու եզակի փաստաթղթերը, հատուկ նշանակություն ունեցող քաղաքական կամ ռազմական պատմությանը, գրականության պատմությանը, արվեստի և մշակույթի պատմությանը վերաբերող կամ անհատականության և պատմության ապացույց հանդիսացող շարժական և անշարժ գույքը, իրերի այն հավաքածուները կամ հաջորդական շարքը, որոնք իրենց ամբողջության մեջ բացառիկ գեղարվեստական կամ պատմական նշանակություն ունեն:

Ինչպես տեսնում ենք, Իտալիայի օրենսդրությամբ պատմամշակութային ժառանգություն հասկացությունը շատ լայն է սահմանվում: Պետք է նկատենք, որ այդ սահ-

մանման մեջ են ընդգրկվում նաև հայկական պատմամշակութային ժառանգության մաս կազմող մի շարք արժեքներ՝ քանի որ դժվար է չհամաձայնել, որ Վենետիկի Մխիթարյան միաբանությունը կամ Լևոնյան հայ վարժարանը իրենցից պատմական կամ գեղարվեստական հետաքրքրություն չեն ներկայացնում: Հետևաբար՝ թիվ 42 Դիրեկտիվի կարգավորման առարկայի մասն է կազմում նաև հայկական պատմամշակութային ժառանգությունը:

Դիրեկտիվն է կարգավորում նաև պատմամշակութային արժեք ներկայացնող առարկների պահպանության, օտարման և պաշտպանության կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ արգելվում է պետությանը պատկանող մշակութային ժառանգության փոխանցումը, դրանց նկատմամբ երրորդ անձանց կողմից իրավունքների ձեռքբերումը՝ բացառությամբ թիվ 42 Դիրեկտիվով ուղղակիորեն նախատեսված դեպքերի: Բացի այդ, Դիրեկտիվի 54-րդ հոդվածը սահմանում է այն պատմամշակութային արժեքների ցանկը, որոնց օտարումը ընդհանրապես արգելվում է: Մասնավորապես, այդպիսի արժեքներ են հնէաբանական հետաքրքրություն ներկայացնող շինությունները և տարածքները, ազգային հուշարձաններ ճանաչված շինությունները, թանգարանների, արվեստի սրահների, պատկերասրահների, գրադարանների հավաքածուները, արխիվները, պետությանը, մարզերին, տարածքային կառավարման մարմիններին, հանրային իշխանություն կրող այլ մարմիններին ու հաստատություններին և

ոչ առևտրային կազմակերպություններին պատկանող շարժական և անշարժ գույքը, որոնք հանդիսանում են մահացած արվեստագետների աշխատանքներ և ունեն ավելի քան 50 տարվա ստեղծման վաղեմություն, կենդանի արվեստագետների աշխատանքները, որոնք ունեն ավելի քան 50 տարվա ստեղծման վաղեմություն, եթե դրանք ներառված են Դիրեկտիվի 53-րդ հոդվածով սահմանված սուբյեկտներին (պետություն, շրջաններ և կառավարման տարածաշրջանային մարմիններ) պատկանող հավաքածուներում, Դիրեկտիվի 53-րդ հոդվածում սահմանված սուբյեկտներին պատկանող եզակի փաստաթղթերը, ինչպես նաև այդ հոդվածի մեջ չմտնող կառավարման մարմիններին և հաստատություններին պատկանող արխիվներն ու եզակի փաստաթղթերը և 53-րդ հոդվածում սահմանված սուբյեկտներին պատկանող անշարժ գույքը, որոնք ճանաչվել են որոշակի հետաքրքրություն ներկայացնող: Այս հոդվածում նշված պատմամշակութային արժեքների օտարումը թույլատրվում է միայն պետության, շրջանների և տարածքային կառավարման այլ մարմինների միջև:

Թիվ 42 Դիրեկտիվի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետությանը պատկանող և թիվ 42 Դիրեկտիվի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում չնախատեսված անշարժ գույք հանդիսացող մյուս պատմամշակութային արժեքները կարող են օտարվել միայն Նախարարության թույլտվությամբ: Օտարման թույլտվությունը կարող է տրվել միայն այն դեպքում, երբ օտարումը երաշխավորում է պատմամշակութային արժեքի պաշտպանությունն ու բա-

րելավումը, որևէ կերպ չի խոչընդոտում հանրային օգտագործմանը, իսկ օգտագործումը համապատասխանում է շինությունների պատմական և գեղագիտական բնույթին և վնաս չի պատճառում դրանց պահպանությանը:

Քննարկվող համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ Իտալիայի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանությանը պատկանող պատմամշակութային արժեքների օտարմանը: Վերջինս, հանդիսանալով շահույթ ստանալու նպատակ չհետապնդող միավորում՝ ընդգրկվում է թիվ 42 Դիրեկտիվի 56-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի «բ» ենթակետով սահմանված սուբյեկտների ցանկում և, հետևաբար, նախքան որևէ պատմամշակութային արժեք օտարելը պետք է ստանա Նախարարության թույլտվությունը: Այսպիսի օրենսդրական կարգավորումը նվազագույնի է հասցնում ինչպես Մխիթարյան միաբանությունում, այնպես էլ Իտալիայում գտնվող հայկական այլ պատմամշակութային հաստատություններում առկա շարժական պատմամշակութային արժեքների օտարման հնարավորությունը, քանի որ դրա իրականացումը կախվածության մեջ է դնում նախարարության հայեցողությունից:

Իտալիայի պատմամշակութային ժառանգության պաշտպանության նպատակով ձևավորված է բավականին հարուստ օրենսդրական բազա, որի կարգավորման առարկայի մեջ անխոս ներառված է նաև հայկական պատմամշակութային ժառանգությունը: Դժբախտաբար, ներկայումս իտալական պետության սահմանների ներսում գտնվող, սակայն հայկական ծագում ունեցող պատմամշա-

կութային արժեքներն անմիջականորեն կապված են իտալական պետության և ժողովրդի հետ: Այդ կապն առաջին հերթին արտահայտվում է «պատմամշակութային ժառանգություն» հասկացության օրենսդրական լայն մեկնաբանմամբ և դրա մեջ ամենաբազմապիսի պատմամշակութային արժեքներ ներառելով:

Ինչպես կարելի է եզրակացնել վերը ներկայացված իրավական ակտի մեկնաբանումից՝ հայկական պատմամշակութային արժեքները Իտալիայից արտահանելու, դրանք օտարելու, տեղաշարժելու և այլ հարաբերությունների կապակցությամբ գործում են խիստ օրենսդրական կարգավորումներ, պետական վերահսկողություն, որոնք գրեթե զրոյի են հասցնում դրանց վերադարձը պատմական հայրենիք: Սակայն մյուս կողմից էլ՝ հայրենիքից դուրս գտնվող հայկական պատմամշակութային ժառանգությունը օրենսդրական մակարդակով պաշտպանված է հնարավոր ոտնձգություններից⁵¹:

⁵¹ Սույն բաժնում ներկայացված նյութն առավել մանրամասն տե՛ս «Արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը», հետազոտական աշխատանք, Ա. Սարգսյան, Լ. Միրզոյան, ՀՀ Սփյուռքի նախարարություն, Երևան, 2010, 168 էջ:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Ամերիկայի Միացյալ Նահանգների պատմությունը և այլ ազգերի համար ցանկալի թիրախ հանդիսանալը կարծես ստիպողաբար ձևավորեցին վերջինիս քաղաքականության հիմնադրույթները այլ պետությունների սփյուռքի համայնքների հետ հարաբերություններում: Չնայած գործադրվող պետական ճնշումներին՝ ԱՄՆ պատմության ակունքներից մինչ այսօր տարբեր էթնիկ խմբեր ունեցել են որոշակի ազդեցություն այդ երկրի արտաքին քաղաքականության վրա⁵²:

Առաջին համաշխարհային պատերազմի, այնուհետև սառը պատերազմի ավարտն ու խորհրդային կարգերի փլուզման ժամանակ ԱՄՆ դերակատարման միջազգայնացման գործընթացը խթան հանդիսացան ԱՄՆ ներգաղթած ազգային փոքրամասնությունների էթնիկական ինքնագիտակցության ձևավորման և վերելքի համար, ինչպես նաև զգալիորեն պայմանավորեցին տեղի էթնիկ խմբերի հետ փոխհարաբերությունները և նպաստեցին վերջիններիս դերի ակտիվացմանը երկրի արտաքին քաղաքականության հարցերում⁵³:

Հայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայտն-

⁵² Տե՛ս Thomas Ambrosio, "Ethnic Identity Groups and U.S. Foreign Policy", Printed in the United States of America, 2002.

⁵³ Տե՛ս Thomas Ambrosio, "Ethnic Identity Groups and U.S. Foreign Policy", Printed in the United States of America, 2002.

վել են դեռևս 17-րդ դարի առաջին կեսին, երբ 1618 թվականին Մարտին Հայը տեղափոխվեց Ջեյմսթաուն, Վիրջինիա նահանգ: Սակայն ԱՄՆ հայ համայնքը ներկայիս իմաստով սկսել է ձևավորվել 1890-ական թվականներից հետո՝ մեծամասամբ Օսմանյան կայսրության սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կազմակերպած հայկական կոտորածների մազապուրծներից:

Հայերի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ ներգաղթի հաջորդ խոշոր հոսքը եղավ 1915 թ. Մեծ եղեռնից հետո: Հայտնի է, որ 1920-1924 թվականներին ԱՄՆ է գաղթել շուրջ 21 հազար հայ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայերի ներհոսքը Ամերիկայի Միացյալ Նահանգներ դանդաղել էր: Սակայն, երբ 1960-1970-ական թվականներին Մերձավոր Արևելքում պատերազմի և բռնության ալիք բարձրացավ, հայերը հիմնականում սկսեցին հաստատվել Լոս Անջելեսում, որտեղ արդեն իսկ կար ձևավորված հայ համայնք:

Այնուհետև Պարսկական հեղափոխությունը և Իրան-Իրաքյան պատերազմի բռնկումը հանգեցրեցին մեծ թվով պարսկահայերի ներգաղթին ԱՄՆ, որոնք բնականաբար միանգամայն այլ դիալեկտ կրող էին:

Ավելի ուշ՝ 1980-ական թվականների վերջին, երբ Խորհրդային Միությունը թուլացրել էր իր հսկողությունը արտագաղթի նկատմամբ, Խորհրդային Հայաստանը լքեցին Բուլղարիայից, Ռումինիայից, Մերձավոր Արևելքից Հայաստան հայրենադարձածները: Հենց սա էլ սկիզբ դրեց

Լոս Անջելեսի հայ համայնքի՝ Արևելյան կամ Ռուսական մասի ստեղծմանը:

Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունը լքած հայերի խումբն էլ հանդիսացավ ԱՄՆ ներգաղթածների հաջորդ խոշոր ավի-քը:

Այդ ժամանակից ի վեր ներգաղթը Ամերիկայի Միացյալ Նահանգներ շարունակվում է ցայսօր:

Ամերիկայի Միացյալ Նահանգներն աշխարհի հայաշատ պետությունների շարքում երրորդ տեղն է զբաղեցնում՝ զիջելով միայն Հայաստանի Հանրապետությանը և Ռուսաստանի Դաշնությանը: Չնայած ամերիկաբնակ հայերի հստակ թիվը հայտնի չէ, սակայն, ըստ գոյություն ունեցող տվյալների, այն հասնում է շուրջ երկու միլիոնի:

Հայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներում հիմնականում կենտրոնացած են Կալիֆորնիայում, Մասաչուսեթսում, Նյու Յորքում, Նյու Ջերսիում, Ռոդ Այլենդում, Միչիգանում, Ֆլորիդայում, Փենսիլվանիայում, Օհայոյում, Վիրջինիայում և այլն:

Վերը նշված փաստերի հիման վրա կարելի է պարզ պատկերացնել, թե ԱՄՆ հայ համայնքը որքան բազմատարր է: Գաղթի պատճառների, ժամանակաշրջանի, օգտագործվող լեզվի բազմազանությունը, ինչպես նաև տարբեր մշակույթներ կրելը, թերևս, հիմնավոր պատճառ կարող են հանդիսանալ համայնքի ներսում օբյեկտիվ տարանջատվածություն ունենալու համար:

Ինչպես արդեն նշեցինք, սույն աշխատության հետա-

զոտությունների առանցքը հայ համայնքների իրավական կարգավիճակն է, հետևաբար՝ «սփյուռք» հասկացությունն այս կոնտեքստում դիտարկվում է առավել նեղ իմաստով՝ նույնականացվելով ազգային-մշակութային կազմակերպությունների հետ: Համայնքին իրավական կարգավիճակ շնորհելու համար առավել ընդունված է գրականության մեջ հանդիպող, այսպես կոչված, «համայնքային» հասարակական կազմակերպություններ հիմնադրելը⁵⁴: Ակնհայտ է, որ զուտ նեղ, իրավական տեսանկյունից սփյուռքի դիտարկումը թերի է այն առումով, որ ցանկացած միավորում, պետական գրանցում չունենալով հանդերձ, կարող է շատ ակտիվ զբաղվել համայնքի խնդիրներով, ներգրավված լինել համայնքի կյանքին, զբաղվել համայնքի ներկայացուցիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ, և ընդհակառակը՝ կազմակերպությունը կարող է ունենալ համապատասխան իրավական կարգավիճակ, սակայն իր գործունեությունը զուտ ձևական բնույթ կրի, չվայելի համապատասխան սփյուռքի ներկայացուցիչների վստահությունը:

Այնուամենայնիվ, հետազոտվող հայ համայնքները կարող են պետության հետ իրավահարաբերությունների մեջ մտնել և դրանց լիիրավ սուբյեկտ դառնալ միմիայն պետության կողմից համապատասխան կարգավիճակ ստանալուց հետո, այն է՝ հասարակական կազմակերպություն հիմնադրելուց և համապատասխան կարգով գրանցվելուց հետո:

Ամերիկայի Միացյալ Նահանգները նույնպես բացա-

⁵⁴ Տե՛ս <https://cyberleninka.ru/article/v/sotsialno-pravovoy-status-diaspory-v-sovremennom-rossiyskom-obschestve-regionalnyy-rakurs>

ռություն չէ այս տեսանկյունից. այստեղ ևս հայ համայնքի իրավական կարգավիճակը սահմանափակվում է հասարակական կազմակերպություններին հատուկ իրավական կարգավիճակով: Իրենց գործունեությամբ առավել աչքի են ընկնում բարեգործական և լոբբինգով զբաղվող հայ կազմակերպությունները, որոնց կանդիդատնանք ստորև:

Ընդհանուր առմամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ որպես ժողովրդավարական պետության, քաղաքականությունը հասարակական կազմակերպությունների նկատմամբ բավականին թույլատրող բնույթ է կրում, ինչը, սակայն, չի ենթադրում համապատասխան իրավական կարգավորումների բացակայություն: Ցանկացած շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն գրանցելու չափանիշները դաշնային մակարդակում բավականին պարզ են սահմանված: Ավելին, Ամերիկայի Միացյալ Նահանգները հիմնականում խտրականություն չի դնում նույնիսկ օտարերկրյա և ազգային հասարակական կազմակերպությունների միջև՝ որոշ բացառություններով (խոսքը հիմնականում պաշտոնական լոբբինգ իրականացնելու իրավունքի և լրացուցիչ հաշվետվողականության մասին է)⁵⁵:

Ամերիկայի Միացյալ Նահանգների հասարակական կազմակերպությունների՝ իրավական կարգավորման հիմնական աղբյուրը համարվում է 1986 թվականի ներքին շա-

⁵⁵ St' u Elizabeth A. Bloodgood, Joannie Tremblay-Boire, Aseem Prakash, "National Styles of NGO Regulation", Nonprofit and Voluntary Sector Quarterly, 2014, Vol. 43(4) 716-736

հույթի օրենսգրքի (Internal Revenue Code of 1986) 501(c) բաժինը⁵⁶, որը շահույթ չհետապնդող կազմակերպությունները տարանջատում է բարեգործական կազմակերպությունների և այլ կազմակերպությունների: Բարեգործական կազմակերպությունները, որոնք հայտնի են որպես 501(c)(3) տիպի կազմակերպություններ, պետության կողմից ստանում են առավել առատաձեռն հարկային արտոնություններ, սակայն չեն կարող լինել որևէ քաղաքական կուսակցության անդամ, մասնակցել քաղաքական քարոզարշավներին, աջակցություն ցուցաբերել թեկնածուներին, նվիրատվություն կատարել նախընտրական քարոզարշավների համար և այլն:

ԱՄՆ օրենսդրությունը, սակայն, բարեգործական կազմակերպություններին չի արգելում զբաղվել լրբբիստական գործունեությամբ, այսինքն՝ ազդեցություն ունենալ ներպետական օրենսդրության վրա: Այնուամենայնիվ, չի թույլատրվում, որպեսզի բարեգործական կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունը լինի լրբբին:

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ կազմակերպությունների (501(c)(4), (c)(5), (c)(6))՝ քաղաքական գործընթացներին մասնակցության օրենսդրական կարգավորումներն ավելի թույլատրող են՝ համապատասխան հաշվետվողականության առկայության, ինչպես նաև այն պայմանով, որ քաղաքականությունը իրենց գործունեության

⁵⁶ Տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսգրքի 26-րդ բաժինը (The Code of Laws of the United States of America), <<https://www.law.cornell.edu/uscode/text>>

հիմնական ուղղությունը չպետք է լինի⁵⁷: Ավելին, հասարակական կազմակերպություններն իրենց գործունեության հիմնական նպատակի հետ անմիջական կապ ունեցող լոբբիստական անսահմանափակ գործունեություն իրականացնելու իրավունք ունեն: «Լոբբիստական գործունեության բացահայտման մասին» ԱՄՆ օրենքի համաձայն՝ լոբբիստական գործունեություն իրականացնելու համար լոբբիստները գրանցվում են Սենատի և Ներկայացուցիչների պալատի քարտուղարություններում, հարկվում են և տարեկան հաշվետվություններ են ներկայացնում իրենց կատարած ծախսերի վերաբերյալ⁵⁸:

Հետաքրքրական է, որ հասարակական կազմակերպությունները ԱՄՆ-ի օրենսդրական և դատական իշխանությունների համակարգում բավական ազդեցիկ դեր ունեն՝ թե՛ դաշնային, թե՛ նահանգային մակարդակներում: Այդ իսկ պատճառով հասարակական կազմակերպությունների իրավակարգավորումները խստացնելու պետության փորձերը դեռևս հաջողությամբ չեն ավարտվում⁵⁹:

Միացյալ Նահանգների հայության համայնքային կյանքի կազմակերպման ու համակարգման առաջին լուրջ աշխատանքներն իրականացվել են 19-րդ դարի վերջերից, երբ ԱՄՆ արտագաղթած հայությունն արդեն սկսել էր ներկայանալ որպես համայնք:

⁵⁷ Տե՛ս <https://www.irs.gov/charities/article/0,,id=163393,00.html>

⁵⁸ Տե՛ս Lobbying Disclosure Act of 1995, sections 3-5:

⁵⁹ Տե՛ս **Elizabeth A. Bloodgood, Joannie Tremblay-Boire, Aseem Prakash**, “National Styles of NGO Regulation”, *Nonprofit and Voluntary Sector Quarterly*, 2014, Vol. 43(4) 716-736:

Ազգային կյանքը կազմակերպելու, հայրենակիցներին համախմբելու և օգնելու նպատակով ստեղծված և պետական գրանցում ստացած առաջին կազմակերպությունը 1886 թվականին Նյու Յորքում հիմնադրված **Հայկական միությունն էր**: Կազմակերպության նպատակը «ամերիկաբնակ հայոց մէջ միութեան կապ հաստատել, ազգային զգացումներ մշակել և ազգօգուտ ձեռնարկներ ընել» էր⁶⁰: Միության գործունեության շնորհիվ ԱՄՆ-ում ապաստանած հայ գաղթականները հնարավորություն են ստացել միմյանց հետ ծանոթանալու և մայրենի լեզվով շփվելու: Միությունը կարևոր դեր է կատարել ԱՄՆ-ում աստիճանաբար ստվարացող հայությանը ծուլման վտանգից զերծ պահելու, նրանց ազգային ինքնագիտակցությունը պահպանելու գործում:

Հայապահպան և միավորման նպատակով Հայկական միությունից հետո ստեղծվել և գործել են բազմաթիվ կազմակերպություններ:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայ համայնքի իրավական կարգավիճակին անդրադարձ կատարելիս անհրաժեշտ է հիշատակել հայկական լրբբիզմը, որը 20-րդ դարի երկրորդ կեսից առ այսօր ակտիվ գործունեություն է ծավալում:

Լոբբինգը քաղաքական համակարգի յուրահատուկ ինստիտուտ է, որը մասնավոր ու հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների, արհ-

⁶⁰ Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 2003:

միությունների և այլ կազմակերպությունների ներազդեցության մեխանիզմ է տվյալ պետության օրենսդիր և գործադիր մարմինների՝ իրավական ակտերի ընդունման գործընթացի վրա⁶¹:

Լոբբիստները, որպես կանոն, բարձրակարգ մասնագետներ են, որոնք որպես այդպիսին միջնորդի դեր են իրականացնում որոշակի շահ հետապնդող խմբերի և քաղաքական գործիչների, իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների միջև՝ դրանով իսկ զգալի ազդեցություն ունենալով տվյալ երկրի ներքին ու արտաքին քաղաքականության վրա: Այս տեսանկյունից լոբբինգը էական ազդեցություն ունի նաև տվյալ պետության ժողովրդավարության վրա և դրա կարևոր ցուցիչներից է հանդիսանում:

Տեսության համաձայն՝ հարևան պետությունների հետ խնդիրներ ունեցող երկրներից արտագաղթածները, որոնց թվում են նաև հայերը, առավել ակտիվ են իրականացնում լոբբիստական գործունեություն՝ ի շահ իրենց հայրենիքի, քան առավել բարենպաստ պայմաններով երկրներից գաղթածները: Նրանք առավել ուժեղ քաղաքականացված լոբբի են ձևավորում և աջակցություն են գտնում ԱՄՆ քաղաքական էլիտաների կողմից⁶²:

Էթնիկ լոբբիստական խմբերն ԱՄՆ քաղաքականության վրա ներազդում են մի քանի փուլով՝ նախ ձևավորում

⁶¹ Տե՛ս **Kathryn Allamong Jacob**, "King of the Lobby", The Johns Hopkins University Press, 2010:

⁶² Տե՛ս Հայ համայնքն ԱՄՆ-ում, - Եր.: «Նորավանք» ԳԿԸ, 2010, էջ 85:

են հիմնախնդրի հայեցակարգը, այնուհետև մեծածավալ աշխատանքներ են կատարում՝ օրենսդիր և գործադիր իշխանություններին տվյալ հիմնախնդրի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական և քաղաքական վերլուծություն տրամադրելու ուղղությամբ: Ներագրման վերջին՝ մոնիթորինգի փուլում, էթնիկ խմբերը մանրամասն մոնիթորինգի են ենթարկում տվյալ հարցի առնչությամբ կառավարության քաղաքականությունը և, ըստ անհրաժեշտության, կատարում են հավելյալ տեղեկատվության սփռում, կազմակերպում են նամակագրական արշավներ, ընտրարշավներում աջակցում են որևէ թեկնածուին և այլն⁶³:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող էթնիկ լոբբիստական խմբերի գործունեությունն իր մեջ ներառում է՝

- իրենց հուզող հիմնահարցերի վերաբերյալ հնարավորինս ամբողջական տեղեկատվության մատակարարում ԱՄՆ կոնգրես և կառավարություն,
- կոնգրեսի որոշումների և օրինագծերի մշակման գործընթացում հնարավորինս ակտիվ մասնակցություն,
- ԱՄՆ հասարակական կարծիքի ձևավորման նպատակով ակտիվ քարոզչական գործունեություն՝ նաև լրատվամիջոցների օգնությամբ,
- նախընտրական քարոզարշավների ժամանակ «սեփական» թեկնածուների ֆինանսական և քաղաքական աջակցություն:

⁶³ Տե՛ս նույն տեղում:

Չնայած՝ Միացյալ Նահանգներում հայկական լրբբին ըստ էության սկսել էր սաղմնավորվել այդ երկիր արտագաղթած հայության ինքնակազմակերպմանը համընթաց, սակայն, որպես արդեն կայացած համայնքային համակարգ այն հանրությանը ներկայացավ 20-րդ դարի երկրորդ կեսերից, երբ հայության շահերը պաշտպանող լրբբիստական խմբերի և կազմակերպությունների ստեղծման հարցը առաջնային էր՝ ԱՄՆ իշխանությունների ուշադրությունը գրավելու, հայության խնդիրների բարձրաձայնման և համապատասխան որոշումների կայացման համար⁶⁴:

Խորհրդային Միության փլուզումը՝ առաջին հերթին, Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումը, այնուհետև՝ Արցախյան պատերազմը, ոչ միայն առավել արդիական դարձրեցին ԱՄՆ հայկական լրբբիստական գործունեությունը, այլև հայաստանաբնակ հայության հետ համագործակցության նոր ուղիներ բացեցին:

ԱՄՆ հայկական լրբբին բարձրացնում և ընթացք է տալիս համայն հայության համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի հարցերին, ինչպիսիք են Արցախի միջազգային ճանաչումն և կարգավիճակը, Հայոց Եղեռնի ճանաչմանը և իրավական հետևանքներին առնչվող խնդիրները, ԱՄՆ կառավարության կողմից ՀՀ-ին ու ԼՂՀ-ին ցուցաբերվող ֆինանսական աջակցության հատկացման ապահովումը: Հայկական լրբբինգն ակտիվ գործունեություն է ծավալել Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ՀՀ

⁶⁴ Տե՛ս նույն տեղում:

տնտեսական և քաղաքական շրջափակման վերացման, այդ համատեքստում ԱՄՆ կառավարության կողմից Ադրբեջանին ցուցաբերվող տարեկան ֆինանսական աջակցության սահմանափակման («Ազատության աջակցման մասին ակտի» 907-րդ բանաձև)⁶⁵:

Անդրադարձ կատարենք ԱՄՆ հայկական լոբբիի մի քանի ակտիվ ներկայացուցիչ-կազմակերպություններին:

ԱՄՆ հայ ազգային կոմիտեն (Armenian National Committee of America, ANCA) ԱՄՆ հայության խոշոր և ազդեցիկ լոբբիստական կազմակերպություններից է:

1918 թվականին՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, Վաշինգտոնում Օսմանյան կայսրության հյուպատոս Վահան Քարդաշյանը հիմնադրեց Անկախ Հայաստանի ամերիկյան կոմիտեն (Armenian Committee of Independent Armenia, ACIA), որն էլ հանդիսացավ ներկայիս ANCA-ի իրավանախորդը:

ԱՄՆ հայ ազգային կոմիտեի գործունեության հիմնական նպատակներից են՝

- հասարակության տեղեկացվածության խթանումը՝ ի շահ ազատ, միացյալ և անկախ ՀՀ-ին աջակցման,
- ԱՄՆ քաղաքականության ուղղորդումը՝ կապված ԱՄՆ հայության շահերի հետ,
- ԱՄՆ պետական քաղաքականության հարցերի վերաբերյալ ԱՄՆ հայության համընդհանուր մոտեցումներն ընտրողների ու պաշտոնյաների փոխհարաբերություններ-

⁶⁵ Տե՛ս Freedom Support Act of 1992

րում ներկայացնելը⁶⁶:

Ի թիվս ավանդաբար ձևավորված և հայության համար հիրավի մեծ արժեք ներկայացնող խնդիրների՝ ԱՄՆ հայ ազգային կոմիտեն 1990-ական թվականների սկզբներից ակտիվ մասնակցություն է ցուցաբերել նաև Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևի պաշտպանության գործընթացներում⁶⁷:

Մեծ նշանակություն ունի ԱՄՆ հայ ազգային կոմիտեի ակտիվ ներգրավվածությունը ԱՄՆ ընտրական գործընթացներում՝ ինչպես տեղական, այնպես էլ նահանգային ու դաշնային մակարդակներով: Կոմիտեն տեղեկատվություն և ուսուցողական-ճանաչողական գործունեություն է ծավալում ընտրված պաշտոնյաների հետ ԱՄՆ հայությանը վերաբերող հարցերի շուրջ, ինչպես նաև ապահովում է տեղի հայությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ԱՄՆ հայության և հայկական շահերին վերաբերող հարցերին այս կամ այն թեկնածուի մոտեցումների վերաբերյալ⁶⁸: Հանձնախումբը լրբբիստական գործունեություն է ծավալում ինչպես ԱՄՆ պետական ու կոնգրեսական շրջանակներում, այնպես էլ պետքարտուղարության պաշտոնյաների շրջանում: Հանձնախմբի Լոս Անջելեսի գրասենյակն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանում մարդու իրավունքների ու ցեղասպանության առարկաների դասավանդման օրինագծի վավերաց-

⁶⁶ Տե՛ս <https://anca.org/about-anca/profile/>

⁶⁷ Տե՛ս Freedom Support Act of 1992

⁶⁸ Տե՛ս <https://anca.org/about-anca/profile/>

ման (1985 թ.), ինչպես նաև նահանգային կրթական ծրագրում հայերի դեմ իրականացված ցեղասպանության հիշատակման (1988 թ.) գործում:

Հայկական ազգային կոմիտե քաղաքական գործողությունների հանձնաժողով (The Armenian National Committee-Political Action Committee-ANC-PAC). «Հայկական ազգային կոմիտե» քաղաքական գործողությունների հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունը և նպատակը Կոնգրեսի՝ հայանպաստ դիրքորոշում ունեցող անդամների ընտրարշավներին աջակցելն է: Հանձնաժողովն ակտիվ գործունեություն է իրականացնում նաև ընտրարշավների հանձնաժողովներին (campaign committees) ֆինանսական հատկացումներ տրամադրելու ուղղությամբ⁶⁹:

Հանձնաժողովն ապահովում է հայերի քաղաքական ներգրավվածությունը, քվեարկողների ակտիվ մասնակցությունը ԱՄՆ կոնգրեսի ընտրություններին՝ բնականաբար ի պատասխան ակնկալելով հայերի խնդիրների լուծում և շահերի պաշտպանություն: Հանձնաժողովը ներգրավված է ԱՄՆ Կոնգրեսի և Սպիտակ տան քաղաքական գործընթացներում:

Հանձնաժողովը զգալի լրբբիստական գործունեություն է կատարում նաև Հայոց ցեղասպանության ճանաչման, ԱՄՆ-ՀՀ տնտեսական կապերի ամրապնդման ու ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության գործընթացներին:

⁶⁹ Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, «Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Հայ դատի հանձնախումբ», Երևան, 2003 թ.:

Ամերիկայի հայկական համագումարը (Armenian Assembly of America) հիմնադրվել է 1972 թվականին Վաշինգտոնում՝ ձեռնարկատերեր Ստեփան Մուկարի ու Հրայր Հովնանյանի, ինժեներ Լիոնել Գալստյանի, իրավաբաններ Ռոբերտ Մրամ Գալուստյանի ու Հայկ Տեր-Մանուելյանի, գիտնականներ Զան Հաննեսյան Կրտսերի, Հայկազ Գրիգորյանի և Ռիչարդ Հովհաննիսյանի կողմից⁷⁰:

Ամերիկայի հայկական համագումարի առաքելությունն է՝

1. պահպանել և ավելի ուժեղացնել Ամերիկայի հայկական համագումարի՝ որպես Ամերիկայի Միացյալ Նահանգների հայության շահերը պաշտպանող առաջատար հաստատություն համարվող կազմակերպության ներուժը,

2. դաշնային, նահանգային և տեղական մակարդակներում խթանել և ապահովել ամերիկահայ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների առավել ակտիվ մասնակցությունը ԱՄՆ ժողովրդավարական գործընթացներին,

3. զարգացնել և ընդլայնել կազմակերպության առաջադեմ հետազոտական, կրթական ու խորհրդատվական գործունեությունը՝ ուղղված Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի աջակցման աշխատանքներին,

4. հիմք ընդունելով ժողովրդավարության, օրենքի գերակայության, ազատ շուկայական հարաբերությունների,

⁷⁰ Տե՛ս <https://armenian-assembly.org/about/>

տարածաշրջանային անվտանգության տեսլականը՝ ամրապնդել և հզորացնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ-Հայաստանի Հանրապետություն և Ամերիկայի Միացյալ Նահանգներ-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հարաբերությունները,

5. աջակցություն ցուցաբերել ոչ միայն Ամերիկայի Միացյալ Նահանգների, այլևայլ պետություններում գործող հայկական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացմանը,

6. խրախուսել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զարգացումը՝ ուղղված ազատ շուկայական հարաբերություններ ունենալուն,

7. ընդլայնել կազմակերպության աշխատակազմը և կամավորների ցանկը՝ ի բարօրություն Համագումարի առաքելության և տեսլականի⁷¹:

Ամերիկայի հայկական համագումարի լրբբիստական ակտիվ գործունեության արդյունքում ԱՄՆ կոնգրեսում հիմնվեց Հայկական հարցերին նվիրված կոնգրեսական հանձնախումբը (Congressional Caucus on Armenian Issues)՝ գործող խոշոր էթնիկ լրբբիստական ինստիտուտներից մեկը:

Հատկանշական է, որ իր առջև դրված նպատակներն առավելագույնս կյանքի կոչելու նպատակով Ամերիկայի հայկական համագումարը 1988 թ. բացեց իր առաջին մշտական Արևմտյան գրասենյակը Երևանում:

⁷¹ Տե՛ս <https://armenian-assembly.org/about/>

Ամերիկայի հայկական համագումարի և Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայության այլ լոբբիստական խմբերի՝ ԱՄՆ Կոնգրեսում իրականացված ակտիվ լոբբիստական գործունեության արդյունքում Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակումը հակազդվեց առանձին օրենսդրության ամրագրմամբ, երբ ընդունվեցին Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևն ու Հումանիտար օգնության ակտը⁷²:

Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքական կյանքին մասնակցող հասարակական կազմակերպությունների շարքում են նաև Հայ Հեղափոխական դաշնակցության, Ռամկավար ազատական կուսակցության, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ԱՄՆ-ի տեղական կազմակերպությունները:

ԱՄՆ-ում գործում են նաև բազմաթիվ այլ հասարակական կազմակերպություններ, որոնք ունեն գործունեության տարբեր ուղղություններ, զբաղվում են համայնքի տարաբնույթ հարցերով: Դրանց թվում են «Ամերիկահայ թատերաերաժշտական միություն»-ը (հիմնադրվել է 1966 թվականին Լոս Անջելեսում, նպատակն է՝ ներկայացնել հայ մշակութային արժեքները և հայ արվեստագետների ստեղծագործությունները), «Ամերիկայի հայկական գրադարան և թանգարան» կազմակերպությունը (ALMA-Armenian Library and Museum of America, հիմնադրվել է 1985 թվականին Բելմոնդում), «Ամերիկահայ ուսանողների միութ-

⁷² Տե՛ս Freedom Support Act of 1992 և Humanitarian Aid Corridor Act of 1996

յուն»-ը (ASA) կրթական և բարեսիրական կազմակերպությունը (հիմնադրվել է Նյու Յորքում 1910 թվականին, նպատակն է՝ համախմբել ԱՄՆ-ի հայ մտավորականներին, դասախոսներին, ուսանողներին, նպաստել օտար ավերում կրթական գործի զարգացմանը), «Ատլանտայի հայ անկախ մշակութային միություն»-ը (հիմնադրվել է 1982 թվականին Մարիեթում (Ատլանտա), նպատակն է՝ համախմբել հայությանը, ամերիկահայ երիտասարդներին տալ հայեցի դաստիարակություն), «Արարատ-Էսքիջյան» թանգարանը հիմնվել է 1993 թվականին Լոս Անջելեսում՝ հայոց մշակութային և պատմական ժառանգությունը պահպանելու և ապագա սերունդներին փոխանցելու նպատակով: Հրատարակում է հայոց նոր պատմության վերաբերյալ աշխատություններ, Հայաստանին և հայերին վերաբերող փաստաթղթերի ժողովածուներ, քարտեզներ և այլն: Կազմակերպում է ցուցահանդեսներ, դասախոսություններ, գիտաժողովներ, «Կալիֆոռնիայի ամերիկահայ բժշկական միություն»-ը (հիմնադրվել է 1986 թվականին Լոս Անջելեսում, կազմակերպում է անվճար բժշկական սպասարկում, հեռուստածրագրեր առողջապահական հարցերի շուրջ), «Կոմիտաս ինստիտուտ»-ը հիմնադրվել է 1992 թվականին Փրինսթոնում: Հրատարակում է հայոց նոր պատմության վերաբերյալ աշխատություններ, Հայաստանին և հայերին վերաբերող փաստաթղթերի ժողովածուներ, քարտեզներ և այլն: Կազմակերպում է ցուցահանդեսներ, դասախոսություններ, գիտաժողովներ, «Հայ դրամագիտական ընկերակցություն»-ը (հիմնադրվել է 1971 թվականին Լոս Անջելե-

սում, նպատակն է՝ նպաստել հայկական դրամագիտության զարգացմանը) և այլն:

Այսօր Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը գիտակցում է, որ սփյուռքի հետ կապ չհաստատելը և վերջիններիս ծայնը լսելի չդարձնելը պատնեշ է ստեղծում պետության և քաղաքացիական հասարակության միջև⁷³: Այդ իսկ պատճառով սփյուռքի հետ հարաբերություններով զբաղվում է ԱՄՆ պետական ողջ դեպարտամենտը՝ սկսած քարտուղարությունից մինչև ազգային անվտանգության, ժողովրդավարության, հասարակական կապերի և հանրային դիվանագիտության բյուրոներ: Սփյուռքի հետ սերտ կապ ստեղծելու նպատակով ԱՄՆ պետական դեպարտամենտը ստեղծել է Global Diaspora Forum (GDF)⁷⁴ և International diaspora Engagement Alliance (IdEA)⁷⁵ ծրագրերը: Պետության և սփյուռքի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ սերտ կապի պահպանումը պետական դեպարտամենտի առաքելություններից է, այդ թվում՝ վերջիններիս ծագման երկրների քաղաքական և տնտեսական խնդիրներին և հեռանկարներին ծանոթանալը, տեղեկատվության փոխանակումը, ահաբեկչության դեմ պայքարի և այլ պետական ծրագրերի վերա-

⁷³ St' u Deborah Lee Trent, "American Diaspora Diplomacy. U.S. Foreign Policy and Lebanese Americans", Netherlands Institute of International Relations "Clingendael", The Hague, December 2012, ISSN 1569-2981 <https://www.clingendael.org/sites/default/files/pdfs/20121206_discussionpaperindiplomacy_125_trent_beveilgd.pdf>

⁷⁴ <https://www.state.gov/s/partnerships/gdf/>

⁷⁵ <http://www.diasporaalliance.org/>

բերյալ տեղեկատվության տրամադրումը: Պետությունը հիմնվում է այն գաղափարախոսության վրա, որ «Սփյուռքի վրա հիմնված քաղաքացիական հասարակությունը» կարող է ոչ միայն բարձրացնել ԱՄՆ հեղինակությունը արտերկրում, այլև դյուրացնել միջազգային հարաբերությունները⁷⁶:

⁷⁶ Տե՛ս Deborah Lee Trent, “American Diaspora Diplomacy. U.S. Foreign Policy and Lebanese Americans”, Netherlands Institute of International Relations “Clingendael”, The Hague, December 2012, ISSN 1569-2981 <https://www.clingendael.org/sites/default/files/pdfs/20121206_discussionpaperindiplomacy_125_trent_beveilgd.pdf>

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Սփյուռքի իրավական կարգավիճակի հստակեցման և համալիր բարելավման խնդիրներին առնչվող նյութի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ ոլորտում քաղաքականությունը կարող է արդյունավետ ու հեռանկարային լինել միայն այն դեպքում, երբ ներքին և արտաքին ուղղվածության իրավական, սոցիալական և զուտ քաղաքական ծրագրերը հանդես են գալիս ներքին տրամաբանական համակարգի շրջանակներում, երկրի հանրային իշխանության և ոչ պետական կառույցներն ու, հատկապես, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին գործում են փոխհամաձայնեցված ու ներդաշնակ, ընտրվում են սոցիալական տարբեր խավերին ազգապահպան գործունեության մեջ ներգրավելու խելամիտ գաղափարներ ու դրանց համապատասխան կառուցակարգեր: Ստորև հնարավորինս հակիրճ ու համակարգված կանդրադառնանք այն հիմնադրույթներին, որոնք, մեր կարծիքով, հայեցակարգային նշանակություն ունեն վերը նշված գաղափարների իրացման տեսանկյունից:

Սույն հետազոտության շրջանակներում մենք հիմնավորված ենք համարում կոնկրետ գիտագործնական հարթությամբ առաջարկություններ բովանդակող հետևյալ հայեցակարգային դիրքորոշումները՝

1. Նպատակահարմար է սփյուռքի ներգրավմամբ ազգապահպան խնդիրների համակարգված իրագործումը երաշխավորելու հստակ ծրագրային դրույթներով հուշագիր

ստորագրել ՀՀ կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև:

2. Սփյուռքի իրավական կարգավիճակի համակողմանի կարգավորման տեսանկյունից անհրաժեշտ է առնվազն այն երկրների հետ, որոնցում առկա է ազդեցիկ ու մեծաքանակ սփյուռք, կնքել ազգային համայնքներին կարգավիճակ վերապահելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու վերաբերյալ միջազգային համաձայնագրեր: Ընդ որում, նախնական փուլում կարող է և նախապատվությունը տրվել նաև հուշագրերի ստորագրմանը:

3. Մշակել «Սփյուռքի հետ կապերի քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որում կիրացվեն Սահմանադրության 19-րդ հոդվածի նորմերի դրույթները՝ առանցքում պահելով հայապահպանության առաքելությունը: Ընդ որում, մինչ այդ օրինագծի մշակումը, հարկ կլինի մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել նշված օրինագծի հիմնադրույթների վերաբերյալ համապատասխան հայեցակարգ: Նկատենք նաև, որ 2015 թ. Սահմանադրությամբ 2018 թ. գարնանը՝ Հանրապետության նորընտիր նախագահի կողմից, իր պաշտոնը ստանձնելու պահից, ուժը կկորցնի Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թ. հոկտեմբերի 22-ի «Հայկական սփյուռքի հետ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգում միասնական քաղաքականության իրականացման մասին» թիվ ՆՀ-277-Ն հրամանագիրը: Արդյունքում լրջագույն հարցադրումների առնչությամբ անխուսափելիորեն կառաջանա իրավական վակուում:

Հիշյալ օրենքում նպատակահարմար է նաև անդրադառնալ «հայկական համայնք» եզրույթի օրենսդրական բնորոշմանը՝ հիմքում դնելով սույն հետազոտությամբ և նմանաբնույթ այլ աղբյուրներում արտացոլված չափանիշները:

4. Առաջարկվում է օրենսդրական նորմերով բնորոշել սփյուռքի հետ տարվող քաղաքականությանն առնչվող եզրույթների բովանդակությունը, մասնավորապես՝ հարկ է հստակ նախատեսել «համայնք», «ազգային փոքրամասնություն», «սփյուռք» և նմանաբնույթ այլ հասկացությունների իրավական հիմքերը:

5. Նպատակահարմար է վերանայել «երկքաղաքացի» եզրույթի օրենսդրական բնորոշումը, նախատեսելով այնպիսի իրավական կարգավորում, որի պարագայում իրավական կարգավիճակի կտրվածքով միմյանցից կտարբերվեն երկքաղաքացի հանդիսացող ծագումով հայ այն օտարերկրյա քաղաքացիները, որոնք հետագայում են ձեռք բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ այն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից, որոնք երկքաղաքացիություն են ձեռք բերում որևէ օտարերկրյա քաղաքացիություն ձեռք բերելու եղանակով:

Վերը նշվածի համատեքստում առաջարկվում է հայ սփյուռքի համար անհարկի կարգավիճակային բարդություններ չստեղծելու նկատառումով, վերջիններիս վրա չտարածել «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13.1.-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված այն դրույթը, ըստ որի. «Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի

տանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի»: Այսպիսի իրավակարգավորման արդյունքում, հատկապես, սփյուռքի երիտասարդության համար ակնհայտ գրավիչ չի դառնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելը: Խնդիրն այն է, որ կրկնակի հարկումը բացառելուն միտված համապատասխան միջազգային պայմանագրերի, ինչպես նաև «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում⁷⁷ պարտադիր զորակոչի վերաբերյալ տարբերակված մոտեցումների բացակայությունը՝ նշված անձանց համար անխուսափելիորեն լրջագույն պարտավորություններ ու պարտականություններ է առաջացնում, որոնք գործնականում հանրային շահերին որևէ կերպ չեն նպաստում, սակայն անհարկի ազդում են սփյուռքի ներկայացուցիչների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու որոշման վրա:

6. Նկատի ունենալով, որ երկքաղաքացիության կարգավիճակը ազգությամբ հայ անձանց համար բազմաթիվ երկրներում ստեղծում է իրավական լրջագույն խոչընդոտներ (առանձին երկրներում չի թույլատրվում երկքաղաքացիությունը, ինչի հիմքով այդպիսի կարգավիճակ ձեռք բերածները կարող են զրկվել մշտական բնակության վայրի

⁷⁷ Ներկայումս Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել և պաշտոնական հրապարակման է հանձնվել 2017 թ. նոյեմբերի 15-ին ընդունված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, որով ևս նախատեսված են նույնական կարգավորումներ:

պետությունում որոշ անհրաժեշտ իրավունքներից), առաջարկվում է վերանայել «հատուկ կացության կարգավիճակ» շնորհելու իրավական հիմքերը: Մասնավորապես, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով նպատակահարմար է նախատեսել, որ ազգությամբ հայ քաղաքացիներին նշված կացության կարգավիճակ տրվում է անժամկետ: Ինչ վերաբերում է գործող օրենսդրությամբ նախատեսված 10 տարվա ժամկետին, ապա այն կարող է կիրառելի լինել բացառապես մյուս օտարերկրացիների պարագայում: Միաժամանակ, նպատակահարմար է ընդլայնել հատուկ կացության կարգավիճակ ունեցող անձանց իրավունքների շրջանակը:

SUMMARY

Issues related to the legal status of the Armenian Diaspora communities are interrelated both with international law and national legislation. At the same time, this is the part of social relations, which is mainly regulated by the domestic law, because each state sets a single status for its citizens and their national belonging may cause some legal consequences only in spiritual and cultural fields.

Questions related to the status of diasporal communities have gained unprecedented actuality, because the migration is tremendous nowadays around the world. Historically it all was caused by wars and other military activities but today the social and economic factors are also there. Obviously some states have strictly directed migration policies, because having stable diasporas in other countries has become politically useful.

Today diasporas have become a crucial part of a civil society for any country they are in, thus they are also a leverage and a tool of democracy.

If the right of self-determination is not solely accepted and executed in national policies, and even is used cautiously, the case of diasporas is the contrary. There is a tendency of broadening the scopes of legal regulations for the rights and freedoms for diasporas. That is why the legal examination of the issue has become so crucial. The matter is that contemporary diasporas have stopped being a merely cultural and religious entities and have gained the power of directly

affecting domestic and foreign policies. In this case public authorities inevitably accept mentioned powers and adjust accordingly.

No nation-preserving program could be effectively realized without solving the issues of diasporal status. Because of the essence of the issue, it is obviously impossible to develop unified and equally acceptable and applicable standards for this field. Hence within the scope of this paper, the approaches and conclusions are divided in two groups: the first group includes those which may have general legal significance and value, and the second one includes only those, applicable only locally.

At the same time, the whole point is to develop an approach which would lead to unification of the significant part of the criteria mentioned above. The existence of these unified standards would help to solve the essential issues of Armenian Diaspora, such as international recognition of Artsakh and its status, recognition of the Armenian Genocide and its legal consequences.

In our opinion, in addition to this, there are other contemporary national issues, such as Armenia's further development, involvement of the Armenian Diaspora in the activities of public authorities of the Republic of Armenia, the formation of a national fund assisting the talented and the needy Armenians. The more individuals and entities from Diaspora are involved, besides the Executive and Armenian Holy Church, the better for the fulfillment of the mentioned plans.

The thorough examination of the issues of improvement of the legal status of Diasporas states that the policy can be effective, only when the legal, social and political programs appear within an internal logical system, where the public authorities, non-governmental organizations and especially Armenian Apostolic Church cooperate and ideas and mechanisms of nation-preservation that involve the members of different social classes are wisely chosen.

РЕЗЮМЕ

Вопросы, относящиеся к правовому статусу общин армянской диаспоры, сопряжены как с международным правом, так и с национальным законодательством. При этом, это является тем звеном социальных отношений, которое преимущественно регулируется внутригосударственным законодательством, что обусловлено тем, что каждое государство определяет единый статус для своих граждан, и их национальная принадлежность проявляет некоторые правовые последствия лишь в духовно-культурной сфере.

Вопросы, связанные со статусом диаспоральных общин, приобрели беспрецедентную актуальность, поскольку миграция сейчас огромна во всем мире. Исторически все это бывало вызвано войнами, военными действиями или катаклизмами, но сегодня также существуют и даже главенствуют социально-экономические факторы миграции. Очевидно, что некоторые государства строго ориентированы на миграционную политику, потому что стабильные диаспоры в других странах стали политически полезными для них.

Сегодня диаспоры стали важной частью гражданского общества для любой страны, в которой они находятся, поэтому они также являются рычагом и инструментом демократии.

Если право на самоопределение не только принимается и исполняется в национальной политике, но даже ис-

пользуется с осторожностью, то в случае с диаспорами дела обстоят почти наоборот. Существует тенденция к расширению масштабов правовых норм в отношении прав и свобод для диаспор. Вот почему юридическая экспертиза вопроса стала настолько важной. Дело в том, что современные диаспоры перестали быть просто культурными и религиозными образованиями и получили возможность и право напрямую влиять на внутреннюю и внешнюю политику. В этом случае государственные органы неизбежно принимают упомянутые полномочия и соответственно корректируют их.

Никакая программа сохранения нации не может быть эффективно реализована без решения проблем диаспорского статуса. Из-за сущности проблемы, очевидно, невозможно разработать унифицированные и одинаково приемлемые и применимые стандарты для этой области. Следовательно, в рамках этой статьи подходы и выводы разделены на две группы: первая группа включает те, которые могут иметь общее юридическое значение и ценность, а вторая включает только те, которые применимы только локально.

В то же самое время весь смысл заключается в разработке подхода, который привел бы к унификации значительной части упомянутых выше критериев. Существование этих единых стандартов помогло бы решить основные проблемы армянской диаспоры, такие как международное признание Арцаха и его статуса, признание Геноцида армян и его правовых последствий.

На наш взгляд, помимо этого, существуют и другие современные национальные проблемы, такие как дальнейшее развитие Армении, вовлечение армянской диаспоры в деятельность органов государственной власти Республики Армения, формирование национального фонда, способствующего талантливым и нуждающимся армянам. Чем больше лиц и организаций из Диаспоры вовлечены, наряду с местной исполнительной властью и Армянской Святой Апостольской Церковью, тем лучше для выполнения указанных планов.

Тщательное изучение вопросов совершенствования правового статуса диаспоры показывает, что эта политика может быть эффективной только когда правовые, социальные и политические программы исходят из внутренней логической системы, где государственные органы, неправительственные организации и, особенно, армянский Апостольская церковь сотрудничают, и разумно выбираются идеи и механизмы сохранения нации, в которых участвуют члены разных социальных классов.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ի հանրաքվեով), Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը 2005 թ. խմբագրությամբ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը 2015 թ. խմբագրությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թ. հոկտեմբերի 22-ի «Հայկական սփյուռքի հետ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգում միասնական քաղաքականության իրականացման մասին» թիվ ՆՀ-277-Ն հրամանագիրը:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի (հավելված) «Սփյուռքի մասնագետների, կառավարիչների և նրանց կազմակերպությունների հետ երկկողմ համագործակցությունը խորացնելու վերաբերյալ 2017-2021 թվականների ծրագրին հավանություն տալու մասին» N 25 արձանագրային որոշումը:
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 23-ի «Պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին» N 717-Ն որոշումը:
5. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության և Կիպրոսի Հանրապետության հումանիտար և արտերկրյա հարցերով նախագահի հանձնակատարի գրասենյակի միջև սփյուռքի հարցերի շուրջ համագործակցության վերաբերյալ 2017 թվականի հունիսի 19-ի

փոխըմբռնման հուշագիրը:

6. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության և Երկրապահ կամավորականների միության (ԵԿՄ) ՀԿ միջև 2015 թվականի դեկտեմբերի 18-ի համագործակցության հուշագիրը:
7. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության և Հայ օգնության միության (ՀՕՄ) միջև 2015 թվականի հոկտեմբերի 4-ի համագործակցության հուշագիրը:
8. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության և Հայ մարմնակրթական ընդհանուր միության միջև 2014 թվականի օգոստոսի 2-ի համագործակցության հուշագիրը:
9. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության և «Համաշխարհային Հայկական Կոնգրեսի», «Ռուսաստանի հայերի միության» միջև համագործակցության 2014 թվականի ապրիլի 14-ի հուշագիրը:
10. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության և Պարենի համաշխարհային ծրագրի միջև 2013 թվականի նոյեմբերի 15-ի համաձայնագիրը:
11. «Электронная Россия (2002–2010 годы)», Утверждена постановлением Правительства Российской Федерации от 28 января 2002 г. № 65.
12. Association Loi 1901, <https://www.legifrance.gouv.fr/affichTexte.do?cidTexte=LEGITEXT000006069570&dateTexte=20090506>

Մենագրություններ, հոդվածներ և մամուլի նյութեր

13. Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները, **Աննա Ժամկոչյան**. - Եր.: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2011. - 184 էջ:
14. Հայկական սփյուռք: Տարեգիրք / ՀՀ սփյուռքի նախարարություն: Հեղ. խմբի ղեկավար՝ **Հրանուշ Հակոբյան** և այլք. / «Աստղիկ» գրատուն, 2016. - 552 էջ:
15. **Բարխուդարյան Վ. Բ., Ալեքսանյան Հ. Ս.**, Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն (Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա), Երևան, Պատմության ինստիտուտ, 2015, 441 էջ:
16. Հայրենադարձների փորձն ու ինտեգրումը Հայաստանում. խոչընդոտներ և հնարավորություններ, **Վարդան Մարաշյան, Նարե Գալստյան, Իրենա Գրիգորյան**, Երևան – 2014, 134 էջ:
17. Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2014. - 152 էջ:
18. Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2014. - 182 էջ:
19. Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2013. - 200 էջ:
20. **Խառատյան-Առաքելյան Հ.**, Հայ ժողովրդական տոները: /. - Եր., «Զանգակ-97», 2005. - 360 էջ:
21. Հայ եկեղեցի. նվիրապետական աթոռներ, թեմեր / Խմբագրական հանձնաժողով՝ **Հ. Մ. Այվազյան, (նախագահ), Ա. Հ. Սարգսյան, Ա. Ս. Ղազարյան, Մ. արք.**

- Աշճյան.** – Եր.: Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբ., 2001. – 220 էջ:
22. **Տիգրան Ղանալանյան,** Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին / Տ.Ղանալանյան. – Եր.: «Նորավանք», 2016. – 164 էջ:
 23. Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), **Ղալալյան Կ. Լ.**, Երևան, Զանգակ-97, 2004 թ.:
 24. **Аствацатурова М. А.**, Диаспоры в Российской Федерации: формирование и управление (Северо-Кавказский регион), Ростов на Дону, Пятигорск, 2002.
 25. Армяне Юга России: опыт социологического населения / отв. ред. **Ю. Г. Волков.** Ростов на Дону, М., 2011.
 26. **Бедрук А. В., Дьяченко А. Н.**, Ведомственный национализм в современном российском обществе: этнократия или мигрантофобия? // Гуманитарий Юга России, 2015, № 4.
 27. **Блищенко И. П., Абашидзе А. Х.**, О Законе РФ «О национально-культурной автономии» как об одной из форм национально-культурного самоопределения народов России // Вестник РУДН. Сер. Юридические науки. 1997. № 2. С. 8.
 28. **Губогло М. Н.**, Национально-культурная автономия как форма разгосударствлённого самоопределения // О реализации Федерального закона РФ «О национально-культурной автономии». Оренбург, 2006. С. 17.
 29. **Дегтярев К. Г., Черноус В. В.**, Права человека и «сепаратистские» требования мультикультуризма // Государственное и муниципальное управление. Ученые за-

писки СКАГС, 2014, № 4.

30. **Дмитриев А. В., Пядухов Г. А.**, Социально-пространственный дискурс конфликтогенности внешней трудовой миграции // Региональная социология: проблемы консолидации социального пространства России / отв. ред. В. В. Маркин. М.: Новый Хронограф, 2015. – с. 347–378.
31. **Зарипов А. Х.**, Развитие национально-этнических организаций как направление этнонациональной политики РФ (на примере Республики Татарстан), с. 72-75, <https://outlook.live.com/owa/?path=/attachmentlightbox>.
32. **Залитайло И. В.**, Природа этнонациональных и диаспоральных образований, Аналитика Культурологии. – 2009, № 13, с. 194-200.
33. **Ильина А. А.**, Национально-культурные объединения современной России: нормативно-правовые основы деятельности и этапы формирования // Культурологические исследования в Сибири. – 2012, № 4. – с. 14-20.
34. Мониторинг правового регулирования статуса диаспоры и землячества (экспертное мнение), **Дмитриев А. В.** и **Роговая А. В.** (<https://outlook.live.com/owa/path=/attachmentlightbox>).
35. **Калинина К. В.**, Национальное согласие лезгинского народа: матер. круглого стола // Этнополис. 1995. № 1. С. 13.
36. **Кочеткова Л. Ю.**, Транснациональная миграция: понятие, условия развития и последствия, журнал “Геогра-

- фический вестник”, 2 (25), 2013, <https://cyberleninka.ru/article/n/transnatsionalnaya-migratsiya-ponyatie-usloviya-razvitiya-i-posledstviya>
37. **Крылов Б. С.**, Комментарий к Федеральному закону «О национально-культурной автономии». М., 1997. С. 8.
 38. **Полоскова Т.**, Современные диаспоры: внутривнутриполитические и международные аспекты. М.: Научная книга, 2002. 284 с.
 39. **Пядухов Г. А.**, Диаспоры и социальные практики субъектов услуг в сфере трудовой миграции: региональный аспект // Демоскоп, № 533–534, 2012. 387 с.
 40. **Рыбаковский Л. Л.**, Миграция населения (вопросы теории), М., 2003.
 41. **Фурдык Т.**, Диаспора в современном государстве: статус, динамика и взаимодействие.
 42. (<http://www.legeasiviata.in.ua/archive/2014/12-3/37.pdf>).
 43. **Фоканов Ю. В.**, Диаспора: к вопросу о концептуализации о понятия в условиях глобализации // Ю. В. Фоканов // Известия РГПУ им. А. И. Герцена, 2008, № 64, с. 284-289.
 44. **Смирнова Т. М.**, Национально-культурная автономия: теория, практика и тенденции // Социальные проблемы: научно-практический журнал. 2008. № 2. С. 34.
 45. **Тишков В. А.**, Закон принят – дело за его реализацией // Национально-культурная автономия: проблемы и суждения: матер. заседаний круглого стола. М., 1998. С. 14.
 46. **Хабриева Т. Я.**, Национально-культурная автономия:

- современные проблемы правового регулирования // Журнал российского права. 2002. № 2. С. 11.
47. **Максимова О. Н.**, Федеральный закон «О национально-культурной автономии» в правовом поле этнонациональной политики, (file:///C:/User4/-politiki%20(2).pdf).
 48. **Осипов А. Г.**, Национально-культурная автономия. Иден. решения, инструменты. ЦПб., 2004.
 49. Об утверждении Концепции государственной национальной политики Республики Татарстан: Указ Президента Республики Татарстан №УП-312 от 03.07.2008 // Республика Татарстан: Приложение. - 2008. - № 135 (26252).
 50. Социально-политические и этнические процессы на юге России, **А. В. Бедрик, Д. Н. Стукалова, А. А., Терещенко**, «Антропоток и этнические диаспоры», 2017, <https://cyberleninka.ru>.
 51. **Хабриева Т. Я.**, Национально-культурная автономия в Российской Федерации. М., 2003.
 52. **Allamong Jacob Kathryn**, "King of the Lobby", The Johns Hopkins University Press, 2010
 53. **Ambrosio Thomas**, "Ethnic Identity Groups and U.S. Foreign Policy", Printed in the United States of America, 2002.
 54. Armenian Diasporas and Armenia: Issues of Identity and Mobilization, An interview with **Khachig Tölölyan**, < <https://eac.revues.org/565>>
 55. **Bloodgood, Elizabeth A., Tremblay-Boire Joannie, Prakash Aseem**, "National Styles of NGO Regulation",

- Nonprofit and Voluntary Sector Quarterly, 2014, Vol. 43(4)
716-736
56. **Burger A., Dekker P.**, The Non-Profit Sector in the Netherlands, Working Paper, Sociaal en Cultureel Planbureau, Den Haag, April 2001
 57. **DeWind, Josh and Segura, Renata**, Diaspora-Government Relations in Forging US Foreign Policies, <https://nyupress.org/webchapters/DeWind_intro.pdf>
 58. **Gevorkyan, Aleksandr V. and Arkady V. Gevorkyan.** 2010. Factoring Turbulence Out: Diaspora Regulatory Mechanism and Migration Development Bank. *International Migration* 50 (1): 96-112.
 59. **Gevorkyan, Aleksandr V. and Otaviano Canuto.** 2015. Toward a Migration Development Bank for Transition Economies. Huffington Post, June 2, 2015
 60. **Heleniak, Tim.** 2013. Diasporas and Development in Post-Communist Eurasia. *Migration Information Source*, June 28, 2013
 61. **Lee Trent, Deborah**, “American Diaspora Diplomacy. U.S. Foreign Policy and Lebanese Americans”, Netherlands Institute of International Relations “Clingendael”, The Hague, December 2012, ISSN 1569-2981.
https://www.clingendael.org/sites/default/files/pdfs/201212_06_discussionpaperindiplomacy_125_trent_beveiligd.pdf
 62. **Newland, Kathleen and Erin, Patrick.** 2004. *Beyond Remittances: The Role of Diaspora in Poverty Reduction in their Countries of Origin*. Washington, D.C.: Migration

Policy Institute.

63. **Tsagarousianou, Roza.** 2004. Rethinking the Concept of Diaspora: Mobility, Connectivity and Communication in a Globalised World. *Westminster Papers in Communication and Culture* 1 (1): 52–66.

Էլեկտրոնային կայքեր

1. <https://anca.org/about-anca/profile/>
2. <https://armenian-assembly.org/about/>
3. https://digital-society-forum.orange.com/en/les-forums/139-les_e-diaspora__exister_en_ligne
4. <http://www.e-diasporas.fr>
5. http://www.undp.org/content/undp/en/home/ourwork/democraticgovernance/focus_areas/focus_access_information/_jcr_content/contentPar/
6. <http://www.itn-cohab.eu/wiki/digital-diaspora>
7. <http://www.agbu.am>
8. <http://www.ccaf.info/>
9. <http://www.journal-officiel.gouv.fr/>
10. <http://www.cea.urssaf.fr/ceawebinfo/cms/index.html>
11. <https://www.angloinfo.com/how-to/france/working/starting-a-business/non-profit-associations>
12. <http://www.abovian.nl/wp-content/uploads/2012/11/20010920ArmiansInNL.pdf>
13. <http://www.bridgewest.eu/article/register-non-profit-organization-netherlands>
14. <http://www.unionearmeni.it/statuto/>
15. <https://uk.practicallaw.thomsonreuters.com/7-633->

2622?transitionType=Default&contextData=(sc.Default)&firstPage=true&bhcp=1

16. <https://www.twobirds.com/en/news/articles/2014/global/tax/oct-14/netherlands-tax>
17. <http://italy.mfa.am/hy/community-overview-it/>

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Սփյուռքի հայ համայնքների իրավական կարգավիճակը
(ԵՄ, ԱՄՆ, ԱՊՀ երկրներ)**

**The Legal Status of Armenian Diasporal Communities
(EU, USA and CIS countries)**

**Правовой статус общин армянской диаспоры
(ЕС, США и страны СНГ)**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 01.12.2017:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մանուկը՝ 9.375:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am